թյամբ տեխնիկապես-անտեսապես ավելի պակաս զարդացած վիճակ ու-
նի։ Այդ հարցը, վորը մշակվում եր կենինի կողմից դեռ մինչև Հոկտեմ-
բերը, առանձնահատուկ սրությամբ կանգնեց կուսակցության և պրո-
լետարիատի առջև իշխանությունը գրավելուց հետո—պատասխանելու
համար այդ հարցին, անհարժեշտ և-ամենից առաջ կանդ առնել Հոկ-
տեմբերյան հեղափոխության բնույթի, սոցիալ-տնտեսական նա-
խադրյաների և նրա զարդացման հետանկարների վրա :

Հեղափոխության բնույթի և հեռանկարների բնորոշումն ամենից ա-
ռաջ, կապված ե նրա սոցիալ-անտեսական բազայի, նրա շարժիչ ուժերի
գնահատության հետ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթանակեց
վորովն պրոլետարական, սոցիալիտական հեղափոխություն։ Պրոլե-
տարիատն իշխանությունը գրավեց և իր դիկտատուրան հաստատեց նրա
համար, վորպեսզի կառուցի սոցիալիտական հասարակություն։ Հոկ-
տեմբերի կարևորագույն առանձնահատկություններից մեկը, վորը մշտ-
նում և պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական գծերի բնորոշման
մեջ, հանդիսանում է պրոլետարիատի և դյուլացիության աշխատավո-
րական մստաների դաշնքը՝ բանվոր դասակարգի զեկավարությունը ։

Ընկ. Լենինը բազմիցս ընդգծել է, վոր մեզ հարկավոր ե վոչ ամեն առևսակի դաշինք գյուղացիության հետ, այլ միայն այնպիսի դաշինք, վորը տանում է գեպի պրոլետարիատի գիլտատուրայի ամրապնդումը, գասակարգերի վաչչացումը, սոցիալիստական հասարակության կառուցումը:

Հեղափոխության բովանդակության և շարժիչ ուժերի վոչ ճիշտ գնահատությունը, պրոլետարիատի հեղափոխական դերի թերազնահատությունը (տրոցկիզմ, աջ ուղղատունիզմ), պրոլետարիատի գիլտատուրայի ժամանակ գյուղացիության սոցիալիստական վերամշակման հնարավորության բացասումը (տրոցկիզմ), կապիտալիզմի դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտության և մանր-ապրանքային արտադրության ապրանքային-կամացիստական տենդենցիների հաղթահարման բացասումը (աջեր) և այլն—անխուսափելիորեն տանում են գեպի սպորտունիզմ, մենչեւիզմ, սոցիալիստական շինարարության հնարավորությունների և հեռանկարների գնահատության խնդրում, դեպի հակալենինյան դրույթները, մեր շինարարության բոլոր արմատական հարցերի վերաբերյալ:

Սոցիալ ֆաշիստները և բուրժուական վնասարարները Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի մասին: Բոլոր յերկրների սոցիալ-գավաճանները—Կառուցկի, Պլեխանով, Բառեր, Ֆինն-Յեննոտեևսկի, Սուխանով և այլն, փորձում ելին հերքել մեր հեղափոխության լենինյան բնորոշումը վորպես սոցիալիստական հեղափոխության, և ջանք ելին թափում ապացուցել, վոր Ռուսաստանում կատարվում ե, թեև յուրահատուկ ձեերով, իսկական բուրժուական հեղափոխություն: Նրանք այդ թեզը փորձում ելին հիմնավորել առկօչելով Մարքսին և Ենգելսին: Աղավաղելով Մարքսի ուսմունքը, զգեստավորելով Մարքսին մենչեւիլյան հանդերձանքով, նրանք հակաղքում ելին Մարքսին—Լենինին, հակադրում ելին Մարքսիզմը—լենինիզմին:

Մարքսը «Քաղաքատնտեսության քննադատության առթիվ» դրքի հառաջարանում դրել ե, վոր «նոր բարձրագույն արտադրական հարաբերությունները վոչ մի ժամանակ լույս աշխարհ չեն դալիս մինչեւ նրանց գոյության նյութական պայմանների հասունացումը հին հասարակության ծոցում»: Այդ մարքսյան դրույթն անվիճելիորեն ճիշտ ե, սակայն բավական չե դիտենալ այն, այլ անհրաժեշտ ե նաև նրա ճիշտ հեղափոխական ըմբռնումը և բուրժուազիայի ու պրոլետարիատի պայքարի պատմական կոնկրետ պայմանների նկատմամբ կիրառելու կարողություն: Մէծ դիալեկտիկ լենինը, քննադատելով մենչեւիլյաները, պնդումները, («Ռուսաստանը չի հասել արտադրողական ուժերի զարգացման այնպիսի բարձրության, վորի ժամանակ հնարավոր լինի սոցիալիզմը»), իբրեն հատուկ հեղափոխական համարձակությամբ ընդգծել ե, վոր թեև

այդ գրութիւն անոիինելի յե,—սակայն նա վճռական չեմ հեղափոխության համարք,^{*)} և վոր վոչ մի տեղ, վոչ մի զրցույկում չի դրված, թե ինչպիսի որինակ մակարդակ և հարգավոր սոցիալիզմի համարը : Լենինի այդ պնդումների մեջ իր ամբողջ ուժով հանդես և դալիս դիմութիւնների մեջուղը վորպես հակադրություն մենշևիկների մեխանիստական ըստեսական մատերիալիզմի, վորոնք հասարակական վարդաշան պրոցեսում ակտիվ դերը վերապահում են միայն արտադրական ուժերին, իսկ արտադրական հարաբերությունները դիտում են վորպես պասսիվ մոմենտ, վորպես արտադրական ուժերի զարդացման սոսկական հետեւանք : Լենինի բոլոր աշխատություններում —ամենուրեք անդադար ընդդժվում և նոր արտադրական հարաբերությունների և պրոլետարական դիկտատորայի տնտեսական հաղթականության խոշորագույն դերն արտադրողական ուժերի զարգացման գործում :

Մենքնեիները պնդում են, վոր սոցիալիզմի հաղթանակի համար մուտքանում անհրաժեշտ կուլտուրական մակարդակը չկա: Ի հակադրություն մենշևիկների, լենինը ցույց տվեց, վոր մենք կարող ենք սկսել քաղաքակարթության այնպիսի նախադրյալների նվաճումից, ինչպիսին կալվածատերերի և բուրժուազիայի արտաքումն եւ ապա արգենտինել հասնել մյուս ժողովուրդներին: Հակառակ մենշևիկների մասնաւոր առողջապահության և քաղաքացիական պատերազմների հետեւանքով այլ և այլ հետամնացության և քայլքայման հաղթահարման հեղափոխական ուղիները: Լենինը ցույց տվեց միակ յելքը համեմատական հետամնացությունն ու արտադրողական ուժերի քայլքայմը, իմաստիսական և քաղաքացիական պատերազմների հետեւանքով: Մարտական լենինիզմին խորթ և ավանդուրիզմը, լենինիզմը հաշվի յե առնում սոցիալիստական լինարարության բոլոր դժվարություններն ու լենինի կողմից պրոլետարիատի առաջ դրված խնդիրները բազմակողմանիորեն հիմնավորվել են Մարքս-Ենգելսի ուսումնաքի ճիշտ կիրառմամբ և վերջինիս հետագա վարդացմամբ՝ համապատասխան համաշխարհային ամբողջ հեղափոխական շարժման նոր փուլի և մեր յերկրում զասակարգացյալն պայքարի կոնկրետ փորձի: Լենինը պայքարելով մենշևիկների և ոստրուտունիստների դեմ—մենշանական «սոցիալիզմի» պաշտպանների դեմ—և ապացուցելով սոցիալիստական հեղափոխության նախադրյալների գոյաքյաւը մեր յերկրում՝ միաժամանակ մատնանշել և կուլտուրական և տեխնիկական ուղիները, մանր-ապրանքային արտադրության վերակառության և խոշոր սոցիալիստականի վերափոխելու ուղիները: Յեզ դեռ մինչև Հոկտեմբերը լենինը ձեւակերպում, իսկ հետո խորացնում ու զարդացնում և

*) Собр. соч. т. XXIII, «О нашей революции».

առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկո-տնտեսական և կուլտուրական տեսակետից հասնել և անցնելու մեծագույն խնդիրը:

Մենքիները միայն կոպիտ կերպով խեղաթյուրելով Մարքսի ուսումունքը և դասակարգերի սրբարքի ժամանակակից դրությունն ու ստուխալիզմին անցնելու պայմանները հասկանալու լիակատար անընդունակություն հանդիս բերելով, կարողացել են պնդել, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը սոցիալիստական չե, այլ բուրժուական: Չնայած յերանդների վորոշ տարրերության՝ սոցիալ-ֆաշիստների պարտգլուխների բոլոր տեսակետները խփում են մի կետի և կարող են հանդել հետեւյալին. Ռուսաստանն այնպիսի յերկիրե, ուր սոցիալիզմի շինարարության համար անհրաժեշտ նյութական և կուլտուրական մակարդակ գոյություն չունի: Դասակարգային ուժերի փոխհարաբերությունը յերկրում հոգուտ պրոլետարիատի չե, վերջինս յերկրի աղդաբնակչության մեջ փոքրամասնություն և կազմում և գեռ չի հասունացել սոցիալիստական հեղափոխության համար: Մոնոպոլիստների զարգացումը Բուսաստանում, վորպես կապիտալիզմի հասունացման ցուցանիշ, մենցիները կամ բացասում եյին և կամ անբավարար համարում: Վորքած վոր յերկրի բնակչության մեջ գյուղացիությունը թվական տեսակետից գերակռում ե, նա յել վորոշում և Հոկտեմբերյան հեղափոխության բնույթը: Գյուղացիական հեղափոխությունը, վոչնչացնելով Փեոդալիզմը, դրանով արձակում և ուժերը կապիտալիզմի զարգացման համար: Այստեղից յեղակացություն—Ռուսաստանում սոցիալիզմի շինարարության համար նախադրյալներ չկան. հեղափոխությունը բուրժուական և Ի պահպանում և կապիտալիստական հասարակարգի բոլոր հիմունքները:

Եթեն Կառուցկին և մյուս սոցիալ-ֆաշիստները գուրս են գալիս սուլդակի «ապացույցներով», վոր մեր յերկրում հեղափոխությունը՝ բուրժուական բնույթը ունի, և բացահայտողեն պրոպագանդա յին մղում ԱՍՀՄ-ի դեմ, ապա «ձախ» Ուստո Բառելը, թագնված ձախ Փրազների տակ, նույն և ապացուցում: Նա նույնիսկ խոստովանում ե, վոր մեզանությունների ամրացնել և վորպես բանվոր դասակարգի դիկտատուրա: Սակայն դա, Բառերի կարծիքով, յուրահասյուն գիկտատուրա յիշայլելով դիկտատուրա և պրոլետարական փոքրամասնության դիկտատուրա գյուղացիության վրա և այդ գիկտատուրան պայմանափորված և վերջինս անկուլտուրականությամբ. — Խորհրդային իշխանությունը բարձրացնելով գյուղացիության կուլտուրական մակարդակը զլոնով խսկ խորտակում ե իր գիկտատուրայի հիմքերը: Բառերը խոստովանում ե, վոր բուրժուական հեղափոխության խնդիրները Ռուսաստանում կարող եյին հետեւղականորեն լուծվել վոչ թե կապիտալիստների, այլ իշխանությունը գրաված բանվորների և գյուղացիների կող-

Քից : Սակայն Բառուերն այդ գրությունը չի հասկանում այն մտքով, զոր պրոլետարիատն այդ խնդիրները լուծում ե և կարող ե լուծել միայն սոցիալիստական հեղափոխության պարմաններում։ Բայ Բառուերի պրոլետարիատի ամբողջ դերը հեղափոխության մեջ հանդում ե միայն նրան, վորապես ի հետեւղականորեն ավարտի բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը, —կարողանա վոչչացնել ցարիզմը, կալվածատիրական հողատիրությունը, լուծել ազգարային հարցը։ Յերբ իրականացվի ազգարային հեղափոխությունը, յերբ դյուզացիությունը հողատանա և կուլտուրալիստ ու քաղաքականապես հասունանա, նա կտապալի պրոլետարիատի դիկտատուրան և իշխանության դլախը կհանի քուրժուաղիային։ Այն ժամանակ, ըստ Բառուերի, հասարակակարգը հետեւալ բնույթը կստանա—պետական սոցիալիզմ-արդյունաբերության մեջ, տրանսպորտում և բանհային գործում, առեւտի կոռուպտատիվային կաղմակերպություն, դյուզացիական անհատական տնաեսություն, նոր քուրժուաղիա և արտասահմանյան կոնցեսիաներ։ Այսպիսով պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում այդ «ձախ» սոցիալ-Փաշիստի և պրոլետարիատի ամենավտանգավոր թշնամու ուսմունքի մեջ—հանդիսանում և վարպես անցման վուլ դեպի «Գյուղացիական», բուրժուական գեմոկրատիա և, հետեւարար, Հոկտեմբերյան հեղափոխության մեջ վոչինչ սոցիալիստական չկա:

Մենչեւ մեջ, վորպես քուրժուաղիայի գործակալություն բանվոր դասակարգի մեջ, անզայման հետեւղական են։ Ինչպես բանվորական շարժման գործնական հարցերում առանձին կատարած լիստական յերկրների մեջ, նույնազես և միջազգային հեղափոխության հիմնական հարցերում, նրանք հանդես են գալիս վորպես բուրժուաղիայի կողմն անցած—պրոլետարական շարժման զավաճաններ։ Եթե ժամանակակից համաշխարհյան զարգացման հիմնական հարցում՝ իրենց վերաբերմունքի խնդրում հանդեպ ԽՍՀՄ-ը՝ «Արդյունաբերական կուսակցության», «Տորդուրոմի» վնասարարների ու ինտերվենտների և ֆրանսիական պալմոր շտաբի հետ—միևնույն շարքերում են ընթանում։

Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի մենչեւիկյան դնահատությունն ամբողջ լությամբ ընդունվում է բռլոր վնասարարների—Ռամզլինի, Կոնդրատիևի և ուրիշների կողմէց։ Գործնական վնասարարական աշխատանքում ամենասուերու գործակցությունն կարենարդյունաբերական կուսակցության» և մենչեւիկյան՝ Սուխանովի, Ֆինն-Յենոստայսկու, Ռուբինի և մյուսների միջև։ Կապիտալիստական ոհատավրատորների համերաշխությունը—Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի մենչեւիկյան դնահատության խնդրում ամենից ցայտուն կերպով 1918 թ. արտահայտել ե այժմյան վնասարարների նախահայր Գրիննելցիկին, վորը գրել է . . . «Համանական ե, վոր պատմության վոչ մի ժամանակաշրջա-

նում սոցիալիստական դրոշն այնքան բացահայտորեն չի քողարկել բուրժուական բովանդակություն, ինչպես մեր հեղափոխության մեջ: Հեղափոխության ամբողջ ընթացքը կարճ կարելի յե բնորոշել մի Փորմուլա-յով-սոցիալիստմին՝ ձեւ՝ բորժուականությանը՝ եյություն և յերեսութենքի նման բովանդակությունը կարելի յե վեր հանել ըստ արտաքինի «սոցիալիստական» ակտերում և դործողություններում . . . »*). Դրինից վեցին հույս ուներ, վոր հողային հարցն, ինչպես ել վոր լուծվի, վերը վին հաշվով «հողն անցնելու յե տնտեսարար մուժիկի ամուր ձեռքը**):

Այստեղ բուրժուական ուստավքատորներն ու մենչեւիներն ամբողջությամբ միաբան են. թե սրանք և թե մյուսները յենում եյին դյուզի կապիտալիստական զարգացման դրույթից: Թե՛ մեկը և թե՛ մյուսները սահմանափակում են պրոլետարիատի խնդիրները բուրժուա-դեմոկրատական ուժփորմների կիրարկմամբ: Յեկ թե մեկի և թե մյուսների յառ հոկտեմբերյան հեղափոխության բնույթի մասին տեսական դատությունները վոչ այլ ինչ են, բայց յեթե վոչ կապիտալիստական ուստավքացիայի ծրագրի հիմնավորումը Կոնդրատեվ-Ռամզինի վոդով՝ Այն պնդումից, վոր հոկտեմբերյան հեղափոխությունը սոցիալիստական գոչինչ չի պարունակում իր մեջ, մենչեւիները և նրանց դաշնակիցները բուրժուական ուստավքատորների բանակից, հետազորում՝ յերը հեղափոխությունն ամբապնդվեց, անցան այն թեղի հիմնավորմանը, վոր միենույն ե, վաղ թե ուշ սկսվելու յե Խորհրդային իշխանության վերասերումը և յերկրի կառավարչությունն անցնելու յե կապիտալիստական տարրերի ձեռքը: Իսկ յերը սոցիալիստական շինարարության հաղթական ընթացքը ջարդ ու փշուր արավ և այդ «զրոգնողները», այն ժամանակ այդ ամբողջ վոհմակը կանգնեց ուղղակի վնասարարության և հԱՀՄ-ի դեմ ինտերվենցիայի ուժքին պատրաստության անմիջական ուղու վրա:

Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալ-տնտեսական նախադրյալները: —Մենչեւիները ժխտում եյին ներքին սոցիալ-տնտեսական նախադրյալների գոյությունը նույսաստանում պրոլետարական հեղափոխության համար: Իսկ ի՞նչպես եյին լենինի և մեր կուսակցության կողմից հերքում նման պնդումները:

Քննադատելով մենչեւիկյան փաստարկումները, այն մասին, վոր ամենից առաջ հեղափոխությունը պետք է սկսվի այն յերկրում, ուր արդյունաբերությունն ամենից ավելի յե զարգացած և ուր յերկրի բնակչության մեջ պրոլետարիատի տեսակարար կշիռն ամենից ավելի բարձր է, ընկ. Ստալինը զբել ե. —«կապիտալի Փրոնտը ճեղքվում և այնտեղ, ուր իմակերիալիզմի շլթան ավելի թույլ ե. . . ըստ վորում, կարող և պա-

*.) Гриневеуки—«Перспективы послевоенной русской промышленности».

**) Նոյն տեղ, եջ 32:

տահել, վոր հեղափոխություն սկսած, կապիտալի ֆրոնտը ճեղքած յերկեր կապիտալիստական տեսակետից ավելի պակաս զարգացած լինել քան մյուս ավելի զարդացած յերկրները, վորոնք զեռ զանվում են կապիտալիզմի շրջանակներում» *) . դա չի—նշանակում, ինչպես կարծում եր Բուխարինը, —վոր այն յերկիրը, ուր տեղի յէ ունենում իմպերիալիստական շղթայի ճեղքումը ժողովրդատնտեսական տեսակետից պետք և ամենաթույլը լինի: Իմպերիալիստական շղթայի թուլությունը տվյալ տերկրում վորոշվում և արդյունաբերության զարգացման և կուտուրական վորոշ մինիմումի տոկայությամբ, պրոլետարիատի վորոշ մինիմումով, պրոլետարիատի և նրա ավանդարդի հեղափոխականության մինիմումով և պրոլետարիատի հանձինս գյուղացիության ունեցած կայուն դաշնակցի, առկայությամբ:

Համաշխարհային իմպերիալիստական շղթայում ոռւսական կապիտալիզմը թույլ ողակ եր, Ռուսաստանում պրոլետարական հեղափոխությունը կատարվեց առաջ, քան ավելի զարդացած յերկրներում, ինչպես որինտկ ՀԱՄՆ, Անդրիա, Գերմանիա: Ռուսական կապիտալիզմը չդիմացավ որպես կամ լարվածությանը, բուրժուազիան ավելի թույլ դուրս լեկաց հեղափոխական մարտերում կոփված պրոլետարիատի և նրա կողմից զեկավարած գյուղացիության միացյալ ուժերի հանդեպ: Պրեկառարիատը, չնորհիվ փորձված և կայուն բայց կեկլյան կուսակցության տոկայությանը կարողացավ ճիշտ զեկավարել գյուղացիությանը, հաջող կերպով լուծել կապիտալիստների և կալվածատերերի իշխանության տապալման խնդիրը և ամրացնել իր դիկտատուրան: Իմպերիալիզմի ուժան պատուից Ռուսաստանում նրա համար, վորովհետեւ այստեղ՝ «ժողովրդից միծալույն» ժողովրդական հեղափոխություն, վորին ոլիսավորում և հեղափոխական պրոլետարիատը, ունենալով այնպիսի դաշնակցից, վորպիրին կալվածատերերի կողմից հարստահարված ու շահադորձված բարձրացման գյուղացիությունն եր», ինչպես նաև այն պատճենով վորովհետեւ: Հեղափոխության դեմ կանգնած եր իմպերիալիզմի այնպիսի զեղութիւն ներկայացնեցիչ, վորպիրին ամեն տեսակի բարոյական կըսից զրկված և բնակչության ընդհանուր ատելության արժանի՝ ցարիզմն եր**) :

Ներկայացնելով համաշխարհային իմպերիալիզմի շղթայում թույլ ողակը ոռւսական կապիտալիզմը, ուակայն, արգեն հասել եր պրոլետարազման հեղափոխության և սոցիալիզմի շինարարության համար բավարար հասունացման վորոշ աստիճանի: Հոկտեմբերյան հեղափոխության անհամաժամանակ պարզ առաջանակ է գյուղացիության առաջանակ՝ ցարիզմն՝

*) Սաալին—«Լենինիզմի հարցերը», հայերեն հրատ., էջ 30—31.

**) Նույն աեղ, էջ 31.

շով և մասսաների սովահար հուսահառությամբ, այլ սոցիալիզմի շինարարության, ինչպես արտաքին, նույնպես և ներքին սոցիալ-անտեսական նախադրյաների վերլուծմամբ։ Լենինն ի՞նչպիսի նախադրյաներ և նշել Հոկտեմբերյան հեղափոխության համար մոռասատանում։ Կապիտալիզմի մոնոպոլիստական և պետական-անոպոլիստական ստադիային հասնելը՝ Լենինը համարում և սոցիալիստական-հեղափոխության կարեռագործույն տնտեսական նախադրյալը։ Մոնոպոլիսան կապիտալիզմի սահմաններում հնարավոր արդարության հանրայնեցման ամենաբարձր ձևն է։ Մոնոպոլիստական և որետական կապիտալիստական աստիճանն անմիջապես նախորդում և սոցիալիզմին։ «Իմպերիալիստական պատերազմը սոցիալիստական հեղափոխության նախորդն է. և դա վոչ թե միայն նրա համար, վոր պատերազմն իր սարսափներով ծնում ե պրոլետարական ապստամբություն, վոչ մի ապստամբություն սոցիալիզմ չի ստեղծում, յեթե նա տնտեսագես չի հասունացել, այլ այն պատճառով, վոր պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիզմի լիակատար նյութական նախապատրաստությունն է, նրա նախադրուուր. դա պատճմության սանդուխքի այն աստիճանն է, վորի և սոցիալիզմ կոչվող աստիճանի մեջ վոչ մի այլ միջանկյալ աստիճան չկա»^{*)})։

Պրոլետարական հեղափոխության համար որյեկտիվ սպայմանների առաջառության կամ բացակայության մասին առանձին յերկրներում չի կառելի դատել միայն այդ յերկրների տվյալների հիման վրա, անհրաժեշտ և նկատի առնել հեղափոխության որյեկտիվ պայմանների առկայությունը համաշխարհային իմպերիալիստական անտեսության ամբողջ սիստեմում՝ վորպես ամբողջություն վերցրած։ Կոմիտերնի ծրագիրը նշում է, վոր «կապիտալիստական հասարակության ներսում արդեն հասունացել են սոցիալիզմի նյութական նախադրյաները»։ Համաշխարհային իմպերիալիզմի, ամբողջությամբ վերցրած, այդ հասունացումը հանդիսացել է կարևորագույն նյութական նախադրյաներից մեկը պրոլետարական հեղափոխության համար մոռասատանում։ Սակայն Լենինի վերևում բերված գրույթը խոսում է մոռասատանում հեղափոխության նախադրյալ-ների առկայության մասին վոչ միայն ամբողջ կապիտալիստական համաշխարհային տնտեսության հասունացման իմաստով։ Լենինի մոռասափում է նաև ներքին նախադրյաների առկայության մասին պրոլետարական հեղափոխության համար մոռասատանում։ Դա յերեսում է նրանից, վոր նույն հոդվածում լենինը, մատնանշելով մոնոպոլիստական կազմակերպությունների զարգացումը մոռասատանում («պրոդամետ», «պրոդուկտոյլ» շաքարի սինդիկատներ), գրում է, վոր «մոռ-

^{*)} Լենին, Собр. соч. т. XIV ч. I, стр. 209.

առաստանում նույնպես կապիտալիզմը մոնոպոլիստական և «դարձել» եղող շաքարի սինդիկատի որինակը մեղ ցույց ետալիս—մոնոպոլիստական կապիտալիզմի ակներեւ վէրանումը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի^{*)} :

Մենչեկել-լնասարար Ֆինն-Յենուատայելվսին բոլորովին ժխտում է կապիտալիզմի բարձր մոնոպոլիստական ձևերի առկայությունը հեղափոխական Ռուսաստանում և Հոկտեմբերյան հեղափոխությունը համարում եր «անիրավաչափ» (неравномерный): Իրականում մինչ հեղափոխական Ռուսաստանում կատարվում եր տնտեսության ինաւենակը մոնոպոլիզացիա, վորն իմպերիալիստական պատերազմի ժամանակ հասել եր բարձր մակարդակի: Ռուսական արդյունաբերության և բանկերի ընդդրկումը մոնոպոլիաների մեջ՝ Գերմանիայի համեմատությամբ զազմում եր^{**)} (տոկոսներով) .

	Թուսաստան	Գերմանիա
Մետաղարդյունարերություն	60—72	40—44
Բա, ածխի	70	53
Նավթի	65	—
Շաքարի	90	70
Ցեքսարիլ	40	55
Բանկեր	70	51

Կարեռագույն ճյուղերի մոնոպոլիայով ընդգրկվելու աստիճանով Ռուսաստանը Գերմանիայից առաջ եր անցել և ՀԱՄՆ-ի հետ նույն ժակարդակի վրա յեր գտնվում: Դրա հետ միասին արտադրության կոնցենտրացիայի մակարդակով Ռուսաստանը Գերմանիայից և ՀԱՄՆ-ից առաջ եր անցել: Արդյունաբերության մեջ զբաղված յուրաքանչյուր 100 քանիորից, ձեռնարկություններում (ձեռնարկության մեջ 20 և ավելի մարդ) Ռուսաստանում 1913 թ. զբաղված եր 62 մարդ, Գերմանիայում 57 մարդ: Եթե վերցնենք միայն խոշոր արդյունաբերությունը, ապա և յու մարդ: Եթե վերցնենք միայն խոշոր արդյունաբերությունը, ապա 510-ից ավելի բանվորություն ունեցող ձեռնարկություններում Ռուսաստանում աշխատում եյին բանվորության 56 %-ը, Գերմանիայում միայն 24.5 %-ը, իսկ ՀԱՄՆ-ում մոտավորապես 33 տոկոսը: Բացի դրանից 1000 և ավելի բանվորություն ունեցող ձեռնարկություններում պրոլետարիատի բացարձակ թիվը Ռուսաստանում բարձր ե յեղել քան Գերմանիայում—Ռուսաստանում 902 հազար մարդ, Գերմանիայում 880 հա-

^{*)} Լեպին, Собр. соч. изд. 1-ое т. XIV ч. 1, стр. 207.

^{**)} Արդյունաբերության համար մոնոպոլիզացիայի յենթարկված արդյունաբերության հավասար վաճառահանումն ամբողջ սպառման տոկոսական և ոչ ոք' բուժյա բը քանի գորների համար—հիմնական կապիտալների տակոսը:

զար մարդ : Կապիտալիստական և վոչ մի յերկիր չգիտեց արդյունաբերության և պրոլետարիատի այնպիսի կոնժենտրացիա, վորպիսին տեղի յե ունեցել Պետերբուրգում, Մոսկվայում, Դոնքասում և Ուրալում : Պրոլետարիատի այդ կոնժենտրացիան խոշորագույն զեր խաղաց սոցիալիստական հեղափոխության գարգացման ընթացքում :

Ռուսական արդյունաբերության բարձր կոնժենտրացումն անվիճելիորեն կապված է ինչպես արտասահմանյան կապիտալի հոկայականութերի հետ Ռուսաստանում, նույնպես նաև նրա հետ, վոր ռուսական կապիտալը մյուս յերկրների կապիտալներից ուշ մտնելով ինտենսիվ զարգացման ուղի, կարողացավ արեւմուտքից վիրխ առնել տեխնիկական-տըրտեսական և կազմակերպչական առաջավոր, ամենից ավելի կատարելագործված ձեերը : Այսպիսով համաշխարհային կապիտալվագմի զարգացմանակարդակն արագացրեց սոցիալ-տնտեսական նախադրյալների ստեղծումն Ռուսաստանում՝ սոցիալիստական շինարարության համար :

Ռուսաստանում հոկայական քանակությամբ մանր-ապրանքային տնտեսությունների առկայությունը և այդպիսին համեմատած որինակ Գերմանիայի և ՀԱՄՆ-ի հետ, արդյունաբերության նվազ տեսակարար կշիռն յերկրի տնտեսության մեջ, այն ժամանակ դեռևս յերկրի առավելապես ազգարային բնույթը չեն ժխտում այն դրությունը վոր Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության համար ապատվանդան գոյություն ուներ :

Ռուսաստանի արդյունաբերությունը մինչեւ պատերազմը տալիս եր ամբողջ յերկրի ապրանքային արտադրանքի 63%-ը : Գյուղատնտեսության մեջ նույնպես ինտենսիվ կերպով զարգանում եր կապիտալվագմը և այնտեղ նույնպես պրոլետարական հեղափոխության համար բազա յեր ստեղծվում հանձինս գյուղատնտեսական բանվորների և գյուղականչքավորության : Լենինը միշտ ել ընդդումը եր յերկրի եկոնոմիկայում մանր-ապրանքային սեկտորի գերակշռության փաստը, սակայն, նա, հակառակ Սուխամովի, Տրոցկու և ուրիշների, այդ յերեւույթը սոցիալվագմի կառուցման համար անհաղթելի արգելակ չեր համարում : Ավելին, պրոլետարիատի կողմից դեկավարվող միջակ և չքավոր գյուղացիությունը լենինը համարում եր վորպես—սոցիալիստական շինարարության պրոցեսում ակտիվութեն գործող ուժ : Նա ապացուցում եր վոր միայն գյուղի հիմնական մասսանեքին իր կողմը գրավելով և նրանց զեկավարելով պրոլետարիատը կարողանա լուծել եկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցման խնդիրները : Լենինը հիմնվում ե Մարքսի, Ենգելսի ուսմունքի վրա մանր ապրանքային արտադրության սոցիալիստական վերակառուցման մասին և լենինի կոռպերատիվ պլանը մեծ պլան և վոչ միայն մեր, այլև ամբողջ աշխարհի գյուղատնտեսության վերակառուցման համար :

Մեր յերկրում 1917 թ. յեղած սոց.-տնտեսական նախադրյալներն անբավարար լինելով, սոցիալիստական հասարակության անմիջական պատուցման համար, միանգամայն քավարար եյին սլրության առաջարկում և ապահովման և սոցիալիստական ձեռնարկում-մերի ապահովման և սոցիալիզմի հաղթական շինարարության և զարդարման համար :

Եւթե յերկրում մինչև իշխանության գրավումը կային մի շարք նյութական նախադրյաներ սոցիալիզմի համար և մի շարք նախադրյաներ ել գտնվում եյին առաջացման պրոցեսում, ապա պլուտոսի դիկտատուրան հողի, Փարբիկների, գործարանների աղքայնացման և ապա ինդուստրացման ու կոլեկտիվացման ճանապարհով հսկայական չափով արագացրեց սոցիալիզմի նյութական նախադրյալների աճումն ու հասունացումը :

Այսպիսով Հոկտեմբերյան Հեղափոխության բնույթի լենինյան քննորոշումը հիմնված է նրա ինչպես արտաքին, նույնպես և ներքին ուժերի վերլուծման վրա : Մենչեւիները բացասում եյին սոցիալիստական հեղափոխության համար ներքին նախադրյալների առկայությունը թուսաստանում : Լենինին և Ստալինին հաջողվեց ցույց տալ այդ պընդումների լիակատար սնամնկությունը, ինչպես տեսության մեջ նույնպես և գործնականում, նրանց ռեվլունիստական բնույթը և ապացութել, վոր մեր յերկիրն ունի անհրաժեշտ և քավարար նյութական նախադրյալներ վոչ միայն կավածատերերին ու բարձրաւագիային տապալու, այլ նաև լիակատար սոցիալիզմ կառուցելու համար : Լենինյան ուստանեցի հանճարեղությունը կայանում է նրանում, վոր նա բազմակողմանիորեն հիմնավորում է հեղափոխության սոցիալիստական բնույթը այնպիսի յերկրում, ուր ժամանակին եկոնոմիկայի մի բնողավառի չափազանց հետամնացությունը (գյուղատնտեսության) զուղակցվում էր բարձր զարդարած կապիտալիստական ձեերի հետ (արդյունաբերություն) :

Պրոլետարական և բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն : Հոկտեմբերյան Հեղափոխության սոցիալիստական բնույթին բոլորավին մի հակառակ այն, վոր նա պետք է լուծեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մի շարք խնդիրները և այդ հեղափոխությունը հասցներ իր վախճանին : Էստ լենինի, հեղափոխության-բուրժուական դեմոկրատական բովանդակությունը կայանում և յերկը սոցիալական հարաբերությունները միջնադարի ճորտության, Փեոլեալիզմի ժամաներից մարդու մեջ : Լենինը, թվարկելով ճորտափիրության գլխավոր մնացորդները նույնաստանում առ 1917 թ. նշում եր՝ միապետությունը, դասականությունը, հողատիրության և հողոգոտագործման բնույթը, կանանց նույնած գրությունը, կրոնը, ազգությունների նշու-

ժը : Յել յեթե չկա վոչ մի յերկիր , նույնիսկ ամենաառաջավորների շաբաքում , ուր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրները հետևողականորեն լուծված լինեցին , ապա ավելի քան չեր կարող պատահէլ այդ Ռուսաստանում , ուր բուրժուազիայի և կալվածատիրության շահերը (Հողի , իշխանության , պատերազմի և այնի վերաբերմամբ) սերտ միաձուլվել եյին : 1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբերը - իշխանության գլուխը կանգնած բուրժուազիան չկարողացավ քեզ թե շատ հետևողականորեն լուծել բուրժուական դեմոկրատական հեղափոխության խնդիրները , ընդհակառակը , ժամանակավոր կառավարությունն իր գլխավոր ուշադրությունը դարձել եր բանվոր դասակարգի ճնշման և գյուղացիության հողի բաժանման նպատակով ծավալված հակակալվածատիրական շարժման լիկվիդացիայի վրա : Բուրժուական կառավարությունը բլոկի մեջ եր մտել միապետական տարրերի հետ , անձեռնմխելի յեր պահել ինքնակալության տնտեսական բազան (կալվածատիրական հողատիրությունը) , ամեն կերպ ջանք եր թափում ձզձկելու հեղափոխության առաջադրած խնդիրների լուծումը հատկապես պատերազմի լիկվիդացիան : Միայն պրոլետարիատը չքավոր գյուղացիության հետ միասին , կարողացավ հետևողականորեն , իսկապես հեղափոխականորեն լուծել այդ խնդիրները : Այդ ժամանակ Լենինը գրում եր . «Ընթացիկ մոմենտի յուրահատկությունը Ռուսաստանում կայանում և հեղափոխության առաջին ետապից , վորն իշխանությունը հանձնել բուրժուազիային . . . յերկրորդ ետապի փոխանցան մեջ , վորն իշխանությունը պետք ե հանձնի պրոլետարիատի և գյուղացիության չքավորագույն շերտերի ձեռքը»*) :

Միայն պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով հնարավոր եր բուրժուական հեղափոխությունն իր վախճանին հասցնելը : Սակայն դա պրոլետարիատը խնդիրն եր բուրժուազիայի տապալումը և սոցիալիստական հասարակության կառուցումը : «Մենք բուրժուական դեմոկրատական հեղափոխության հարցերը լուծեցինք առաջարժման ընթացքուն հարեանցիորեն , ի միջի այլոց վորպես մեր գլխավոր և իսկական պրոլետարական - հեղափոխական սոցիալիստական աշխատանքի» կողմնակի արդյունք**) :

Մենչեւկեները և նրանց հետեւից Կամենելը , Զինովևը և ընկ Ռիկովը բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը չինական պարիսպով բաժանում եյին պրոլետարական հեղափոխությունից : Նրանք պնդում եյին , վոր այդ հեղափոխությունների միջև պետք ե լինի բավականին նշանակալից ժամանակաշրջան , վորի ընթացքում իշխանու-

*) Լենին. Տօբր. սով. թ. XIV հաձ. 1-ի ստ. 18.

**) , , , , թ. XXIII ստ. 26.

թյան անցած բուրժուազիան զարդացնում և կապիտալիզմը, իսկ պրո-
լետարիատը «վճռական մարտիք» համար ուժեր և կուտակում։ Առարկե-
լով Լենինին, Կամենելը, Ռիկովը և մյուսներն ապացուցում ենին, վոր
քանի չի ալարտվել բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը՝
սոցիալիստական հեղափոխության անցնելն անհնարին եւ Կամենելը
կշամքում եր Լենինին, վոր իր թե նրա սխեման յենթադրում երու-
ժուական-դեմոկրատական հեղափոխության անմիջական «վերածնուն-
դը» սոցիալիստականի։ Լենինն ապացուցեց այդ պնդումների լիակատու-
անհեթեթությունը։ Պատասխանելով Կամենելին, նա զրում եր. «Յու-
զոչ միայն չեմ հիմնվում մեր հեղափոխության սոցիալիստական հեղա-
փոխության «վերածնունդի» վրա, այլ ուղղակի նախազգուշացնում և
դրանից... «սոցիալիզմի մուծումը» մեր անմիջական խնդիրը չե»*).
Նշելով Հաղթական սոցիալիստական շինարարության անհրաժեշտ նո-
խարժյալների առկայությունը՝ մեր յերկրում և վճռականորեն զնելու /
իշխանության զրավման հարցը պրոլետարիատի կողմից, Լենինը, դրա-
հետ միաժամանակ ընդդում և «գյուղացիական կամ մանր-բուրժուա-
կան գեռես չափարաված շարժման վրայից ցատկելու «վտանգավորու-
թյունը»։ Լենինի այն նկատողությունը, վոր բոլոր Կառուցկիները, Հիլ-
ֆրեդինզները, Մարտովները և 2-րդ Խորենացիոնալի մյուս հերոսները՝
չեն կարողացել հասկանալ բուրժուական-դեմոկրատական և պրոլետա-
րական հեղափոխության փոխարարերությունը, նրանց դիալեկտիկա-
կան կապը, մեկի վերաճումը մյուսին՝ ամբողջությամբ վերաբե-
րում են Կամենելին, Զինովիին և Ռիկովին։ Մենչեւկիները՝
ուզորացունիստները, չհասկանալով բուրժուական-դեմոկրատական և պրոլետա-
րական հեղափոխության փոխարարերությունը, նրանց դիալեկտիկա-
կան կապը, մեկի վերաճումը մյուսին՝ ամբողջությամբ վերաբե-
րում են Կամենելին, Զինովիին և Ռիկովին։ Մենչեւկիները՝
ուզորացունիստները, չհասկանալով բուրժուական-դեմոկրատական և պրոլետա-
րական հեղափոխության փոխարարերությունը, վերջինիս
ովել են խեղաթյուրված մեկնարանություն, ներկայացնելով այն վոր-
ում վոչ սոցիալիստական հեղափոխություն՝ վորքանով նրա պայ-
քարում լուծվում են բուրժուական-դեմոկրատական խնդիրները։ Յե-
թե բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը մինչև իր
վախճանին հասցնելը հանդիսացել է հենց նույն Հոկտեմբերյան հե-
ղափոխության ամբացման տեսակետից, կարենը խնդիր, ապա Հոկ-
տեմբերյան հեղափոխության ամենաեյական կողմը, գլխավոր նպատա-
կը յեղել է. «ատապալել բուրժուազիայի իշխանությունը, պրոլետարիա-
տի զիկտատուրայի հաստատումը, իմպերիալիստական պատերազմի/
վերածելը՝ քաղաքացիական պատերազմի, կապիտալիստների եքսպրո-
պրիացիան և այլն»*):

Տրոցկիստները սոցիալիզմի հաղթանակի մասին ԽՍՀՄ՝
ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հարցի մասին,
հեղափոխության այդ Հիմնական հարցի վերաբերմամբ մեր կուսակցու-

* Հենին, Յերկերի ժողովածու հոտ. 20, եջ 107 (սուս.)

** Մատին, Լենինիզմի հարցերը

թյունը սուր և յերկարատե պայքար և մղել տրոցկիզմի դեմ, վորի գիրքավորումն ամբողջությամբ մենչելիյան է: Տրոցկիստական հայացքների հիմքում դրված և պերմանենա հեղափոխության տեսությունը. վորի եյությունը կայանում է Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հնարավորության բացասաման մեջ, յեթե այդ հեղափոխությունն անմիջապես ոժանդակություն չտանա հաղթական պրոլետարիական հեղափոխությունների կողմից Արևմուտքում: Դեռ 1906 թ. Տրոցկին առաջադրեց այն թեզիսը, վոր «առանց յեղորպական պրոլետարիատի ուղղակի պետական ողնության՝ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարող իշխանությունն իր ձեռքում պահել և իր ժամանակավոր տիրապետությունը վերածել յերկարատե սոցիալիստական դիկտատուրայի: Դրանում չի կարելի և վոչ մի բոպե կասկածել»*):

Համաշխարհային զարգացման մեջ առաջացած խոշորագույն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել 1906 թվից մինչև 1922 թ.) մոնուպուլիաների աննախընթաց զարգացումը, իմպերիալիստական հակասությունների սրումն, պատերազմը, փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները Ռուսաստանում, հեղափոխական շարժման աճումը ամբողջ աշխարհում, ամենաչին չափով անդամ չեյին փոփոխել Տրոցկու մենշևիկյան հայացքները և 1922 թ. նա պաշտպանում եր Ռուսաստանում սոցիալիզմի հաղթանակի անհնարինության նույն տեսությունը. «իր հաղթանակի պատճովման համար, պրոլետարական ավանդություն ստիպված է լինելու իր տիրապետության առաջին պահին. խոշորագույն ներխուժում կատարելու վոչ միայն Փեռդաշտական, այլև բուրժուական սեփականության մեջ: Ընդ վորում նա թշնամարար բաղկացելու յե վոչ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, վորոնք հեղափոխական պայքարի առաջին ըրջանում ոժանդակել են նրան, այլև գյուղացիության լայն մասսաների հետ, վորոնց ողնությամբ նա իշխանության զլուխին է անցել: Ճնշող մեծամասնությամբ գյուղացիական ազգաբնակչություն ունեցող, հետամնաց յերկրում՝ բանվորական կառավարության զրության հակասությունները կարող են լուծում ստանալ միայն միջաղղային մասշտարով, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ուղմարեմում**):

Հայկառակ լենինի, Տրոցկու մոռ պրոլետ. գիլտատ. ըմբռնումը չի սպառնակում իր մեջ չահագործողներին ճնշելու խնդրի հետ միասին, նաև գյուղացիության չքավորմիջակային հիմնական մասսաներին դեկայիարելու անհրաեւժառությունը: Տրոցկու մոռ ակնարկ անդամ չկա միջակի հետ պրոլետարիատի ու գյուղական չքավորության ամուր դաշինքի հնարավորության մասին: Ավելին, Տրոցկին ամրող գյուղա-

*) Տրոցկի—Խաչա Բեօլուպիա, հջ 278:

**) Տրոցկի, Սօբր. սօչ. թ. III, հջ 90:

շիությունը գիտում և վորագես հականեղափոխական ուժ։ Տրոցկին առաջ է, վոր պրոլետարիատն իշխանությունը գրավելիս վորոշ ողնություն կարող է ստանալ զյուղացիությունից, սակայն, նրա կարծիքով, հետազյում և վոչ մի ողնության մասին խոսք անդամ լինել չէ կարող։ Ընդհակառակը, պրոլետարիատը վորքան առաջ ընթանա, սուրբ իրողի նրանից կհետանան նախկին դաշնակցիները և նա կընդհարվի համատարած հականեղափոխական պարապի հետ։

Վերև ասածներից լիակատար պարզությամբ հայտնի յէ դառնում ընկ։ Ստալինի կողմից Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կամունիստների տակտիկան բրոցյուրում նշած՝ տրոցկիստների անհավատ վերաբերմունքի՝ հանդեպ պրոլետարիատի հեղափոխական ուժի և ընդունակության, ինչպես նաև պրոլետարիատի կողմից չքաղործիչական դյուղացիության սոցիալիստական վերամշակման հնարավորության բացաման վիճակը։

Տրոցկիզմը վճռաբար ժխտում է առանց՝ պրոլետարական հեղափոխությունների ոժանդակությանը մյուս յերկրներում հաղթական ստցիալիստական շինարարության հնարավորությունը ԽՍՀՄ-ում։ Եթե Արևելուտքում հեղափոխությունը վրա չհասնի, պրոլետարական իշխանությունը ԽՍՀՄ-ում կտապալվի կամ կվերասերվի՝ պրոլետարիատի և զյուղացիության անխուսափելի ընդհարման ճնշման ներքո։ Այստեղից ձնունդ և առողջում արցոցիստական տեսությունը կուտակցության և Խորհրդային իշխանության վերասներման մասին, նրանց կուլակին և ներկրանի ոժանդակելու դիրքավորման անցնելու վերաբերյալ մի տեսություն, վորն ընդունվել եր ժամանակին նաև Զինովև-Կամենեյան ուղղիցիայի կողմից։

Պրոլետարական հեղափոխության համար ներքին սոցիալ-սննդական նախադրյանների գոյության բացասման մեջ տրոցկիստներն ամբողջությամբ համերաշխ են մենշևիկների հետ։ Դա լիակատար պարզությամբ յերեան և դարձի Տրոցկու ինչպես հեղափոխության սկզբում գրած աշխատություններում, նույնպես և 1930 թ. հողվածներում։ Այլ հողվածներում նա, քննադատելով Կոմինտերնի ծրագրի դրույթը՝ վոչ միայն դրաբուազիյին և կալվածատերերին տապալելու, այլ նաև սոցիալիզմի կառուցման անհրաժեշտ և բավարար նյութական նախադրյալների առկայության մասին ԽՍՀՄ-ում փորձում և ապացուցել, վոր ԽՍՀՄ-ում սոցիալիզմի շինարարության համար միայն քաղաքական նախադրյաններ կան, իսկ տնտեսական նախադրյալներ—վոչ⁹)։ Բայտ վո-

⁹ ՄԱՆՈՒԹ. ԽՄԲ.-Ի գեղ, եկանոմիկան քաղաքականությունից անջատելու նրան մըյանց հակագրելու այդ մեթոդը Տրոցկու անձնական հայտնագործությունը չեւ նա հատկանշական ե բոլոր հետեղական սոցիալ-ֆաշիստ ռեխարանների համար և առաջին հերթին վերաբերում և նրանց ըլավագույն առաջնորդին՝ Կառլցիուն Կառլցիուն ուղարակմակերպիալիզմի տեսությունը, նրա մտանագորապիս վերջին

բում, նա այս միտքը փորձում ե ապացուցել դիմելով Լենինին Լենինին՝ Կոմինտերնի ծրագրին հակաղըելն այդ հարցում ամենակոպիտ Փալտիֆիկացիա յե, վորովհետև Կոմինտերնի ծրագիրն այդ խնդրում համարյա տալիս ե Լենինի դրույթը:

Իր հականեղավոլսական տեսություններն ու գործերը քողարկել Լենինով՝ Տրոցկուն չի հաջողվի, քանի վոր նախ՝ նրա պնդումներն ուղղակի հակասում են Լենինի դրույթներին՝ այն մասին, վոր մեզում լիակատար սոցիալիզմ կառուցելու համար բոլոր անհրաժեշտ տվյալները կան, վոր «Նեալը տնտեսապես և քաղաքականապես միանգամայն ապահովում ե սոցիալիստական նկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորությունը», ինչպես նաև սոցիալիզմ կառուցող յերկրի վիթխարի հաջողությունների շնորհիվ, վորն իր թեակոխումով սոցիալիզմի ժամանակաշրջանը, հիմնովին ջախճախում և Տրոցկու «մարի դեղուաները» գործնական կյանքի անժխտելի դաստերով, ցույց է տալիս մեր հեղափոխության և սոցիալիզմի կառուցման ճանապարհների վերաբերյալ ճշությունը Լենինի, Ստալինի և մեր կուսակցությունից:

Զբնդունելով լենինյան ուսմունքը կապիտալիզմի գարգացման անհավաքայափության մասին, իմպերիալիզմի դարաշրջանում, Տրոցկին ժխտում ե սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը վոչ միայն ԱՄՀՄ-ում, այլև ընդհանրապես միվորեկ յերկրում:

Իր 1930 թ. հոդվածներում Տրոցկին փորձում ե «խորացնել» իր թեղիսը սոցիալիզմի հաղթանակի անհնարինության մասին մի յերկրում—ԱՄՀՄ-ում և այստեղ մի անգամ ևս ցույց է տալիս իր տեսության մենչևիկյան երությունը: 1928 թ. Բառերը, քննադատելով լենինյան դրույթը սոցիալիզմի հաղթ, հնարավորության մասին ԱՄՀՄ-ում մատնանշում եր, վոր սոցիալիզմը մի յերկրում չի կարող հաղթանակել վորովհետև սլատերազմից հետո համաշխարհային տնտեսությունը «դարձել ե ռեալ տնտեսական ամբողջություն»: Այդ մենշևիկյան տեսություն-

շրջանի գուշակությունները կապիտալիստական ճգնաժամերի և նրանցից խուսափելու միջոցների մասին, դրա պերճախոս ապացույցն են հանգիստանում, մասնավորապես նրամտքի արևոտությանը, վորոնց հանձնանյուն, Մարքսի հանճարեղ նախատեսումները կապիտալիստական ճգնաժամերի մասին իմպերիալիզմի եպօխայում անհմատ եղանուում և կապիտալիստական պետությունները յեթե ցանկնեն, կարող են արդելու հանդիսանալ ճգնաժամերի առաջացմանը և ծագմանը՝ լավագույն արտահայտությունն ե արտադրական ուժերի և արտադրողական հարաբերությունների այն մեխանիստական ըրբուման, վորը մխտում է քաղիսի և վերնաշենքի գեալեքտիկական միամությունը նրանց փոխազդեցությունը:

Այդ գեպքում Տրոցկին միայն հետառղականորեն շարունակում է իր իսկական ուսուցչիների ուսմունքը և կոնկրետացնում է Կառուցկու և Սուխանովի մեխանիստական դրույթները Հոկտեմբերյան հեղափոխության գնահատության հարցերում:

ներն ել կրկնում ե Տրոցկին, սխռելով, վոր սոցիալիզմ չի կարելի կտռուցել վոչ միայն մի յերկրում, այլև առանձին վերցրած ցամաքամառում, վոր սոցիալիզմ կարելի յե կառուցել միայն ամբողջ մոլորակի շրջանակներում, վորովհետև համաշխարհային տնտեսության առանձին հատվածները սերտ կապված են միմյանց հետ և կախումն ունեն համաշխարհային տեխնիկայից, եկոնոմիկայից, քաղաքականությունից։ Այդ արտաքինից «գերհեղափոխական ինտերնացիոնալիզմի» մեջ, վոր պահանջում ե միաժամանակ հեղափոխություն բոլոր յերկրներում թաղնված ե հրաժարումը պրոլետարական հեղափոխությունից։ «Մենք այսակ զործ ունենք մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության բուրժուական ժխտման հետ, քողարկված հեղափոխական փրազով, համաշխարհային հեղափոխության հաղթանակի մասին»*):

Այդ արոցկիստական դիրքավորումը բռնեց նաև Զինովև-կամենելյան ոպողիցիան 1925—1927 թ. թ., ապացուցելով, վոր մեր տեխնիկական-տնտեսական հետամնացության պատճառով, չի հաջողվի հաղթահարել ներքին դժվարությունները, յեթե միայն մեղ չփրկի միջազդային հեղափոխությունը։ Զինովյեվը կարծում ե, վոր «սոցիալիզմ կառուցելու ապահովված հնարավորությունը» հավանական ե մի յերկրի շրջանակներում, իսկ սոցիալիզմ կարելի յե կառուցել միմիայն մյուս յերկրներում հեղափոխության հաղթանակի դեպքում**): Որիզինալ տեսություն—Մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել մի յերկրում նրա կառուցման անհնարինության դեպքում։

Այդ արոցկիստական (Զինովև-կամենելյան) տեսությունների վնասակարությունը և նրանց դեմ մղվող վճռական պայքարի կարևորությունը փայլուն կերպով ցույց են տրված ընկ. Ստալինի զեկուցման մեջ կուսակցության 16-րդ համազումարում։ «Տրոցկիզմը ժխտում է սոցիալիզմի կառուցման հնարավորությունը ԽՍՀՄ-ում մեր յերկրի բանվոր դասակարգի և չքավորմիջակ դյուողացիության ուժերով, գուշակում է ԽՍՀՄ պրոլետարիատի անխուսափելի կապիտուլացիան բուրժուազիայի առաջ, յեթե վրա չհասնի մյուս յերկրների պրոլետարիատի ողնությունը։ Հիմարություն կլիներ մտածել, վոր յերեք հեղափոխություն կատարած մեր պրոլետարիատը կդիմի աշխատանքային ննտուղիազմի և մասսայական հարվածայնության, հավատացած լինելով սոցիալիզմի հաղթանակի հնարավորությանը։ Կարելի՞ յե արդյոք, ժխտելով պրոլետարական ուժի և հնարավորությունների առկայությունը, դյուողացիությանը տանել դեպի սոցիալիզմ, բարձրացնել դյուողացիական մասսաներին կոլտնտեսական շարժման համար և այդ հիմանը վրա կազմակերպել կուլակության լիկվիդացիան վորպես դասակարգի».

*) Ստալին—Լենինիզմի հարցերը, հայ. հրատ.

**) Էնօնիք—Լենինիզմ, տր. 291—293.

Ամառնանչելով այդ, ընկ. Ստալինն անում ե հետեւյալ յիշրակացությունը.—Վկորպեսզի բանվոր դասակարգին աշխատանքային վերեւքի և մրցակցության բարձրացնենք ու կազմակերպենք ծավալուն հարձակում...վորպեսզի կազմակերպենք զյուղացիության մասսայական կոլտնտեսական շարժում և լիկվիդացիայի յենթարկենք կուլակությանը, հարկավոր ե ամենից առաջ թաղել տրոցկիզմի բուրժուական տեսությունը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին*): Սոցիալիստական շինարարության ամբողջ փորձը ցույց է տալու, վոր կուսակցության և բանվոր դասակարգի հսկայական հաջողություններն անհնարին կլինեն առանց վճռական պայքարի ոպղորտունիսական տեսությունների և պրակտիկայի դեմ, մասնավորապես հակահեղափոխական արոցկիզմի դեմ:

Լենինյան ուսմունքը սոցիալիզմի հաղթանակի մասին:—Սոցիալիզմի կառուցման լենինյան տեսությունը զարգացել է մենչեւկյան տրոցկիստական-դինովյելվական և աջ ոպղորտունիստական տեսությունների դեմ մզկող անհաշտ պայքարում: Լենինյան հայացքների եյությունը, վորը յելակետ ե ընդունում մեր կուսակցությունն ու Կոմինտերնը, հանդում ե հետեւյալին:—Ամենից առաջ անհրաժեշտ ե տարբերել ներքին դժվարությունների և հակասությունների հաղթահարման հիման վրա սոցիալիզմի լիակատար հաղթանակի հնարավորությունը ԽՍՀՄ-ում, սոցիալիզմի վերջնական հաղթանակի հնարավորությունից, վորպես յերաշխիք արտաքին ինտերվենցիայից, իսկ այդ յերաշխիքը տրվում է միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակով մի շաբաթը կրներում:

Մեր զարգացման ներքին դժվարություններն ու հակասությունները կապված են յերեք սեկտորների առկայության հետ մեր եկոնոմիկայում՝ ողա՛առաջնորդությունը՝ սոցիալիստական և կապիտալիստական սեկտորների միջև յեղած հակասությունն ե, յերկրորդ՝ պրոլետարիատի և գյուղացիության միջև:

Ավտաքին հակասությունները բղխում են յերկու հակամարտ, ուղղակի հակադիր սխտեմների—ԽՍՀՄ-ի և կապիտալիզմի դոյլությունից, նրանք բղխում են կապիտալիստական շրջապատման առկայության փառուից, այստեղից ել ռազմական հարձակման վտանգ, ինտերվենցիայի սպառնալիք ԽՍՀՄ-ի դեմ:

Ինարկե, այդ յերկու տիպի հակասությունները կապված են միշտանց հետ, վորքան յերկրի ներսում կապիտալիստական ելեմենտները հանդիսանում են համաշխարհային կապիտալիզմի ջոկատը, վորքան ներքին հակասությունների լուծումը—գյուղի կոլեկտիվացումը և կու-

*) Լենինիզմի հարցերը, հայ. հրատ.

լակության լիկվիդացիան, վորագես դասակարդ—(համատարած կողմէ—տիվլացման հիման վրա—խմբ.) ուժեղացնում ե մեր դիրքերը համաշխարհային կապիտալիզմի դեմ մզվող այլայօսարում։ Սակայն այդ հակասությունների յուրաքանչյուր խումբն ունի իր առանձնահատկությունները, պահանջում ե աշխատանքի տարբեր ձևեր, մեթոդներ և մասշտաբներ նրանց հաղթահարման համար և դրա համար ել նրանց ժիկարելի չփոթիլ։ Անհրաժեշտ ե պարզորոշ սահմանադեմել այդ յերկու շարք հակասությունները։ Միայն նման մոտեցման դեպքում հնարավոր ե ճիշտ քննարկել սոցիալիզմի հաղթանակի հարցը՝ մի յերկրում։

Սոցիալիզմի վերջնական հաղթանակը—«դա նշանակում ե լիակատար յերաշխիք ստեղծել ինտերվենցիայի և ռեստավրացիայի փորձերից սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հիման վրա համենայն դեպք մի քանի յերկրներում»²)։ Անկայն յեթե արտաքին հակասություններն անհաղթելի յեն մի յերկրի ուժերով, յեթե ԽՍՀՄ-ում սոցիալիզմի վերջնական հաղթանակի պայմանը, այսինքն լիակատար յերաշխիք ինտերվենցիայից հանդիսանում ե պրոլետարների հաղթանակը մի շարք յերկրներում, առա դա բոլորովին չի նշանակում, վոր գտնվելով կապիտալիստական շրջապատում, մենք չենք կարող կառուցել և ավարտել սոցիալիզմը, վոր իմպերիալիստաների վորեւ հարձակում ԽՍՀՄ-ի վրա մեղ անխուսափելուրեն կտանի դեպի կործանում։ Առաջին, իմպերիալիստաների ԽՍՀՄ-ի դեմ հարձակման հետ կազմած վտանգները յերկկողմանի յեն։ փորձենով տապալել սոցիալիստական շինարարությունը և հարձակելով ԽՍՀՄ-ի վրա, կատիտավալիստները, նամանավանդ այժմու առկա հավաքելով ԽՍՀՄ-ի վրա, կատիտավալիստների դասավորումից, յերբ մասսաներն իմպերիալիստական պառերազմը կվերածեն քաղաքացիականի։ Եերկրորդ՝ մենք կարող ենք յետ մղել իմպերիալիստաների առանձին հարձակումները և դա այնքան հնարավոր ե, վորքան ալելի ուժեղ և մյուս յերկրների կոմինտերնի դրոշի տակ ընթացող պրոլետարների ողնությունը ԽՍՀՄ-ին։ 1918—1920 թ. թ. մեր քաղաքացիական պատերազմի վորքը ցույց ե տալիս, վոր Արևմուտքի պրոլետարիատը կարող ե այնպիսի ճնշում դորժ դնել «իր» կապիտալիստաների վրա, վորպեսդի անհնարին դարձնի խորհրդավոյն իշխանության ջախջախումը։

Սակայն այդ բոլորը վոչ միայն չեն վեարացնում իմպերիալիստաների կողմից ռազմական հարձակման վտանգը ԽՍՀՄ-ի վրա, այլ ընդհակառակը, մասնավորապես ներկա շրջանում՝ ընդհանուր ճգնաժամի ե կապիտալիզմի հակառակությունների չափազանց սրման հետևանքով—այլի քան յերեք մոտեցնում են այն։ Այդ պատճառով ել լիակատար յերաշխիք ինտերվենցիայից հարավոր ե միայն պրոլետարիատի հաղթանակի հիման վրա՝ մի շարք յերկրներում։

²⁾ Ставин—О Соц.-дем. уклоне, стр. 91.

ի տարբերություն սոցիալիզմի վերջ. հաղթանակի, մի յերկրում—
ԽՍՀՄ-ում—սոցիալիզմի լիակատար հաղթան. հարցը կապված է ներքին
հակասությունների լուծման հետ: Հիմնվելով լենինյան ուսմունքի վրա,
ի հակադրություն տրոցկիստական-դինովելվական ոպոզիցիայի, կու-
սակցությունը կարծում է, վոր ներքին հակասությունները հաղթահա-
րելի յեն մեր հեղափոխաթյան ներքին ուժերի հիման վրա: Պատասխա-
նելով այն հարցին, թե ի՞նչ բան է մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի
հնարավորությունը, ընկ. Ստալինը զրել է.—«Դա պրոլետարիատի
և գյուղացիության մէջ յեղած հակասության մէր յերկրի ներքին ու-
ժերով լուծման հնարավորությունն է, պրոլետարիատի կողմից իշխա-
նությունը վերցնելու և այդ իշխանությունը մեր յերկրում լիակատար
սոցիալիստական հասարակություն կառուցելու համար հնարավորու-
թյունն ե—մյուս յերկրների պրոլետարների համակրությամբ և ոժան-
դակությամբ, սակայն առանց պրոլետարական հեղափոխության նախ-
նական հաղթանակի մյուս յերկրներում»*: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ում
սոցիալիզմի հաղթանակի հարցը, նշանակում է, վոր մենք կարող ենք
ներքին ուժերի հիման վրա զարդացնել ինդուստրիան, վերակառուցել
մանր-ապրանքային հետամնաց արտադրությունը խոշոր սոցիալիստա-
կանի, հաղթահարել մեր տեխնիկական-տնտեսական հետամնացու-
թյունը, լիկվիդացիայի լենթարկել կապիտալիստական եկամբենուները:

Մեր հեղափոխության ներքին ուժերի վերը լուծությունը հնարավո-
րություն տվեց Լենինին՝ կուսակցության 11-րդ համագումարում
պնդել, «վոր Ռուսաստանի պրոլետարական պետության ձեռքին միան-
գամայն բավարար տնտեսական ուժ կա ապահովելու համար անցումը
դեպի կոմունիզմ»**: Լենինի բոլոր աշխատություններում,—Նեպի,
ինդուստրացման, ելեկտրիֆիկացիայի, կոոպերատիվ պլանի հիմնա-
վորման ընթացքում ամեն տեղ վերը լուծվում և բազմակողմանիորեն
ապացուցվում են մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորու-
թյունները:

Սոցիալիզմի կառուցման մասին լենինյան տեսության ճշտության
լավագույն առացուցյլը պրոլետարական դիկտատուրայի վիթխարի նվազ-
ություններն են: Ներքին կուսակումների հիման վրա, առանց քիչ թե շատ
նշանակալից վարկերի զրուց, կապիտալիստական ողակումի դեմ կատա-
ղի պայքարի պայմաններում, պրոլետարիատի ստեղծագործական ակ-
տիկության հսկայական վերելքի հիման վրա, մենք ձեռք ենք բերել
արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման չտեսնված

*) Լենինիզմի հարցերը:

**) Լենին, Ըօբք. Հօգ. տ. ԽԿԿԱ էտր. 244.

աւելպեր : Կուսակցությունը և պրոլետարիատը հաջող կերպով հաղթաւարում են մեր զարգացման ներքին հակասությունները : Յեվ դրա ամենափայլուն ապացույցը հանդիսանում է այն փաստը, վոր մեր յերկիրը թեակոխել և սոցիալիզմի շրջանը, ավարտվել և սոցիալիստական կոնոմիկայի հիմքի կառուցումը, «վոր ԽՍՀՄ վերջնականապես դուրսիում և սոցիալիստական ուղղությա» :

Խոսնելով մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին, մենք վոչ մի գեպքում չզետք ե մոռանանք մեր ամբողջ աշխատանքի միջազգային բնույթին ու նշանակությունը : Մեր ներքին խնդիրները սոցիալիզմի շինարարության բնադրավառում վոչ մի չափով չեն կարող հակադրվել համաշխարհային պրոլետարական հեղափոխության դորձին : Այդպիսի հակադրության դիրքերին սահեցին հակահեղափոխական որոցկիստներն ու դինովիսական-կամենելյան ոպղողիցիան, վորոնք փորձեցին իրենց ուղղորդունկիզմը քաղաքակել՝ կուսակցությանը մեղադրելով «աղքային սահմանափակության» և «նացիոնալ-ռեֆորմիզմի» մեջ : Վորպես հակալշիռ Տրոցիկի-Զինովյելվական ոսղողիցիայի, կուսակցությունը Հոկտեմբերյան հեղափոխությունը դիտում եր վոչ միայն վորպես Արևմուտքի հեղափոխության աղջանշան, խթանի յելակետ, այլ վորպես պատավանդան համաշխարհային հեղափոխության հետագա ծագալման համար :

Հոկտեմբերը լինելով մեր յերկրում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի մեկնակետը, միաժամանակ նա ամբողջ համաշխարհային պատմության նոր ժամանակաշրջանի սկիզբն է, նա բաց ե անում միջազգային և քաղաքացիական կոիվների նոր շրջան, վորի արդյունքը կլինի պրոլետարիատի հաղթանակը մի շարք ուրիշ յերկրներում : «ԽՍՀՄ-ն հանդիսանալով պրոլետարիատի դիկտուրուրայի և սոցիալիզմի շինարարության յերկիր... անխուսափելիորեն դառնում ե բոլոր կեղեցիած դասակարգերի համաշխարհային շարժման բազան, միջազգային հեղափոխության ոջախը, համաշխարհային պատմության մեծագույն դրոժունը» (Կոմինտերնի ծրագիրը) :

Հենինն ասում եր, վոր համաշխարհային հեղափոխության վրա գրւիսավոր ներգործություն մենք կանենք մեր տնտեսական քաղաքականությամբ : Այդ դրությունն առանձնահատուկ ուժով արտահայտվում է այժմս, յերբ հնդամյակի վճռական հաղթանակը ճանաչվում է վոչ միայն բոլոր յերկրների աշխատավորության, այլև մեր վոխերիմ թշնամիների կողմից : Տնտեսական շինարարության ֆրոնտում մեր տարած հաղթանակներով մենք ցույց ենք տալիս մյուս յերկրների ապագան՝ պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո և արագացնում մենք պրոլետարական հեղափոխության համար անհրաժեշտ հեղափոխա-

կան ուժերի հասունացումն ու կազմակերպումը : ԽՍՀՄ-ը, վոր համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիդաղն և յուր տնտեսական շինարարությամբ, մոտեցնում ե սոցիալիզմի վերջնական հաղթանակը համաշխարհային մասշտաբով :

Մեր ինդուստրացման, լենինյան կոռպերատիվ պլանի, հնդամյակի դրույտակ, համաշխարհային պրոլետարիատը պայքարում ե՝ տապալելու համար կապիտալիզմը .—մեր հաջողությունները սոցիալիստական շինարարության մեջ, հակադրվելով պրոլետարների դրության չափազանց վատթարացման հետ Արեմուտքում, ճզնաժամի պայմաններում, ոգտագործվում են վորպես կարեռագույն աղղակներ՝ մասսաներին կապիտալի դեմ պայքարի հանելու համար : «Թեր կամ դեմ ԽՍՀՄ-ին»—սա Արեմուտքում դարձել ե պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի հիմնական հարցը : Անվիճելի յէ, վոր մեր հեղափոխության այս բոլոր միջազդային հաջողությունները հիմնված են սոցիալիստական շինարարության ներքին նվաճումների վրա —այդ հաջողությունները կարող ելին ձեռք բերվել միայն կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրածան հիման վրա, միայն և միմիայն հակահեղափոխական տրոցկիստմի, զինովելու կամ հենելիյան ուղղվածիայի, և ներկա ժամանակաշրջանի գլխավոր վտանգ աշ ուղղութունիզմի, ինչպես և «ձախ»-երի դեմ մղվող անհաջող պայքարի հիման վրա :

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորության միտումն աջերի կողմից :—Պրոլետարական հեղափոխության և նրա հեռնելարների զարգացման մասին աջ ուղղութունիստներն իրենց ըմբռնումն ունեն, վորությանուր վոշինչ չունի լենինիզմի հետ : Ամենից առաջ նշենք աշերի տարածայնությունը կուսակցության հետ հեղափոխական պրոցեսի որինաչափության հարցի շուրջը, վորը կապված է համաշխարհային իմպերիալիզմի շղթայի թույլ ողակի հարցի հետ : Լենինի ու Ստալինի գրությունակերպերի մասին չի նշանակում, վորայդ կործանումն սկսվում ե ամենից քիչ զարգացած յերկրում : Այլ կերպ է մտածում Բուխարինը, վորը «անցման ժամանակաշրջանի հինուօնիկայում» դրել ե, թէ «համաշխարհային կապիտալիստական սիստեմի կործանումն սկսվեց ամենից ավելի քույլ ժողովովա-տնտեսական սխալմաներից և ամենից պակաս զարգացած պետական-կապիտալիստական կազմակերպություններից» (Եջ 150) : Այդ դրույթը ժողովովա-տնտեսական սիստեմի թուլությունը—Բուխարինը ցուցադրում ե վորպես հիմնական նախադրյալ պրոլետարական հեղափոխության համար Ռուսաստանում : Այսայն նա չի բավարարվում դրանով և ձեւակերպում ե բոլոր յերկրների համար «ընդհանուր որենք», վորի համաձայն «հեղափոխության վրա հասնելու արագությունը հակառակ հարաբերական և կապիտալիստական

հարաբերությունների հասունացման և հեղափոխության տեմպի բարձրության» (էջ 152):

Վերեւում ցույց տրվեց, վոր Ռուսաստանը, հանդիսանալով համեմատարար թույլ ողակի իմպերիալիստական շղթայում, միաժամանակ ողբորկատարական հեղափոխության համար նյութական-տեխնիկական նախադրյաների վրոշ մակարդակ ուներ: Յել յերբ «անցման ժամանակաշրջանի նկոնոմիկայում ճշումարինը զրում ե», վոր վկուղումն սկսվում և ամենաթույլ ժողովրդա-տնտեսական սխատեմներից, Լենինը նրա դրբի լուսանցքում նկատողություն և անում: —«սխալ ե», «միջակ, թույլ», «մեղանում առանց կապիտալիզմի վորոշ բարձրության վոչինչ դուրս չերդու»^{*)}:

Դրա հետ միասին Լենինի աշխատություններում կան բաղմաթիվ մատնանշումներ, վոր հեղափոխությունը չի կարելի տեղակորել պատրաստի սխամաների մեջ, վոր հեղափոխության համար չի կարելի հնարել ուղիղ կամ հակառակ հարաբերական-մաթեմատիկական որենքներ: Լենինը նշում ե կապիտալիստական յերկրների՝ իրենց զարգացման մակարդակի հարաբերականությամբ, հավասարաշատի կամ ներդաշնակ կերպով պրոլետարիատի դիկտատուրայի անցնելու անհնարինությունը: Նա ասում ե. «Հեղափոխությունը չի կարելի սարքել, վոչ ել հերթականություն սահմանել. հեղափոխությունը չի կարելի պատվիրել—հեղափոխությունն աճում, հասունանում ե»^{**)}: Հեղափոխական պրոցեսը աարենը տեմպերով ե ընթանում և տարբեր ձևերով ե արտահայտվում տարբեր յերկրներում. որինակ՝ զարգացած, հետամնաց, գաղութային և այլ յերկրներում: Իսկ Բուխարինը սահմանում ե հակառակ հարաբերականություն և դրանով հայտաբերում ե իր մեխանիստական, վոչ լեռինյան մոտեցումը պրոլետարական հեղափոխությանը:

Հետաղայում Բուխարինը հրաժարվեց «անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայում» արտահայտած իր մեջ բերված պնդումներից և սկսեց «ընդհակառակն» ապացուցել: Դրանում զարմանալի վոչինչ չկա, այդպիսի «անցումները» և տատանումներն ամրողությամբ բղխում են Բուխարինի աշխատությունների հիմքում ընկած մեխանիստական մեթոդից: Սակայն չի կարելի խարվել, վորովհետև Բուխարինի արտաքուստ «հակառակ» արտահայտությունները նույն հին ոպրոտունիստական բովանդակությունն ունեն: Իր ավելի հետաղա աշխատություններից մեկում «Լենինի քաղաքական կտակը» 1929թ. Բուխարինն արդեն պընդում ե, վոր համաշխարհային պատմության տեսակենտից պրոլետարական հեղափոխություն պետք ե անհն չչափաղանց զարգացած տնտեսական բարղարական ունեցող յերկրները»: Այդ պնդումը չի համապատասխանում:

^{*)} Ленинский сбор. XI, Կց 397.

^{**)} Ленин, Собр. соч. т. ХVІ изд. 1, стр. 183.

Քրերի խսկական դրությանը, դրանից յենելով՝ պրոլետարքական հեղափոխությունը Ռուսաստանում չի կարելի բացատրել վորագես որինացափ պրոցես և Բուխարինը փորձում է այդ բացատրել վորագես ինչ վորառնանահամուլէ բացառություն՝ կապված յուրահատուկ պայմանների հետ։ Իսկ ինչո՞ւմն է Բուխարինի կարծիքով այդ յուրահատկությունը։ Մի շաբթ ուրիշ մոմենտների հետ նա հատկապես ընդգծում է զյուդացիական պատերազմի զուգորդումը պրոլետարական հեղափոխության հետ։ Յեթե այդ զուգորդումը հակայական դեք է խաղացել բուրժուական-դեմոկրատական հեղափոխության պրոլետարական հեղափոխության վերածման ժամանակաշրջանում, յեթե զա նշանակություն ուներ այն ժամանակ, յերբ պրոլետարական հեղափոխությունը «ի միջի այլոց» ավարտում եր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները, ասպա միանդամայն սխալ է պյուղացիական պատերազմի այդ զուգորդումը պրոլետարական հեղափոխության հետ փոխադրել մեր զարգացման ներկա ժամանակաշրջանը, վորովհետեւ զա կնշանակեր անփոփոխ դրությամբ պահպանել պրոլետարիատի և զյուդացիության փոխարաբերությունները։ Իսկ հատկապես նման մեխանիստական փոխադրություն կատարում է Բուխարինը, Հայտարարելով, վոր «մեզ մոտ սացիալիստական հեղափոխությունը նշանակալից չափով հենցում ե» հենց այդ զուգորդման վրա, վոր այդ զուգորդումը «սոցիալիստական հեղափոխության ծալալման հիմք ե հանդիսանում մեր յերկրում», և նա կարծում է, վոր զա «պետք է շարունակվի ու պահպանի, ինչպես ել վոր լինի»*):

Բուլվարինին այդպիսի ուղղութունիստով առ առություն հարկա-
վոր եր, վորպեսզի ամրապնդի աջերի պայքարն ընդդեմ ինդուստրաց-
ման, կուլեկտիվացման, խորհրդանունառությունների շինարարության, ընդ-
դեմ կուլակության լիկվիդացիայի, ընդդեմ կուսակցության գլխավոր
գծի:

Յուրաքանչյուր տեսության ճշտությունը վերջին հաշվով տառակ-
վում և կյանքում։ Գյուղի կենտրոնական դեմքն այժմ կոլտնտեսականն
ե և վոչ թե միջակը—չքավոր, միջակ, անհատական տնտեսությունը
դարձել է յերկրորդական հաց արտադրողը։ 1932 թվի գարնանացանի
80%-ը կատարել են խորհանություններն ու կոլտնտեսություն-
ները։ Այն ժամանակ, յերբ կուսակցությունը կուլակության
դիմ մղվող կատաղի պայքարում իրազործում և չքավոր-
միջակ տնտեսությունների կունկտիվացումը և կիրառում և կու-
լակության լիկվիդացիան, համառարած կունկտիվացման հիման
վրա, բուսաբրինի կարծիքով անհրաժեշտ ե, ինչպես ել վոր իր-

^{*)} Бухарин — Полит. Завещание Ленина.

նի, շարունակել գյուղացիական պատերազմի զուգորդումը պըռոլետարքական հեղափոխության հետ։ Միայն պայքարելով կոլտնտեսական-խորհութեան հետական շինարարության բարձր տեմպերի դեմ, բացասելով գյուղի արագ սոցիալիստական վերակառուցման անհրաժեշտությունը, կարելի լիիներ հանդել նման տեսության, վորի միակ իրական նշանակությունն է—ծառայել կուլակացն տարրերին՝ սոցիալիստական շինարարության դեմ նրանց մղած պայքարում։

Առաջին հայացքից կարող ե թվալ, վոր ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հարցում աջերը տրոցիկստներից հակառակ դիրք են բանում — տրոցիկստները բացասում են այդ հնարավորությունը, իսկ աջերը վոչ մի տեղ, բերանացի կամ դրավոր, դրամակին չեն հայտարարել և ընդունել են սոցիալիզմի կառուցման հնարավորությունը։ Սակայն այնքի դիրքի նման զնահատությունը սխալ կլիներ։ Իրականության մեջ աջերը, ձեւականորեն ընդունելով սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը ԽՍՀՄ-ում, չեն ընդունում պայքարի այն ուղիներն ու մեթոդները, առանց վորոնց հնարավոր չեն սոցիալիզմի կառուցումը։ Ընկ. Ստալինը 16-րդ կուսամագումարում զեկուցման մեջ նշեց, «նրանք (աջ ուկլոնիստները, խմբ.) չեն ուղում ընդունել, վոր ինդուստրիայի բովանդակ զարգացումն ժողովրդական ամբողջ տնտեսության սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու բանալին ե։ Նրանք չեն ուղում ընդունել դասակարգային անհաշտ պայքարի անհրաժեշտությունը կապիտալիստական տարրերի դեմ և սոցիալիզմի ծավալուն հարձակումը կապիտալիզմի վրա։ Նրանք չեն հառկանում, վոր այդ բոլոր ուղիներն ու միջոցները ձեռնարկումների այն սիստեմն են, առանց վորոնց հնարավոր չե պահպանել պըռոլետարիատի դիմատուրան և սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում։ Նրանք կարծում են, վոր սոցիալիզմ կարելի յե կառուցել սուս ու փուս, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի, առանց հարձակման՝ կապիտալիստական ելեմենտների վրա։ Նրանք կարծում են, վոր կապիտալիստական ելեմենտները կամ իրենք իրենց աննկատելիութեն կմահանան կամ կներաճեն սոցիալիզմի մեջ։ Եել վորովհետեւ այդպիսի հրաշքեր պատմության մեջ չեն պատահում, ապա զուրբ ե գալիս, վոր աջ ուկլոնիստները զործնականում դլորվում են դեպի այն տեսակետը, վորը ժիստում ե սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում»^{*)}։

Ստալինի նման յեղակացությունն յուրաքանչյուրի համար հասկանալի կը առնա, յեթե ըմբռնեն թե ինչ ե նշանակում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության ձեւական ընդունումն աջերի կողմից։ Աջերի

^{*)} Ստալին—Լենինիզմի հարցերը, ոգեկուցում 16-րդ համագումարում։

կողմից սոցիալիզմի հաղթանակի հնարավորության ընդունումն արտաքակտ ե. նրանում չկա այն նյութական-դասակարգային հեղափոխական բովանդակությունը, վորը լենինյան ուսմունքի վողին և հանդիսանում : Արտարակտ ձևական ընդունումն ընդունում չէ: Հեղափոխական դասակարգային բովանդակության վիխարեն նա լեցված ե ուրիշովորտունիստական բովանդակությամբ և հետևաբար համապատասխանում ե կուլակության շահերին: Աջերը յենում են կազմակերպված կապիտալիզմի տեսությունից, վորն ամբողջությամբ հակասում ե կապիտալիզմի կործանման մարքությունյան տեսությանը և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման լենինի ու Ստալինի ուսմունքին: Փոխանակի ինդուստրացման բարձր տեմպերի հիման վրա, կուլակության դեմ ժղվող պայքարի և մանր ապրանքային արտադրողի ապրանքային-կապիտալիստական տենդենցիների հաղթահարման հիման վրա, մեր եկոնոմիկայի սոցիալիստական վերահասուցման հեղափոխական ուղիների, նրանք փորձում եյին մեզ զլորել «ինքնառություն» ուղին: Երբ արդեն զոյլություն ունի պրոլետարիատի դիկտատորաքաղաքանությունը ապա նրանց կարծիքով, սոցիալիզմն աճում ե խաղաղ, ինքնառություն կարգով: Սոցիալիզմի կառուցման և դասակարգերի վոչնչացման հեղափոխական տեսության փոխարեն աջերը հորինել են ձևափոխման (Երանչօրմանական) պրոցեսի տեսությունը, վորի համաձայն կապիտալիզմը խաղաղ կերպով ներածում ե սոցիալիզմի մեջ: Աջերը չեյին ընդունում եյությունն ու արությունն այն ներքին հակասությունների, առանց վորոնց հաղթահարման հնարավոր չե ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելը, և կանգնել եյին սոցիալիզմի կառուցման լենինյան տեսության դեմ պայքարելու ուղիների վրա, կուսակցության գլխավոր զծի զեմ պայքարելու ուղիների վրա: Այդ ասպարիդում նրանք անխուսափելիորեն պետք ե միալորդեյին ինչպես տրոցկիստների, նույնպես և վնասարարների հետ: Իրենց ցուցմունքներում վնասարարներն ուղղակի հայտարարեցին, վոր իրենք հենվում եյին ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտման ինչպես տրոցկիստական, նույնպես և աջ ուղղորդունիստական տեսակետների վրա:

Միայն անհաջող պայքար մղելով աջ թեքման դեմ տեսության մեջ ու զործնականում և նրա վերաբերմամբ ամեն տեսակ հաշտությանության դեմ, կուսակցությունը կարողացավ ձեռք բերել այն վիթխարի հաջողությունները, վորոնց հիման վրա մենք թեակոխել ենք սոցիալիզմի շրջանը և վերջնականացես հաստատվել սոցիալիստական ուղու վրա: Յեվ միայն այդ հիման վրա մենք կարողացանք հասնել այն ժամանակաշրջանին, յերբ սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցը լուծվել և վոչ միայն տեսականորեն, այլև դործնականապես: Սոցիալիզմի հաղթանակի հարցը լուծված և ԽՍՀՄ-ում սոցիա-

վիդմի հաղթունակն աղահովված ե , թեև լիակատար սոցիալիստական Հասարակություն կառուցելու համար , ինչպես այդ մատնանշված ե մեր կուսակցության 17-րդ կոնֆերանսի վորոշումներում , մեղ դեռ անհրաժեշտ ե դասակարգային սուր պայքարի բովում հաղթահարել ինչպես ներքին , նույնպես և հասկապես՝ արտաքին դժվարություններ :

II. ԽՍՀՄ-ի ԵԿՈՆՈՄԻԿԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

ԽՍՀՄ-ի եկոնոմիկան ներկայացնում է իրենից անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի կոնկրետ տիպար : Նա հիմնված ե «Ճնշող սոցիալիզմի» և պարտված , բայց դեռ ամբողջությամբ չվոչնչացված կապիտալիզմի» (Անին) պայքարի վրա : Մեր խողիքն ե —ԽՍՀՄ եկոնոմիկայում հայտնաբերել այն առանձնահատուկը , յուրահատուկը , ինչ բնորոշում է սոցիալիզմի կառուցման կոնկրետ ձևերը մեր յերկրում :

Խորհրդային եկոնոմիկան իրենից ներկայացնում է բազմազան , տնտեսածեների (յուլած) զիալեկտիկական միասնություն սկսած բնամատեսությունից և վերջացրած սոցիալիստական (տնտեսածենով : Անինը , բնութագրելով մեր յերկրի տնտեսակարգի առանձնահատկությունը 5 տնտեսածեն (յուլած) և սահմանում . . . նահապետական — այսինքն՝ նշանակալից չափով նատուրալ գյուղացիական տնտեսություն , մանր-ապրանքային արտադրություն , մասնավոր սեփականական կապիտալիզմ , պետական կապիտալիզմ և սոցիալիզմ :

Տնտեսածեն (յուլած) առելով մենք հասկանում ենք արտադրության վորոշ ձև , արտադրական հարաբերությունների վորոշ տիպ : Սահմանելով հինգ տնտեսածենը (յուլած) Անինը միաժամանակ նշում է , վոր նրանցից հիմնականները յերեք են . . . սոցիալիստական , մանր-ապրանքային և կապիտալիստական : Այսպիսով , յեթե պարզեցնենք ԽՍՀՄ տնտեսածենը մանրամասն սխեման , յեթե կտրվենք պետական կապիտալիստական տնտեսածենից (յուլած) կոնցեսիաները , վարձակալություն և այլն) , վորն ըստ արտադրական հարաբերությունների տիպի չի տարբերվում մասնավոր կապիտալիստականից , և կորպենք նատուրալ տնտեսությունից , վորը սերտորեն միայնուավում և խմենք-ապրանքային սեկտորի հետ , ապա խորհրդային եկոնոմիկան հիմնական բնութագրող հիմնական տնտեսածենը կմնան՝ սոցիալիզմը , կապիտալիզմը և մանր-ապրանքային արտադրությունը :

Սակայն սխալ կլիներ խորհրդային եկոնոմիկան համարել վորոշեատարքը տնտեսածերի (յուլած) պարզ համակեցություն և կամ թե վորպես միայն այդ տնտեսածերի «փոխներգործություն» : Անհրաժեշտ ե սահմանել , թե ի՞նչն է հանդիսանում այդ «փոխներգործություն» բնույթի վորոշիչը և կամ հիմնականը :

Մենք վոչինչ չենք հասկանա խորհրդային եկոնոմիկայից , յեթե

Հաստատ կերպով չյուրացնենք այն դրությունը, վոր խորհրդային եկո-
նոմիկայի զարգացման վորոշիչ և վճռական հիմքը հանդիսանում է
պղողետարիատի դիկտատորան և նրա տնտեսական-պատվանդան սոցիա-
լիստական սեկտորը: Պրոլետարիատի դիկտատորայի հիմնական խնդիրը
կայանում է նրանում, վոր սոցիալիստական հանրայնեցման հիման վրա
հետևողականորեն իրադրությունը արտադրողական ուժերի աճը, այսինքն
սոցիալիզմի կառուցումը: Սոցիալիզմի կառուցումը զասակարգերի
վոչնչացումն է: Դասակարգերը վոչնչացնելու համար անհրաժեշտ է
վոչնչացնել տնտեսաձևերի բարդ «մողայիկան» (վորոնց հետևում կանգ-
նած են դասակարգերը) արտադրության սոցիալիստական ձևերի հե-
տեւղական կաղմակերպությամբ:

Իրա համար ել սոցիալիստական շինարարության պրոցեսն ընթա-
նում է սուր դասակարգային պայքարի և կապիտալիստական տարրերի
կատաղի դիմադրության պայմաններում: Անհեթեթություն կլիներ սո-
ցիալիստական շինարարության պրոցեսը պատկերացնել խաղաղ համա-
կեցության ձևով, սեկտորների «հավասարակշռությամբ», ինչպես այդ
անում են աջ ուկրնիստաները:

Սեկտորների «հավասարակշռության» այդ աջ ուկրնիստական տե-
սության անհեթեթության սպառիչ բնութագիրը տվել է ընկ. Ստալի-
նը: «Ըստ այդ տեսության յենթագրվում է, վոր մենք ունենք, նախ և
առաջ, սոցիալիստական սեկտոր, վոր դա յուրատեսակ մի արկղ է, և
ապա՝ բացի դրանից մենք ունենք վոչ սոցիալիստական, յեթե կուղեք՝
կապիտալիստական սեկտոր, և վոր դա մի ուրիշ արկղ է: Այդ յերկու
արկղն ել դրված են տարբեր ուղղերի վրա և խաղաղորեն առաջ են դուր-
վում՝ իրար չկպչելով: Յերկրաչափություննից հայտնի յե, վոր զուգա-
հետական գծերը չեն հառվում, իրար չեն հանդիպում: Սակայն այդ
նշանագոր տեսության հեղինակները կարծում են, թե իրենց այդ զու-
գահեռականները յերբեք կհանդիպեն իրար, և յերբ նրանք իրար կհան-
դիպեն, մեղանում սոցիալիզմ կստեղծվի: Ընդ սմին հիշալ տեսությունն
աչքաթող ե անում վոր այդ՝ այսպես կոչված «արկղների» հետեւութ-
կանդնած են դասակարգերը, իսկ այդ «արկղների» շարժումը տեղի յի
տեսնում դասակարգային կատաղի պայքարի կարգով, կյանքի և մահ-
վան պայքարի կարգով՝ «ով ում» սկզբունքով*):

«Ով-ում» լենինյան Փորմուլան դասական պարզությամբ արտա-
հայտում է սոցիալիստական շինարարության պրոցեսի ամբողջ առանձ-
նահատկությունը, վորը և սեկտը և դնել տնտեսաձևերի և խոր-
հրագային եկոնոմիկայի դարձացման կոնկրետ վերլուծության հիմ-
քում: Միայն այդ հիման վրա կարող են հասկանալ լինել տնտեսա-

*) Ստալին.—Լենինիզմի հարցերը, եջ 633 (հայերեն):

ձեւերի (յ ւ լ ա ծ ա յ) միջն յեղած փոխհարաբերությունները դեպի սույնալիզմ տանող առաջադիմական շարժման տարրեր ետապներում :

Խորհրդային Սկզնումիկայի մասին, ամբողջությամբ վերցրած, Հիմնավորված յեղբակացություններ անելու համար նախորոք տանք Հիմնական տնտեսաձեւերի վերլուծությունը և առաջին հերթին սոցիալիստական սեկտորին, վորապես առաջատար զեկավարող, իսկ ժամանակակից ետապում՝ Հիմնովին դերակշռող սեկտորի՝ խորհրդային եկոնոմիկայում :

Սոցիալիստական սեկտորը :—Սոցիալիստական սեկտորը հանդիսանալով պրոլետարիատի գիկտասուրայի տնտեսական բազան, հանդեռ և գալիք վրապես ներգործման զենք ամբողջ անցման եկոնոմիկայի զարգացման համար՝ դեպի սոցիալիզմ տանող ճանապարհին : Զնայած նրան, վոր սոցիալիստական սեկտորը հանդեռ և գալիք վրապես մեր եկոնոմիկայի միասնական դեկալար սեկտորը, մենք պետք ենք ներում տարրերներ յերկու հիմնական ստորաբաժնումներ —պետական և կոոպերատիվ ձեռնարկություններ :

Առաջին խումբը —դա հետևողական սոցիալիստական տիպի ձեռնարկություններն են : Այստեղ մտնում են պետական արդյունաբերությունը, տրանսպորտը, խորհունակությունները — պրոլետարիատի գիկտասուրայի պետության գլխավոր հրամանատարական բարձունքները : Մրանց պետք են կցել նաև այնպիսի հրամատարական բարձունքներ, պրոլետարիատի գիկտասուրայի տնտեսական լծակներ, վորովնք թեև անմիջապես արտադրական ձեռնարկություններ չեն հանդիսանում, առաջայն հակայական նշանակություն ունեն . . . հողի ազգայնացումը, արտաքին առևտորի մոնոպոլիան, դրամական և վարկային սիստեմը, պետական բյուջեն : Հենվելով անտեսական այլ լծակների սիստեմի վրա, պրոլետարական պետությունը ծավալում և տնտեսության սոցիալիստական ձեւերը, վերակառուցելով մանր-ապրանքայինը և սահմանափակելով ու լիկվիդացիայի յենթարկելով . կազիտալիստականները :

Յերկրորդ խումբը ներկայացնում են արտադրության և շրջանառության կոոպերատիվ-սոցիալիստական ձեւերը, սկսած ստորին վառառահանման-մտակարարման կոոպուլերատիվներից և վերջացրած կոլտնտեսություններով-կոոպերատիվ միավորման բարձրագույն ձևով :

Մեր պետական ձեռնարկություններն արտադրության հետևողական սոցիալիստական տիպ են ներկայացնում «ուր չկա շահագործում, ուր արտադրության միջոցները պատկանում են բանվոր դաստիարակին և ուր ձեռնարկություններն աշխատում են վոչ թե ուրիշ դաստիարակի համար, այլ արդյունաբերության ընդլայնման նպատակով բանվո-

բության համար ամբողջությամբ վերցրած» (Ստալին): Դրա համար ել կենինը մեր պետական ձեռնարկությունները կոչել ե հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկության տիպը վորոշվում ե դեպի արտադրության միջոցներն ունեցած մարդկանց հարաբերությամբ: Մեր պետական ձեռնարկությունները պրոլետարական պետության սեփականությունն են, արտադրության պրոցեսում այստեղ հանդես չեն դալիս յերկու հակամարտ դասակարգեր և դրա համար ել պետական ձեռնարկություններն խական-սոցիալիստական ձեռնարկություններ են: Միանդամայն խեղաթյուրումն ե լենինյան ձեակերպման տրոցկիստական-ղինովյեվական մեկնաբանությունն այն մաքով, վոր պետական ձեռնարկությունները դեռ պետք ե «Հետեւեն», «աճեն» սոցիալիստականի: Մեր ձեռնարկությունները դիտելով վորպես պետական-կապիտալիստական ձեռնարկություններ, վորոնք դեռ պետք ե վերաճեն սոցիալիստականի, հակահեղափոխական տրոցկիստական-ղինովյեվական ոպոզիցիան ամբողջությամբ գլորվել ե 2-րդ ինտերնացիոնալի դիրքերը, վորի առաջնորդները ժխտում են մեր ձեռնարկությունների սոցիալիստական բնույթը:

Ոպոզիցիայի այդ տեսակետն ամենից ավելի «հիմնառվոր» ձեակերպում ստացավ կամենելի ճառում 14-րդ կուսհամագումարում, ուր նա ասաց — «Լստ սեփականատիրության հարաբերության նրանք (պետական ձեռնարկությունները—լիմք.) սոցիալիստական են, ըստ մարդկանց հարաբերության—դեռ վոչ»: Այդ սեփականատիրության հարաբերությունների հակադրումը մարդկանց միջև յեղած հարաբերություններին վոչինչ ընդհանուր չունի մարքսիզմ-լենինիզմի հետ: Զե վոր սեփականատիրության հարաբերությունները մարդկանց մեջ յեղած հարաբերություններն են, և վոչ թե մարդկանց հարաբերությունները դեպի իրերը: Մարքսն արտադրության յեղանակները տարբերում են նայած նրան, թե վոր գասակարգերի ձեռքում են գտնվում արտադրության միջոցների սեփականությունը:

Քանի վոր մեր ձեռնարկությունները պրոլետարական պետության սեփականությունն են հանդիսանում, իսկ մեր պետությունը հանդիսանում ե «պրոլետարիատը կաղմակերպված վորպես տիրապետող դասակարգ» (Լենին), ապա դրանով իսկ բնորոշվում ե պետական ձեռնարկությունների սոցիալիստական տիպը: Մեր պետական արդյունաբերության մեջ ներկայացված են վոչ թե յերկու թրչնամի դասակարգեր—պրոլետարիատը և բուրժուազիան, այլ մեկ դասակարգ—պրոլետարիատը» (Ստալին): Ի բնե գոյություն չունի այնպիսի պետական կաղմականություն, ուր արտադրության պրոցեսում հանդես չդան յերկու հակամարտ դասակարգեր—կապիտալիստը:

Իր դրույթների պաշտպանության համար ուղղվցիսան բերում եր նաև Հետեւյալ ժնկատառումները՝ — 1) Պետական ձեռնարկություններում կառավարվողների և կառավարողների առկայությունը; 2) Հին կապիտալիստական ձեռքի առկայությունն (աշխատավարձ, վող, վարկ և այլն): Իրական զրության վերլուծման դեպքում հայտնաբերվում ե այդ պատճառաբանություններիք սնանկությունը:

Ամենից առաջ պետական արդյունաբերությունը կառավարող որդանները պրոլետարիատի դիկտատուրայի պետության որդաններն են, իսկ զրանց հակագրել պրոլետարիատին վորպես դասակարգի, չեկարելի, վորովհետեւ նրանց շահերը միասնական են: Բացի դրանից պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրներից մեկն ել կառավարողների և կառավարվողների բաժանման վոչնչացումն եւ Յեվ այդ խնդիրը ժամանակակից ետապում, արդեն մասամբ լուծվում եւ բավարկան են չեղել ժամանակակից սոցիալիստական պրակտիկայից այնպիսի փաստեր, ինչպես հանդիպական պլան, բրիդադային տնտեհաշվարկ, սոցիալիստական համատնդողների սիստեմ, դործարան-բառուները և այլն: Այդ բոլորը բավականաչափ հիմք են տալիս պնդելու, զոր հակահեղափոխական արոցիկողմը արտաքին ձեւական նմոնության յետեւմ ուրիշ բան չի տեսել, բայց յեթև միայն կապիտալիստական կարգերին բնորոշ ժամանակվա պետական ձեռնարկությունների դաստիարակյին եյությունը:

Այսուհետեւ բանվորի ստացած աշխատավարձը, հանդիսանալով անհատական սպառման ֆոնողը, իհարկե, դործադրած աշխատանքի լիտեկատար հատուցումը չեւնրա մի մասը զնում ե գողովրդական տնտեսության ընդլայնված սոցիալիստական վերաբարությանը, մի բան, վորը զաւադիպում ե պրոլետարիատի շահերին, վորովհետեւ ուղղված ե բարձրացնելու նրա նյութական և կուլտուրական բարեկեցությունը: Գործադրած աշխատանքի լիակատար հատուցումը, անհատական սպառման ձեռով, չի լինի նաև կոմունիստական հասարակության մեջ, քանի վոր վորպեսզի հասարակությունը զարգանա, վերըստադրվի ընդլայնված հիմունքներով, դրա համար անհրաժեշտ ե, վոր հասարակական արդյունքի մի մասը ծախսի այդ ընդլայնման վրա: Ինչ վերաբերություններին, վողին, վարկին և այլն, ապա պրոլետարիատի դիկտատուրայի որոք առասարակ և մասնավորապես պետական ձեռնարկություններում այդ բոլոր կատեղորիաները սկզբունքորեն ուրիշ եյություն ունենք չեն արտահայտում շահագործման հարաբերություններ և ծառայում են վորպես զենք սոցիալիստական սեկտորի ձեռքում՝ ընդդեմ կապիտալիզմի:

Անցնելով սոցիալիստական սեկտորի յնը բորդ խմբին—կոռպե-

բատիվ սոցիալիստական տիպի ձեռնարկություններին, անհրաժեշտ ենդգծել, վոր բացարձակապես հնարավոր չեն նրանց քննարկել պրոլետարիատի դիկտատուրայից և տիրապետող տիպի արտադրական հարաբերություններից կորված, անկախ այն սոցիալ-տնտեսական պարագաներից, վորոնց մեջ նրանք զոյլությունն ունեն:

Այդ առթիվ բուրժուական ռեստավրացիայի հայտնի իդեոլոգ վնասարար Զայանովը գրել է. «Մեզ թվում ե, վոր կոռուպերացիան իրենից ներկայացնում ե... առանձնահատուկ ժողովրդա-տնտեսական սխտեմ, ժողովրդական տնտեսության զարդացման նոր ձև»: Մենչեւիկ ինտերվենտները, վնասարարներ, Գրոմանն ու Բաղդառովը նույնպես խսում են կոռուպերացիայի «ինքնանկախության» և առանձնահատուկ «կոռուպերատիվային տնտեսության» մասին: «Կոռուպերատիվային սոցիալիզմը» վնասակար, բանվոր դասակարգին խորթ գաղափարախոսություն ե, վորի հիմքում ընկած և դասակարգային պայքարի ժխտումը և խաղաղ հանուղարձով կապիտալիզմին հաղթահարելու հնարավորությունը: Լենինը կոռուպերատիվ ձեռնարկությունները դիտում ե վոչ թե վորպես ինքնապարփակ մեծություն, վորանո ժամանակից և տարածությունից դուրս գոյություն ունեցող ձեռնարկություններ, վոչ թե վորպես կոռուպերատիվային ձեւեր բնդհանրապես, այլ կոռուպերացիան այն տնտեսակարգի կապակցությամբ, վորի մեջ նա զոյլությունն ունի: Միայն այդ կապակցությամբ վերցրած՝ կոռուպերացիան ստանում է իր սոցիալ-տնտեսական բնութագրությունը: Լենինը վճռականորեն պայքարում էր «կոռուպերատիվային սոցիալիզմի» տեսության դեմ, ընդգծելով «կոռուպերացիայի կապիտալիստական բնույթը կապիտալիզմի ժամանակ»: Կոռուպերացիան կապիտալիստական հիմնարկությունը մերն ելումքը:

Պրոլետարիատի գիկուտառուրայի պայմաններում կոռուպերացիան այլ սոցիալ-տնտեսական բնութագրությունն է ստանում: Յերբ արդեն ողետական իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքում, յերբ շահագործողների քաղաքական իշխանությունը տապալված է և, յերբ արտադրության բոլոր հիմնական միջոցները դտնվում են բանվոր դասակարգի ձեռքին, ապա «մենք այժմ իրավունք ունենք ասելու, վոր կոռուպերացիայի համարակ աճումը մեզ համար նույնանիշ ե... սոցիալիզմի աճման հետ»⁵⁸: Մեր պայմաններում կոռուպերատիվային միավորումները գտնվում են սլրուետարական պետության պլանային ներգործման տակ: Դրա համար ել լենինը կոռուպերացիայի հասարակ աճումը մեր պայմաններում նույնանիշ եր համարում սոցիալիզմի աճման հետ:

⁵⁸⁾ Собр. соч. т. XVIII. статья о кооперации.

զիոլոնասությունները վորապես տնտեսության տիպ, սոցիալիստական տնտեսության ձևերից մեկն են : Այդ բանում վոչ մի կասկած չի կարող լինելը (Ստալին) : Սակայն տարրերվո՞ւմ են նրանք արդյոք հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններից ,վորոնց մասին մենք յերեւում խռովացինք, որինակի համար խորհութեաններից : Անկասկած տարրերվում են : Առաջին նրանով, վոր արտադրության միջոցների հիմնական մասը հանրայնեցված է խմբական սեփականության հիման վրա և պատկանում է կոլտանտեսականների տվյալ կոլեկտիվին և կոլտնտեսության յեկամուտն անցնում է կոլտնտեսության անդամների և վոչ թե ամբողջ սեփականության տրամադրության տակ : Յերկրորդ նրանով, վոր կոլտանտեսություններում գոյություն ունի գույքային անհավասարություն : Պետական ձեռնարկություններում նույնպես անհավասարություն կա, սակայն այնտեղ՝ այդ անհավասարությունը բղինում է աշխատանքի տարրեր վորակավորումից : Խսկ կոլտանտեսություններում, հատկապես նրա ստորին ձևերում, անհավասարությունը բղինում և նաև գյուղանտեսություն մանելիս մուծած փայտավճարի անհավասարությունից և այն զանազանությունից, վոր բղինում և այս կամ այն միջակի և չքավորի մոտ մնացած անհատական տնտեսության չափից :

Այսպիսով, կոլտնտեսությունները լինելով սոցիալիստական տիպի տնտեսություններ, հետեղական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ չեն : Հետեղական-սոցիալիստական տիպի ձեռնարկությունների և կոլտնտեսությունների միջև մենք դժոնում ենք և միասնություն (սոցիալիստական տիպը) և տարրերություն (կոլտնտեսությունները հետեղական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ չեն) : Սակայն չպետք է այնպես կարծել, վոր նրանց մեջ այդ տարրերությունը միշտ պիտի մնա : Պարզ է, վոր կոլտանտեսությունների դարձացման հետ զուգընթաց նրանց և հետեղական սոցիալիստական տիպի ձեռնարկությունների միջև յեղած տարրերությունը կհարթվի : Անձեռնմխնկի ֆոնդի մեծացումը, արտադրության միջոցների հանրայնեցման ընդարձակումը, տեխնիկական բազայի վճռական մասումը և դրա հիման վրա տնտեսության խոչըրացումը, պետական սոցիալիստական տնտեսության մասնավորապես ՄՏ կայանների հետ կապի ամրացումը—այս բոլորը տանըում են գեղի տարրերությունների վոչնչացումը կոլտնտեսությունների և հետեղական-սոցիալիստական ձեռնարկությունների միջև : Կոլտնտեսական շինարարության պրոցեսը սեփականատեր—գյուղացուն սոցիալիստական աշխատողի վերածելու պրոցեսն ե՞» :

* ՆԱ. ՌԹ. ԱՄԲ.—Խոսելով կոլտնտեսությունների և հետեղական սոցիալիստական տիպի մասնեսությունների մեջ յեղած տարրերության վերցման մասին, հեղինական անտեսությունների և հերսում գոյություն ունեցող գասակարդային պայքարի արտանայտությունները, կոլտնտեսությունների շահերը.

Հակահեղափոխական տրոցկիզմը ժխտում է կոլտնտեսությունների ասցիալիստական բնույթը: Այսպես, Տրոցկին գրում է. «Ներկա արտապրության միջոցների գոյության պայմաններում ապրանքային տնտեսության պայմաններում, կոլեկտիվներն անխուսափելիորեն կարտադրեն դյուզացի շահագործողների նոր շերտ: Կոլտնտեսությունները սոցիալիստական ձեռնարկություններ հայտարարելով, ներկա դեկավարությունը դրանով իսկ ապահովում է ներկոլտնտեսական կուլակների քաղետության հակադեմիան հակադեմիա և կոլտնտեսական շինարարության պրոցեսի ներկա ետապի կենտրոնական խոդիր հանդիսացող (հիմնական արտելային ձեր հիման վրա) նրանց կազմակերպչական-տնտեսական ամրացման շարքը տեղի ունեցող դասակարգային պայքարը՝ դասակարգային թշնամու յև նրա ազնատուրայի դեմք: Եթե յերանակավորումներով:

Հայտնի յեր զոր գյուղում մեր դասակարգային թշնամին՝ կուլակությունը, յեթե առաջին ցրանում իր պայքարը կոլտնտեսությունների դեմ խոչը շափով ուղղում եր գորպեսզի շքավորին և միջակին յետ պահի կոլտնտեսությունը մտնելուց, ապա այժմ նա իր գիմադրությունը գերազանցապես ուղղում է այն բանի դեմ, զոր չթույլարի կոլտնտեսությունների ամրապնությունը, ներքուառ պայքեցնի այն թվինք այդ պայքարի արտահայտության գլխավոր ձևի հերից մի քանիսը:

Լ Կուլակի ամենից առաջ ձգտում է հակադրել կոլտնտեսությունների շահարը պրոլետարական պետառթյան շահարին, հացամթերումների, ցանքային կամունիաների, գետով և այլն:

2. Ամեն կերպ ոգտագործում է կոլտնտեսությունների առանձին սետալները և թերությունները՝ կոլտնտեսական աշխատանքի աճողջ սիստեմը արատագրելու նրա ահասարակ անձնանտու լինելու ապացուցելու համար:

3. Փորձում են, հենքերով կոլտնտեսական մասսայի հետամեաց խափի վրա, արգելք հանդիսանալ դիմացրկության վեցացմանը, ներքուստ խափանել այն բոլոր ձեռնարկութերի հաջողությունը, վորոնց նպատակն ե ամրապնել աշխատանքի դիսցիլինան, ապահովել կոլտնտեսականների վերադաստիարակումն գործի արագ ընթացքը արժատավորել սոցիալիստական վերաբերմունքը հանդեպ աշխատանքի արտադրության միջոցները և այլն:

4. Նա փորձում է կոլտնտեսական մասսայի հետամեաց շերտերի միջոցավ հրահըել «Ճախի» հավասարեցման տեսքնենցների ծավալումը կոլտնտեսություններում, ամեն կերպ խանդարել աշխատանքի վարձատրությունն ըստ աշխատանքի քանակի և վորակի միակ ճիշտ սկզբունքի արժատավորմանը, ձգտելով այդ ճանապարհով արգելակ դառնալ աշխատանքի արտադրողականության և բերքատվության բարձրացման կարեռագույն գործի հաջող լուծմանը կոլտնտեսություններում: Չեսենել գտառակազմակային պայքարի և դասակարգային թշնամու վոտնագությունը և գիմադրության այդ հիմնական յերանձավորութենքը կոլտնտեսություններում, սկսակերպարել կոլտնտեսության հետևողական-սոցիւրիստական տիպը՝ ձեռնարկություն դառնալու պրոցեսը «խորոշության» ճանապարհով և առանց դասակարգային պայքարի կատար զոր մի պրացիս այդ նշանակում ե ըստ ելության չափանել կոլտնտեսությունների հետեւմ, այս առեղ ու այնտեղ մասամբ նաև կոլտնտեսություն խցկած գոտտեկարգային թշնամուն և նրա գործակալներին, և յելնել կոլտնտեսականին իդեալիզացիայի յենթարկելու այն անուշ՝ ըստ ելության աջ ուղղությունիստական զրություն, վորի համաձայն կոլտնտեսական այսոր արդեն հարցերի և իր դասակարգային գեմքը, և նա կոլտնտեսությունն մանելով սոցիալիստ և դառնալում:

զարկումը : Հենինի համար կոլանտեսական շարժման աճումը նույնանից և սոցիալիզմի աճմանը, հակառեղափոխական արոցիզմի համար կոլանտեսությունների աճումը նույնանից և կապիտալիզմի աճման :

Աջերը յենթադրում են, վոր մանր-ապրանքային արտադրությունը և կապիտալիզմը «կներածն» սոցիալիզմի միջի ։ Նրանք ժխտում են կոլանտեսական շինարարության ծավալման անհրաժեշտությունը կազիտալիստական ելեմնտների դեմ պայքարի հիման վրա, ժխտում են պրոլետարական դեկավարության անհրաժեշտությունը կոլտնտեսություններում :

Մանր-ապրանքային տնտեսաձևը : Նատուրալ և մանր ապրանքային տնտեսությունները՝ տնտեսության մինչ կապիտալիստական տիպեր են : Նատուրալ տնտեսություն համարվում և այն տնտեսություն, վորն արտադրում և սեփական սպառման և վոչ թե շուկայի համար : Զուտ նատուրալ տնտեսություններ մեզանում այսոր արդեն չափազանց հազվագետ են : Սակայն մեծ զանդվածով գոյություն ունեն այնպիսի տնտեսություններ, վորոնց արտադրանքի ապրանքայինությունը շատ փոքր և : Կապիտալիզմի պայմաններում նատուրալ տնտեսության զարգացման բնական ուղին, —դա, ապրանքայինության զարդարման միջոցով նրա վերածումն և մանր-ապրանքային տնտեսության և նրա հիման վրա նրա քայլայումը : Մեր պայմաններում տըսնանության նատուրալ ձևը, սոցիալիստական սեկտորի ներգործման առել, առանց անցնելու զարգացման կապիտալիստական ուղին կարող և վերակառուցվել սոցիալիստականի : Նահապետական տնտեսաձևը բավականին տարածված եր նախկին ցարական Ռուսաստանում (հետամնաց ժողովուրդները) :

ԽՍՀՄ-ում կոլեկտիվացման քաղաքականության հետ կապված պրոլետարական պետության վարած ազգային քաղաքականության շնորհիվ (հետամնաց ժողովուրդների տնտեսական և կուլտուրական վերելքը) նահապետականության մնացորդներն արագ կերպով վերանում են :

Մանր-ապրանքային արտադրությունը կապիտալիստականից տարբերվում և նրանով, վոր այստեղ, արտադրության պրոցեսում հանդեռ չեն գտնիս յերկու հակամարտ գասակարեր . արտադրողը բաժանված չե արտադրության միջոցներից . նա արտադրության միջոշների սեփականատերն է : Սակայն մանր-ապրանքային արտադրությունը կապիտալիստականի հետ նույնանից վկնելով, «իր հիմքում նույնատիպ և կապիտալիստական տնտեսության հետ, վորովհնտեւ հենվում և արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա» (Ստալին) : Հատկապես դրանով և բացարկում, վոր քմանր արտադրությունը մշտապես,

ամեն որ, ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական մասշտաբով՝ պաղիտալիդմ ե ծնում» (Լենին) :

Մանր ապրանք-արտադրողների հիմնական գանգվածը գյուղացիությունն է: Մանր-ապրանք արտադրողներին ևն պատկանում նույնպես անայնակործները և արհեստավորները: Մանր-ապրանքային արտադրությունը թվով զերակշռում եր մեր զարգացման առաջին ետակներում: Մանր-ապրանքային տնտեսությունը արտադրության այնպիսի ձեւ չե, վոր ընդունակ լինի ինքնուրույն կերպով գոյություն ունենալու, չնթարկվելով արտադրության առաջավոր ձևերի ներդրությանը Մինչդեռ ոե Փորմիստները (Բերնշտեյնը և ուրիշները) և բուրժուական դարախարախուներ—վնասարարները (Զայանովը, Ջելինցեվը և այլն) փորձում եյին ապացուցել, վոր Մարքսի տեսությունը մանր արտադրության խոչընորի կողմից արտամդվելու մասին, կիրառելի յե միայն արդյունաբերության նկատմամբ, իսկ գյուղատնտեսության վերաբերմամբ գործադրելի չե:

Մանր-ապրանքային արտադրության «կայունության» տեսության փայլուն հերքումը մենք անմիջապես կարող ենք գտնել հասարակական ձևերի զարգացման պատմության մեջ: Նախնական կապիտալիստական կուտակումը կապված ե յեղել մանր-ապրանքային արտադրության ամենանողոք չահագործման (առևտրական, վաշխառվական կապիտալը) և նրա քայլքայման հետ: Սակայն մանր-ապրանքային արտադրության քայլքայման պրոցեսն ամենամեծ ուժով տեղի յե ունենում խոչընոր կապիտալիստական արտադրության զարգացման ժամանակաշրջանում: Այստեղ մանր-ապրանքային տնտեսությունն ամբողջությամբ (չուկայի մըցակցության միջոցով) ընկնում է կապիտալիդմի հրամանատարության տակ, յենթարկվում է ավելի ուժեղ չահագործման և նրա քայլքայման տեմպը նշանակալից չափով արագացվում է: Հասարակական ապրանքային արտադրության քայլքայման այդ պրոցեսը կապիտալիզմի պայմաններում սովորաբար կոչվում է շերտավորում կամ դիֆերենցիացիա: Գյուղացիական տնտեսության քայլքայման պրոցեսը կապիտալիզմի պայմաններում կոնկրետ կերպով կայանում է նրանում, վոր ափոքրածանակ վերնաշերտերը դառնում են կապիտալիստ (կուլակները, վաշխառուները, վերափառողները, գինեպանները և այլն), մնացածները ժամանակ առ ժամանակ վաճառում են իրենց տնտեսության կենդանի և մեռյալ ինվենտարը, նախ իշխում են կիսապրոլետարների դրության և հետո ամբողջովին վեր են ածվում պրոլետարներ—բատրակների» (Լենին):

Կապիտալիզմի պայմաններում գյուղացիության դիֆերենցիացիայի հետևանքը հանդիսանում է միջակի (տարամաշման) (вымывание апартеида и архея и аյդ հիման վրա յերկու, ըստ իրենց դասակարգային չափերի,

Հայրահեղ խմբերի աճումը .—դյուզական բուրժուազիայի (կուտակություն) և բատրակության, չքավորության (կիսապրոլետար—բատրակ գորբիկ հողարածանովը—(Անին): Դյուզացիմիջակը—կենդանի հակառակություն է : Միջակը—կատիտալիզմի և սոցիալիզմի, բուրժուազիայի և պրոլետարիատի միջև առանձինող տարր է . նա յերկյակ և ըստ իր մնույթի : «Դյուզացին վորպիս աշխատավոր ձգովում և դեպի սոցիալզմը, գերադասելով բանվորների դիկտատուրան բուրժուազիայի դիկտատուրայից, դյուզացին վորպիս հաջ վաճառող ձգվում և դեպի բուրժուազիան, ապատ առեւտրին, այսինքն՝ գեղի յետը (Անին): Դրա համար եւ միջակի զասակարգային ինքնուրոցումն անխօսակելիորեն կազմած և տասանումների, սպասումների և չեղոք գիտումների հետ :

Բնորոշելով մանր—աղքանքային տնտեսության բնույթը, Անինը խոսում էր զյուզացիության ապրանքային—կապահայիստական տենդենցիներին ապրանքային վարպետ հակազդություններուն առաջանաւի առաջարկության սոցիալիստական վերակառուցումը ԽՍՀՄ-ի եկոֆամիկայի պայմաններում : Այդպիսի վերակառուցման հնարավորությունը ներկայումս արգեն տեսական դիսկուսիաների ինդիք չէ . այդ հնարավորությունն արգեն իրականություն ե դարձել : Կոլտնտեսություններում համախմբած չքավորմիջակ դյուզացիական տնտեսությունների թիվն (բոլոր աշխատավորական տնտեսությունների) արգեն ընդհանուր քանակի 60 %-ն է կազմում :

Դյուզացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հնարավորությունը բջիջում և արմատական հարցերում պրոլետարիատի և դյուզացիության շահերիք (Ստալին) ընդհանրությունից : Շահերի այդ ընդհանրությունը կայանում է նրանում, վոր թե բանվոր դասակարգը և թե զյուզացիության չքավորմիջակ մասսաները—աշխատավորներ են, այդ եւ կազմում է նրանց դաշների հիմքը : Սակայն հարկավոր է հիշել, վոր նրանց մեջ կա նաև տարբերությունն : Բանվորն՝ ի տարբերություն զյուզացուց՝ արտադրության միջոցների անհատական սեփականատեր չե : Պրոլետարիատի և դյուզացիության միջև այդ նմանությունն ու տարբերությունն ել վորոշում են նրանց դաշների բնույթը : Մեղ հարկավոր է այնպիսի դաշներ, վորի հիման վրա հաղթահարկեր զյուզացիության կատիտալիստական տենդենցը, ամրացվեյին սոցիալիզմի դիրքերը : Իսկ այդպիսի դաշներ հնարավոր չե առանց պրոլետարիատի դեկալար՝ առանց ակտիվ ներգործության՝ դյուզացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գծով :

Այսպիսով, խորհրդային եկոնոմիկայի պայմաններում հնարավոր են մանր—աղքանքային տնտեսության զարգացման յերկու ուղիներ .—

առաջինը՝ տարերային կապիտալիստական, վորը նրան ներքուստ յուրահատուկ է, և վորը «ինքնահոսով» զարգանալու պայմաններում կղառնար իրական, և յերկրորդ՝ սոցիալիստական ուղի, վորը հնարավոր եմիայն պրոլետարիատի ակտիվներում հիման վրա: Գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը հանդիսանում է տարերային-կապիտալիստական տենդենցի դեմ մզվող պայքարի պրոցեսը, հանուն գյուղի պլանային սոցիալիստական վերակառուցման պրոլետարիատի դեկավարությամբ: Մանր-ասլրանքային տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղին տրված է լենինյան կոոպերատիվ պլանով, վորը մեր տնտեսության սոցիալիստական վերակառուցման ընդհանուր պլանի բաղադրիչ մասն է կաղմում:

ՆԵՊ-ի սկզբնական շրջանում գյուղատնտեսության մեջ կենտրոնական դեմքը միջակն եր: Ներկա ժամանակաշրջանում, չնորհիվ կուեկտիվացման հաջողությունների, կոլտնտեսականը դարձել է մեր հողագործության կենտրոնական դեմքը, իսկ անհատական-չքալոր-միջակ տնտեսությունն այժմ արդեն յերկրորդական դեր է խաղում արտադրության մեջ:

Կապիտալիստական սեկտորը:—Կապիտալիստական արտադրությունը—այն արտադրությունն է, ուր արտադրության միջոցները մասնավոր սեփականություն են կազմում և արտադրությունը կատարվում է վարձու բանվորական ուժի հիման վրա: Կապիտալիստական արտադրությունը մեր եկոնոմիկայում հանդես է գալիս յերկու ձևերով:—սեփական կապիտալիզմի և մասնավոր սեփականատիրական կապիտալիզմի ձևով:

Գետական կապիտալիզմ կոչվում է այնպիսի «կապիտալիզմը», վորը մենք թույլ ենք տվել և հանրավորություն ունենք հսկելու և սահմանափակելու այնպես, ինչպես ցանկանում է պրոլետարական պետությունը» (Ստալին): Գետական կապիտալիզմի տիպիկ կոնկրետ ձևերը հանդիսանում են կոնցեսիաներն ու վարձկալությունը: Կոնցեսիայի միջոցով պրոլետարական պետությունը ներդրավում է արտասահմանյան կապիտալը մշակելու և շահագործելու համար այս կամ այն (գլխավորող, վորչույն նշանակություն չունեցող) բնական հարստությունները: Վարձակալության ձևով պետությունը մասնավոր կապիտալիստի յե հանձնումը միջակ և մանր ձեռնարկություններ, յեթե վորեն պատճառով նրանց ողագործումն անմիջապես պետության կողմից հնարավոր չի լինում: Գետության հսկողությունը կոնցեսիաների կամ կապալառուի աշխատանքի վրա իրավործվում է պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագրում կապիտալիստի գործունեյությունը պարզորոշ կերպով սահմանափակված է, իսկ պայմանագրի խախտումը կարելի յե արագությամբ հայտաբերել: Գետական կապիտալիզմը քիչ թե շատ նշանակալից տեղ չի դրավել մեր եկոնոմիկայում: Ներկայումս պետական կա-

պիտալիստաակ սեկուրի տեսակաբար կշնու համարյա զերոյի յէ համապարզում :

Ի տարբերություն սետական կապիտալիզմի, մասնավոր սեփականատիրական կտպիտալիզմի կարգավորումը պետության կողմից ավելի բարդ ձեւեր և ընդունում —այսուեղ չկան պայմանագրային հարաբերություններ, վորոնք ճշգրիտ վորոշեն մասնավոր կապիտալի գործունեցության շրջանակները : Պրոլետարական պետության կողմից մասնավոր կապիտալի կարգավորումը, այսինքն համապատասխան ներգործությունը նրա վրա, մասնավորապես նեպի առաջին շրջանում, մեծ մտածք իրականացվում և Հրամատարական բարձրունքների միջոցով (պետական արդյունաբերություն, հանրայնեցված ապրանքարժանառություն, վարկ, հարկային բաղաքականություն, տրանսպորտ և այլն) : Մասնավոր կապիտալի կոնկրետ ձեւերը մասնավոր ֆարբիկաներն ու դործարաններն են, կուլակային անահետությունը և մասնավոր առետությունը :

Կապիտալիստական ելեմենտների վորոշ թույլատրելու անխուսափելիությունը —իսկ նեՊ-ի առաջին ետապում նույնին նրանց վորոշ աճումը —հիմնականում կապված և մանր-ապրանքային տնտեսաձեւի առկայության հետ, քանի վոր կապիտալիզմը «մանր արտադրության և փոխանակառության տարեցային արդյունքն ե» (Լենին) : Մանր-ապրանքային արտադրությունը կապիտալիզմի հիմնական սննդառու բաղան և Մանր-ապրանքային արտադրության սոցիալիստական վերակառուցումը հիմք և հանդիսանում կապիտալիզմի վոչչացման համար, կապիտալիզմի վորի գեմ պրոլետարական պետությունը հետեւողականորեն պայքարում և սոցիալիստական շինարարության բոլոր ետապներում : Սակայն դա չի նշանակում, վոր մեր զարդացման տարբեր ետապներում մտանավոր կապիտալի գեմ մզվող պայքարի ձեւերն անփոփի են :

Սկզբնական ետապներում սահմանափակման և արտամդման քաղաքականությունից մենք հետազայտում անցանք ուժեղացրած հարձակման և հետո յել՝ կուլակության, վորպես զասակարգի, լիկվիդացիային, համատարծ կոլեկտիվացման հիման վրա : Ներկա ժամանակաշրջանում, սոցիալիզմին թեակոխման ժամանակաշրջանում, կապիտալիստական սեկուրի տեսակաբար կեխոն խիստ արագորեն և անընդհատ իջնում և, քաղաքային բուրժուազիայի արտադրական բաղան արդեն վճռապես խախտվել և, նմանապես արդեն ձեռք են բերված վնասական հաջողություններ կուլակության, վորպես զասակարգի, լիկվիդացիայի դործում : Համատարած կոլեկտիվացման հիման վրա վճռական դյուզատնեսական շրջաններում կուլակության, վորպես զասակարգի, լիկվիդացիան ավարտվել ե :

Մեր անտեսության մեջ կապիտալիստական սեփառը սոցիալիստա-

կան շինարարության անհաշտ թշնամին ե . սոցիալիստական և կապիտալիստական սեկտորները պայքար են մղում մանր-ապրանքային տնտեսածեի զարգացման տարրերը ուղիների համար : Այդ պայքարում կապիտալիստական սեկտորը հրապարակ է գալիս վորակես միջազգային կապիտալի գործակալություն :

«Ամբողջ հարցն ե , թե ո՞ւմ յետելից կլնա գյուղացիությունը , սոցիալիստական հասարակություն կառուցելու ձգուղ պրոլետարիատի յետելից , թե կապիտալիստի յետելից ... ամբողջ հարցն ե , թե ով ումի՞ց առաջ կանցնի»... (Լենին) :

Մեր զարգացման ներկա ետապում ներքին ուժերի փոխարարերությունների տեսակետից այդ պայքարն անդառնալիորեն լուծվել ե հոգուտ սոցիալիզմի և ԽՍՀՄ-ը վերջնականապես հաստատվել ե սոցիալիզմի ուղղությամբ :

Խորիրդային եկոնոմիկայի քնութագիրն ամբողջությամբ վերցրած :

Կարելի՞ յէ արդյօք յերկը սեկտորներից յուրաքանչյուր մեկը զիտել մեկուսացած , անկախ և կտրված վորևե հարաբերությունից մյուս սեկտորների հետ : Նման քննարկման դեպքում հնարավոր չեր լինի բացատրել սոցիալիզմի հետեղական շինարարության սոցիալիստական հանրայինացման պրոցեսը , վորը միաժամանակ յենթադրում ե կապիտալիզմի լիկվիդացիան՝ դյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման վրա , իսկ չե՞ վոր հենց այդ պրոցեսներն են կազմում մեր եկոնոմիկայի շարժիչ ուժերի զարգացման եյտությունը :

Մեր տնտեսության տառանձին սեկտորները լոկ ամբողջի մասերն են՝ տարրերությունները՝ միասնության մեջ :

Սոցիալիստական սեկտորն իր մեջ պարփակում է սոցիալիզմի լրիվ գպնալիության (СТАНОВЛЕНИЕ) պրոցեսը : Այստեղ դրված ե հիմքը՝ վախելու մանր-ապրանքային սեկտորի զարգացման բնական , «ինքնահուր» ուղին , այսինքն այն ուղին , վորն անխուսակելիորեն տանում ե դեպի կապիտալիզմը : Կապիտալիստական սեկտորի համար որինաչափ ե նրա հետեղական լիկվիդացիայի պրոցես՝ դասակարգացյան կատաղի պայքարի հիման վրա , վորը տարրեր ետապներում տարրեր ձեւերով ե արտահայտվում :

Խորհրդային եկոնոմիկան հակառակությունների միասնությունն ե , բայց վորում , այդ միասնության հակադիր մոմենտներն արտադրության տարրեր ձեւերն են : Այդ հակադրությունների միասնությունը , խորհրդային եկոնոմիկայում արտադրության տարրեր ձեւերի առկայությունը , չի կարելի համարական վորակես ինքնուրույն զարգացող հակադիր ուղղած ուժեր : Առանձին սեկտորն իր բնութաղիքը ստանում ե միայն վորակես միասնության մեկ մոմենտը և վաս թե այդ միասնությունից դուրս ինքն վերցրած :

Առորհրդացին նկոնումիկայի ելության վորպես հակադրությունների միասնության կոսկիս չհասկանալու վրա յն հիմնված և հակահեղափոխական տրոցիկոզի տիսությունը և աջ թիգման սոցիալ-սուստեսական թևորիան։ Տրոցիկոզը, վոր խորհրդացին տնտեսությունը դիտում և պորտվա տարբեր սխալների գումար, նրանում նշել և միայն զանհաղթահարիլիք հակասություններ, չնկատելով միասնությունը (այստեղից յանմանորագուղացիական դաշինքի բացառումը, դյուղի զարգացման վոչ տաղիսալիստական ուղու, սոցիալիզմի կառուցման հնարավորության և խոռոչը և հակասությունների լուծման միակ մեկնակետի համաշխարհային հեղափոխության անհրաժեշտությունը և այլն)։ Աշերը տեսնում ենին միայն միասնությունը, սակայն չեն նկատել տարբերությունները, հակասությունները՝ (այստեղից-սեկտորների համասարակչության, սինդահասության, կուլտակի սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճման տեսություն)։ Յեզ արոցկոզը և աջերը չեն տեսնում. Միասնուրյան յերկիրդամակարդար քայլությունը վորպես միասնություն տարբերության մեջ, և չնշում են պորտե միայն մեկ կոզմը։ Սիալ կմիներ խորհրդացին եկանոմիկան պատկերացնել վորպես ինչ վոր անօրոբակելիություն, վորպես տասանձին բարությունների գումար, վորպես թե մեկը և թե մյուսը, քմի կողմից և այսու կողմից։ Հակադրությունների միասնություն մարդութափական լուրունումը կայտնում է նրանում, վոր նա յուրաքանչյուր յերկույրի մեջ բաց և ամուսն նրա զարգացման շշարժիչ ուժը, «սպրյուրը», «յեղանակը» (Աննին), որիշ խոսքով, հայտնարերամ և զարգացման հիմնական որենքը։ Խորհրդացին եկոնոմիկայում վորպես հակադրությունների միասնություն մեջ, հարկավոր և հայտաբերել վորշիչ մամնենոր, վոր սանդում և նրա կառուցվածք գումարությունները։

* ՄԱՆՈՒ. ԽՄԲ.—Այսուղ հեղինակներն ավելի քան «միակողմանի յեն» մեկունանում արոցիկանունը է աջ սուրբառնիստների անասինանը խորհրդացին եկանոմիկայի վերաբերյալ նորվիրը միայն չի սահմանափակվում նրանում, վոր արոցկոզան ներն ընդունում են, և անհոգինելիք հակասությանները չտանենալով միասնականությաւուր, իրու աջերն ընդունելով միասնականությունը չեն տեսնում հակասությունները։ Ակաս անհրաժեշտ և մատնազեր, վոր խորհրդ եկոնոմիկայի և նկատությունները արացիկանունը մոտ միանգամայն ինքանաթյուրքած են։ Տրոցիկոսների կողմից ընդունվող հակասությունները մասին մենք ավելի մանրամասն կանգնագամանն ենայել ժամանթյունների մեջ։ Այսուղ մատնանշենք միայն, վոր արոցկոզը ընության դրելով մեր հետեռպական-սոցիալիստական տիպը ձեռնարկությունները վորպես պետական կապիտալիստական—ըստ եյության զիտակցաբար խորացրաւմ և իրականացրամբ, վարկարեկելով բանվոր դաստկարդի ստեղծած նոր աբտագրական հարաբերությունները։

Ինչ վերաբերում և աջերին, նրանց ըմբռնած միասնությանը, առա պետք և մատնանշեր, վոր նրանց մոտ իրականում բացալում և մեր եկոնոմիկայի դեալիտիկական միասնուրյանը, քանի վոր նրանց զարգացրած միասնականության տեսությունը մեխանիզմականության անհարաժեշտության ին նրանց կաշվիքով մեր եկոնոմիկայի միասնականու-

Առանձին սեկտորների վերլուծման ժամանակ մենք արդեն մատուցանցինք, վոր խորհրդային եկոնոմիկայում վորոշիչը, ղեկավարողը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան և նրա տնտեսական բարդացիսալիստական սեկտորը:

Պրոլետարիատի դիկտատուրա հասկացողության մեջ արդեն խորհրդային եկոնոմիկային տրվում է վորոշակալ ուղղություն, վորոշանձնապես պարզ, վորոշակի բացահայտված և ընկ. Ստալինի կողմեց. «Պրոլետարիատի դիկտատուրան հետևյալն է. —1) որենքով չսահմանափակված բնություն կտպիտալիսաների և կալվածատերերի վերաբերմամբ. 2) պրոլետարիատի ղեկավարությունը դյուզագիության նկատմամբ և 3) Սոցիալիզմի շինարարությունն ամբողջ հասարակության նկատմամբ»: Խորհրդային եկոնոմիկայի այդ ուղղությամբ (սոցիալիզմի կառուցման խորիսը) վորոշում է յերեք հիմնական սեկտորների—սոցիալիստականի, կապիտալիստականի և մանրապրանքայինի—հակասական միասնության նրանց փոխհարաբերության բնույթը:

Սոցիալիստական և կապիտալիստական սեկտորների միջև հակա-

թյունն արտահայտվում է եկանոնմիկայի սեկտորների սոսկ գործակտերյան յնձ փախադարձ եավառակշնուրյան մեջ: Այստեղից ել բղխում ե տղերի կողմից մեր եկոնոմիկայում սոցիալիստական սեկտորի ղեկավար գերեց բացառումը. այն ինչ, հայանի յերգոր սոցիալիստական սեկտորի հազվանակի, նրա արտադրական հարաբերությունների—սոցիալիստական արտադրական հարաբերությունների—վորակեա զարգիչ ուղաքարի չնորդիվ և միայն, վար մեր եկոնոմմիկան դառնում է միանական (Միանական շարժում դեպի սոցիալիզմ, միանական հեղափոխական վերակառուցման): Քրանդուղընթաց ընդհանուր վերակառուցողական այդ պրոցեսը ինչպիսի կարծում են աջիւրը՝ խաղաղ հանապարհով չի կատարվում Նա ընթանում է մեր եկոնոմմիկայում ոբյեկտիվորեն գործող յերկու տեսնդենցների սոցիալիստական պլանային աենդենցի և կապիտալիստական տարերային տեսնդենցի մշկն ժամանակով գոռ պայքարի բռնվագում—միւրայքը, վորի ընթացքում սոցիալիստական տեսնդենցը հենված սոցիալիստական սեկտորի մասերյալ-անտեսական բազայի վրա՝ վերակառուցում և սոցիալիստական հիմունքներով մանր առլանքային անտեսությունները, նախ վանում ու սամանափակում և ապա դարգացման վորոշ աստիճանում իսպառ լիկվիդացիայի յե յենթարկում կազիտալիստական սեկտորը՝ դրանով իսկ հաղթահարելով տարերային կապիտալիստական տեսնդենցի շարժման որենքի փոխգելու բոլոր ձգտությունները՝ իսկ միշտ արդացման ներկա ետապում դիմում և նրա իսպառ արժատահանմանն ամբողջ եկոնոմիկայից, մի տշխատանք վորի ընթացքում ապահովում և բազմատեսաձև մեր եկոնոմմիկայի միատնտեսաձև զառնալու պրոցեսը՝ նոր ետապում սոցիալիստական տեսնդենցի վորուստ շարժիչ ուժի, հաղթանակն ապահովված և արդեն այդ պայքարում՝ «ԽՍՀՄ-ը վերջնականապես հաստատվել և սոցիալիստական ուղղությունը» (Համկոմկուսի վորոշումից): Ահա թե ինչպես պետք ե ըմբռնել «միասնության» հարցը մեր եկոնոմմիկայում: Թայ պայմաններում չխոսնել աջերի կողմից մեր եկոնոմմիկայի միանության չյուրատեսակը ըմբռնան, իսկ դա նշանակում է նրա խեղաթյուրման մասին, հավասարագոր կլինի աջ սոլորտունիզմը մեթոդուր գիտական նկատմանը՝ սեկտորները՝ փոխհարաբերության կարերագործության հարցերում—արքեստականորեն կոծկելուն, ուշ յերիշություններ նրանց գիրքերը գլորգելուն:

առությունը հանդիս և դալիս վորպես անտաղոնիստական հակասություն, վորը միերջին հաշվով՝ իր լուծումը ստանում և միայն պայքարող կողմեցից մեկի բոնի լիկվիդացիայով : «Հարձակվել կուլակության վրա—դա նշանակում և, ջախճախին կուլակության և լիկվիդացիայի յենթարկել նրան վորպես դասակարգ» (Սատալին) :

Տարրեր բնույթի ունի սոցիալիստական և մանր-ապրանքային սեկտորների միջև յեղած հակասությունը : Այդ հակասությունը կարող է լուծվել մանր-ապրանքային սեկտորի սոցիալիստական վերակառուցման միջոցով, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշների հիման վրա : Բայց վորում այդ դաշներում պրոլետարիատի զեկավար զերը հրապարակ և զայիս վորպես անհրաժեշտություն, վորովհեան մանր-ապրանքային անհետառնությունն, իր տարերային կապիտալիստական տենդենցի ուժով, չի կարող ինքնիրեն, «ինքնահոսով» վերակառուցվել : Գյուղացիական անհետառնության սոցիալիստական վերակառուցմը, վորպես նախապայման, պահանջում է պրոլետարիատի զեկավարությունը :

Սեկտորների վերև մատնանշված «հակասությունների բնույթից բղիքում և յերկու հակասական տենդենցների առկայությունը խորհրդացին եկոնոմիկայում—սոցիալիստական և ապրանքային-կապիտալիստական վորունցից տիրապետողը՝ զեկավարը սոցիալիստականն և «Ով ումիչ հիման վրա այդ յերկու տենդենցների պայքարի մեջ և պարունակվում և շարժման նոր ձևը, վորը վորում և խորհրդացին եկոնոմիկայի զարգացման ամբողջ պրոցեսը՝ սոցիալիզմի կառուցման ճանապարհին» :

Խորհրդացին եկոնոմիկայի առանձնահատկությունն հենց այն և, վոր նա արտադրության տարրեր ձեւերի հակասական միասնությունն և, և նրա հիմնական հակասությունն արտահայտվում և սեկտորների միջև յեղած պայքարում, դասակարգային պայքարում, ընդ վորում պայքարի ձեւերը տարրեր են : Դրա համար ել ԽՍՀՄ-ի եկոնոմիկան ուսումնասիրեցիս չի կարելի կորվել անհետական սեկտորներից և վոչ մեկից, այսինքն՝ սոցիալիստական, մանր-ապրանքային և կապիտալիստական սեկտորներից և նրանց ներկայացնող դասակարգերից—պրոլետարիատից, պյուղացիությունից, բուրժուազիայից, թեև յերկը հիմնական դասակարգերը պրոլետարիատը և գյուղացիությունն են : «Մեր խորհրդացին հանրապետության մեջ,—դրել ե Լենինը, —սոցիալական հասարակակարգը հիմնված յերկու դասակարգերի—պրոլետարիատի և գյուղացիության—համագործակցության վրա, վորին թույլատրված և մասնակցել, վորով պայմաններով նաև «նեպմաններին», այսինքն՝ բուրժուազիան» : Սակայն դա չի նշանակում, վոր խորհրդացին եկոնոմիկայի թերեհութիւնական ուսումնասիրության ժամանակ կարելի յե սահմանափակելվել «յերկդասակարգային մողելով», ինչպես այդ անում եյին Բուրժուարին ու Պրեոքրատնեսկին :

Բուխարինն անցման ժամանակաշրջանի եկոնոմիկան ուսումնասիրիկիս անհրաժեշտ և համարում յենել յերկու սեկտորների—սոցիալիստականի և մանր—ապրանքայինի և համապատասխան դրան՝ յերկու դասակարգերի—պրոլետարիատի և գյուղացիության վերլուծությունից և արտարակցիայի յենթարկվել բուրժուազիայից։ Պրեոքառածենսկին նույնպես յենում է յերկու սեկտորներից, սակայն նրա մոտ յերկորդ սեկտորը—մասնավոր կապիտալիստականն է, վորի մեջ նա հաշվում է նաև մանր—ապրանքային արտադրությունը։ Այսպիսի յելակետային դիրքերը հիմք են ծառայել, մի կողմից պրոլետարիատի դեկատուրայի ժամանակ կապիտալիստական տարրերի խաղաղ գարդացման և նրանց սոցիալիզմի մեջ ներածելու աջ—ուղղացունիստական տեսությանը, մյուս կողմից՝ տրոցիկոստական տեսությանը, վորը գյուղացիական անտեսությունը նույնացնում է կապիտալիստականին և առաջարկում է գյուղացիության վերաբերմամբ վարել նույն քաղաքականությունն, ինչ վոր կուլակային կապիտալիստական ելեմնանների վերաբերմամբ։

Մեր եկոնոմիկայի հիմնական որինաչափությունները սահմանելու համար պետք է յենել յեռակտորային, յեռակարգային «մողել»-ից։ Սակայն «յեռքառակարգային մողելի» սահմանումը գեռ բավական չեւ հայտաբերելու համար մեր հեռամիկայի որինաչափությունների սպիտիկի բնույթը։ Դեռ անհրաժեշտ է ի հայտ բերել այդ դասակարգերի միջն գոյություն ունեցող հարաբերությունների բնույթը։

Մորհրդային եկոնոմիկային վերաբերող տեսական դրականության մեջ ավելի մեծ տարածում ունի մի այլ տեսակետ, վորն արտահայտված ե նույնարինի, Լեռնայեվի, Խմելնիցկայայի և այլոց աշխատություններում: Այսպէս, որինակ, Լեռնայեվը և Խմելնիցկայան հետեւ լով Բուխարինին՝ պնդում ելին, վոր անցման շրջանում «ալայքար ե մղում ամեն տեսակ տնտեսական որենքների վերացման համար» ։ վոր «անցման շրջանի եկոնոմիկայի համար չի կարելի հատուկ տեսական սիստեմ ստեղծել, վորովհետև դա աղաղակող հակասության մեջ կընկնի մարգսիստական տեսական-տնտեսական մեթոդությայի հիմունքների հետ»*): Ընկընկ. Լեռնայեվն ու Խմելնիցկայան յենթադրում Ելին, վոր տեսական եկոնոմիկան անցման շրջանի համար հարկավոր ե լոկ այնքան, վորքան պահովանվում են ապրանքային-կապիտալիստական տնտեսության կատեղորիաները, և վոր դրանով իսկ խորհրդային եկոնոմիկայի տնտելիությունը հանդիսանում է լոկ կապիտալիզմի քաղաքականության ուղղակի շարունակությունը: Այս տեսակետը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ քողարկված մի փորձ՝ անցման եկոնոմիկան դիտելու իրեւ յուրահատուկ այլաձնություն ստացած կապիտալիզմ, և հանդում ե, (ինչպես այդ ցույց կտրվի), Կուրովսկու, Բազարովի և այլոց բուրժուական-վնասարարական տեսությունների հետ միանալուն: Անցման շրջանի եկոնոմիկան կապիտալիզմի նմանությամբ ուսումնասիրեն ըստ Ելության ընկած ե նաև Բուխարինյան այն հայացքների հիմքում վորոնք վերաբերում են անցման շրջանի եկոնոմիկայի որինաչափություններին: Վերջիններս (որինաչափությունները) նա դուրս ե բերում վոչ իրեւ անցման շրջանի եկոնոմիկային ներքնապես—յուրահատուկ որինաչափություններ, այլ իրեւ անցման շրջանի տնտեսության պայմաններում միայն փոփոխված ապրանքային-կապիտալիստական որինաչափություններ: Անցման շրջանում Բուխարինի կարծիքով, տեղի յի ունենում «տարերային որենքները ճանաչված և գիտակցարար կիրառվող որենքների վերաճելու պրոցեսը**): «Վերաճման» այդ նույն տեսությունը փոքր ինչ տարբեր ձևով արտահայտված է Լեռնայեվի և Խմելնիցկայայի մոտ, վորոնք հայտարարում ելին անցման շրջանի տնտեսության մեջ կապիտալիստական և սոցիալիստական տարրերի քիմիական աղդակցության» մասին, Այսինվարդի մոտ, վորը խոսում

*) «Очерки переходной экономики», № 80 и 91:

**) «К вопросу о закономерностях переходного периода», № 11:

ուր շպլանի և տարերքի վորխաղաքարձարար իրար մեջ ներթափանցելու» մտածին, և այլոց մոտ : Կապիտալիստական որենքները սոցիալիստական որդենքների մերանակները բոլոր այս տեսություններն անտեսում են անցման շրջանի եկոնոմիկայի հեղափոխական-դաստիարագոյնին բովանդակութեք և հանդիսանում են վոչ այլ ինչ, բայց յեթե վոչ եռու լակի՝ սոցիալիզմի մեջ ներածելու աջ ուղղությունիստական թեզի յուրահատուկ թեսաբարիկան հիմնավորումը :

Անցման շրջանի եկոնոմիկայի բոլոր կարեռագույն կատեղորիաները, ինչպես ինդուստրացումը, վերակառուցումը, կունեկտիվացումը և այլն, ամեններն չի կարելի ասդրանքային-շուկայական հարաբերություններից բղխեցնել : Այդպիսի փորձերը մեթոդոլոգիամես նույն տիպի յեն, ինչ այն բուրժուական անսարանների պրիմաները, վորոնք փորձում եյին մեր եկոնոմիկայի ասլրանքային-կապիտալիստական ձևերի վերլուծությունից դուրս բերել նրա որինաչափությունները և բուրժուանստարական գոհությունը՝ կերտել խորհրդային տնտեսության մտավին :

Խորհրդային եկոնոմիկայի արտադրական հարաբերությունների սպեცիֆիկ բնույթը և նրա զարգացման որինաչափությունները կարող են Հիշու հասկացվել միայն այն պայմանով, յեթե իրեն մեկնակետ ընդունակին հոկտեմբերյան հեղափոխությունը, պրոլետարիատի գիկտատուրաս և նրա անտեսական քաղաքականությունը : Խորհրդային եկոնոմիկայի որինաչափությունները, զա մոդիֆիկացիայի յենթարկված կապիտալիստական որինաչափությունները չեն, վորոնք վերաճում են պլանային որինաչափությունների, վոչ ել սոցիալիզմի պատրաստի որինաչափություններ, այլ կառուցվող սոցիալիստական տնտեսության որինաչափություններ, ծնվող կոմունիզմի և մեռնող կապիտալիզմի պայքարի որինաչափություններ : Խորհրդային եկոնոմիկայի տեսական ուսումնասիրության ճիշտ սխեման պետք ե յելնի՝ կոմունիզմի ուղղությամբ մեր եկոնոմիկայի կատարած շարժման հիմնական որենքը սահմանալուց, այնուհետեւ պետք ե վերակառուցման պրոբլեմները դնի արտադրության սփերայում և միայն դրանից յելնելով՝ շրջանառության ու բաշխման սփերայում :

Ինչպես բոլոր մյուս հարցերում, այնպես ել խորհրդային եկոնոմիկայի տեսության համար հիմնական այս հարցում—կոմունիզմի ուղղությամբ կատարվող շարժման ընդհանուր որենքի հարցում—պետք ե նկատի ունենալ յերկու տեսակի թեքումներն այս պրոբլեմի լենինյան ճիշտ յուծումից և հետեւղականորեն պայքարել յերկու Փրոնափ վրա, ինչպես ընդդեմ իշեալիզմի, վորը սվաղում ե մատերիայի արտադրողական ուժերի պրիմատը, այնպես ել ընդդեմ մեխանիզմի և նատուրալիզմի, վորոնք ժխտում են պլանային տնտեսության տնտեսական որենք-

Ների առանձնահատուկ ներգործոն բնույթը և ըստ եյության եկոնոմիկ կան վեր են ածում տեխնիկայի : Խորհրդային եկոնոմիկայի տեսական ռազմական ներգույթյունը կարող է յելնել միայն մարքս-լենինյան ուսմունքից՝ անցման շրջանի, սոցիալիզմի և կոմունիզմի մասին մեր կուսակցության ամբողջ տեսական հարստությունից, ընկ . Ստալինի աշխատություններից, առանց վորի, ինչպես նաև առանց սոցիալիստական շինուարության ամբողջ վորձի հաշվառման, չեն կարող ճիշտ լուծվել վոչ մի դիտության, այդ թվում նաև խորհրդային եկոնոմիկայի տեսության պրոբլեմները :

Սոցիալիզմի կառուցման պլանը վրապես խորհրդային եկոնոմիկայի շարժման որենք : -Խորհրդային եկոնոմիկայի զարգացման որենք սահմանելու հիմնական մեթոդն ե հանդիսանում տնտեսական որենքների ռազմական մարքս-լենինյան մեթոդը : Կապիտալիզմի որենքների հետազոտության այդ մեթոդը պետք է կիրառվի նաև անցման շրջանի եկոնոմիկայի հետազոտության ժամանակ, բայց վոչ թե մեխանիկորեն, այլ դիալեկտիկորեն, հաշվի առնելով ռազմական մարքսիզմի ուղիղ ամբողջ առանձնահատուկ բնույթը : Կապիտալիզմի ռազմական մարքսիզմի վերլուծությունից, բայց նրա վերլուծության առարկան եր հանդիսանում վոչ թե ընդհանրապես աշխատանքը, այլ աշխատանքն իր այն սպեցիֆիկ հասարակական-պատմական ձևով, վորը յուրահատուկ ե կապիտալիզմին : Աշխատանքը և արտադրության միջոցները, ինչպես ցույց եր տալիս Մարքսը, ամեն մի հասարակության մեջ արտադրության գործոններ են հանդիսանում . բայց նրանց միացման յեղանակը տարրեր ե տարրեր պատմական դարաշրջաններում : Յել հենց առանձին դարաշրջանների տարրերման, նրանց զարգացման տնտեսական որենքների պահպանման հիմքում Մարքսը դնում եր արտադրության միջոցների և բանվորական ուժի միացման տարրերությունը : Մարտից ել անհրաժեշտ ե յելնել անցման շրջանի եկոնոմիկայի որենքները սահմանելիս :

Այս պատճառով ամենից առաջ անհրաժեշտ ե սահմանել արտադրության միջոցների և բանվորական ուժի միացման հատուկ բնույթը : Եթե կապիտալիզմի որոք արտադրության միջոցները և բանվորական ուժը բաժանված են և անտաղոնիստական ձևով հակադրված են միայնց, յեթե ավարտված սոցիալիզմի պայմաններում նրանք, ընդհանրակառակը, միացած են և վոչ թե անհատական հիմունքով, այլ հասարակության բոլոր անդամների կողեկտիվ տիրապետման ձևով, ապա անցման շրջանի եկոնոմիկայում յերեք սեկտորներին համապատասխանում ևն արտադրության միջոցների և բանվորական ուժի միացման յերեք

ապրբեր տիպեր : Սոցիալիստական սեկտորում արտադրության միջոցները և բանվորական ուժը միացած են կոլեկտիվ հիման վրա . կապիտալիստական սեկտորում արտադրության միջոցները բաժանված են բանվորական ուժից և հակադրված են նրան . իսկ մանրապրանքային սեկտորում նրանք միացած են, բայց, ի տարբերություն սոցիալիստական սեկտորից, վոչ թե կոլեկտիվ, այլ անհատական հիմունքներով : Վերջին յերկու սեկտորների (մանրապրանքային և կապիտալիստական) զարգացման պայմանները ԽՍՀՄ-ում տարբեր են նրանց զարգացման պայմաններից՝ կապիտալիզմի յերկրներում : Այսպես, որենակ, Հողը, վորպես արտադրության միջոց, վոչ կապիտալիստների և վոչ ել մանր ապրանքարարագրողների սեփականությունը չի հանդիսանում . կապիտալիստական սեկտորում զբաղված բանվորը պատկանում է մեր յերկրում արտադրության հիմնական միջոցների տերը հանդիսացող տիրող գասակարգին : Զարգացման այս հափուկ պայմանները, վոր ստեղծում և պրոլետարիատի դիկտատուրան, վոչ մի դեպքում, սակայն, չեն փոխում կապիտալիստական սեկտորի սոցիալական բնույթը, ինչպես այդ փորձում եյին ներկայացնել աջ ուղղությունիստները :

Սոցիալիզմի՝ իրեն քմեկ տնտեսաձեւ» և արտադրության միջոցների ու բանվորական ուժի միացման մեկ տիպ ունեցող եկոնոմիկայի՝ կառուցման խնդիրը պահանջում է վոչնչացնել արտադրության միջոցների և բանվորական ուժի միացման կապիտալիստական տիպը, վերակառուցել մանր-ապրանքայինը և շարունակել զարգացնել սոցիալիստականը : Եյլ պրոցեսը հանդիսանում է ԽՍՀՄ-ի վողջ եկոնոմիկայի սոցիալ-տնտեսական և տեխնիկական խորը վերակառուցման պրոցես, կենդանի և մեռյալ աշխատանքը սոցիալիստական տնտեսության կառուցման խնդիրներին համապատասխանող ուղղությամբ արմատական վերաբաշխման յենթարկելու պրոցես : ԽՍՀՄ-ի վողջ եկոնոմիկայի զարգացումը սոցիալիզմի ուղղությամբ կատարվում է վոչ տարեքայնուրեն, կենդանի և մեռյալ աշխատանքը վերաբաշխման պրոցեսները չեն հանդիսանում «պատահմունքի և քմահաճույքի կամայական խաղ» (Մարքս), ինչպես այդ տեղի ունի ապրանքային տնտեսության մեջ այլ սահմանվում են դիտակցարար, պրոլետարական դիկտատուրայի ժողովրդատնտեսական պլանի վորոշիչ ներգործության հետևանքով : Սոցիալիզմի զարգացումը մեր յերկրում հնարավոր եմիայն պլանի հիման վրա, իսկ տարեկքն արտահայտում են կապիտալիստական սեկտորացիայի հակադիր տենտենցները :

Ի տարբերումն կապիտալիզմի, ուր եկոնոմիկայում տիրապետում է տարերքը, ԽՍՀՄ-ում ընդհանուր, տիրապետող տենդենց և հանդիսանում պլանը : Սոցիալիստական համբայնցման պրոցեսն արտահայտում

և իրականացնող պրոլետարիան դիկտատուրայի պլանը հանդիսանում է Խորհրդային եկոնոմիկայի որևէնքը, սոցիալիզմի կառուցման որբենքը : Այդ պլանը վորապես տնտեսական որենք՝ ներկայացնում և տնտեսական որենքի բարձրագույն տիպը, ճիշտ այնպես, ինչպես ամբողջ խորհրդային եկոնոմիկան հանդիսանում և ամենից ավելի կատարելադրությամբ, անտեսության բոլոր նախորդ սիստեմների համեմատությամբ : Բուրժուական անտեսազետները ժխտում են այն, վորապես պայքարելով մեր եկոնոմիկայում զոյսեմյուն ունեցող տարերային տեսդենցիների գեմ, զարգացնելով և ծավալելով սոցիալիստական տիպերը ձեռք և բերում տնտեսական որենքի նշանակությունը : Նրանք ճգնում են ապացուցել, վոր մեր զարգացման որյեկտիվ որենքները կարող են լինել միայն տարերային չուկայական որենքները . իսկ պլանին ընկնում և, նրանց կարծիքով, լոկ վորոշ ճշտման դերը, մի ճշում, վորապես «որյեկտիվ» տնտեսական զարգացման մեջ մտցվում և պրոլետարական պետության կողմից չնորդիվ այն հանդիսանում և ամենից արտադրության միջոցների տերը : Դրանով նրանք արտահայտում են այն դստակարգերի սահմանափակ հորիզոնը, վորոնք թշնամիի յին սոցիալիստական շինարարությանը և անընդունակ են, անդամ հանձնաց իրենց ամենից ավելի տաղանդավոր ներկայացուցիչների, հասկանալ, վոր պրոլետարական դիկտատուրայի պլանը, վորապես սոցիալիզմի միլիոնավոր կառուցողների սեալ արտադրական հարարերություն, ծափակուն պայքարի միջոցով կապիտալիստանիկան տենդենցիների գեմ կամ խելով այդ տենդենցիների տնտեսական որենքի փոխվելու բոլոր հանրապերությունները, գառնում և միաժամանակ մեր զարդացման որենքը :

Պլանը, վորապես կառուցվող սոցիալիզմի եկոնոմիկայի շարժման որբենք, տարբերվում և անդասակարգ սոցիալիստական հասարակության պլանից : Վերջինս սոցիալապես միասարը եկոնոմիկայի զարդացման որենք և հանդիսանում և համարատախանում և ամբողջ հասարակության շահերին : Իսկ խորհրդային եկոնոմիկայի պլանը, թեպետ և զեղավարում և ամբողջ տնտեսության զարգացումը, հանդիսանում և պրոլետարական գիկտատուրայի պլան, դասակարգային պայքարի զենքը և առջականացնելու ամենի լիկիդացիայի լինել կապիտալիստական տարերի և տարերային տենդենցիների գեմ և նպաստակ ունի լիկիդացիայի յենթարկել կապիտալիստական արտադրական հարարերությունները, վերակառուցել մանր ասլրանքային տնտեսությունը և նրան հատուկ տարերային տենդենցիները — մի վերակառուցում, վոր կատարվում և վոչ թե ինքնահոսի աջ ուղղությունիտական տեսության համաձայն, վորապիսին ձեռնոտու յեմ միայն կապիտալիստական ռեստավրատորներին, այլ համաձայն բայլլեիկայն «ով-ում» սկզբունքի, կատարվում և սուր դասակարգային պայքարի բռնում :

Սոցիալիստական վերակառուցման այդպիսի պլանը միայն, վորարուսակայում և տիբապետող արտադրական հարաբերությունը, վորոշում և սոցիալիստական հանրայնեցման ճանապարհով կատարվող տմրողջ գործացման բնույթն ու ուղղությունը, կարող ելնել անցման շրջանի՝ զեպի սոցիալիզմն ընթացող եկոնոմիկայի շարժման որենքը։

Ամբողջ ուժով պետք ելնդէծել, վոր պլանը պրոլետարիատի դիկտատորայի հաստատումից սկսած արտահայտիչն և հանդիսանում նոր սոցիալիստական արտադրական հարաբերությունների և հիմնվում և սոցիալիստական սեկտորի վրա։

Հարցի այլ տեսակ դրվածքը վոչինչ չունի աջ ոպերատունիստաների այն անսուբյան հետ, վորի համաձայն պլանի նյութական բովանդակությունը հավասարեցվում եր ընդհանրատես աշխատանքային ծախսումներին։ Պլանի վրապես տնտեսական որենքին եյությունը և նպատակագրումը կայանում են նրանում, վոր վերջինս հենված սոցիալիստական արտադրական հարաբերությունների վրա, (հարաբերությունների, վորոնք մեջ գործացման ներկա ետապում առաջատար լինելուց զատ նաև գերիշխող են դարձել ամբողջ եկոնոմիկայում)՝ անցման ըրջանի բազմաթիվ տնտեսաձենք ունեցող եկոնոմիկան սոցիալիստական վերակառուցման յենթարկվելու սուբ դասակարգային պայքարի միջոցով (մասն առլանքային սեկտորի արտադրական հարաբերությունները հետապնդականորեն վերափոխվելու և կապիտալիստական արտադրական հարաբերությունները լիկվիդացիայի յենթարկելու) և ճանապարհով առաջ և տանում զեպի ավարտված սոցիալիստական միասնական տնտեսաձեւ ներկայացնալ եկոնոմիկայի ստեղծումը։

Այս պրոցեսի զարդացման մեջ յելտակտային մոմենտ եր Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով հաստատված նոր արտադրական հարաբերությունների ստեղծումը, արտադրության հիմնական միջոցների քոցիալիստական հանրայնեցումը։ Դրա չնորհիվ բանվորը զարգացնեց վարձու բանվորը, զարդարեց հանգես զալ լոկ իբրև արտադրության զարծուներից մեջը, այլ իր մեջ միացնում և արտադրության թե՛ կոլեկտիվ տիբապետումը և թե՛ կոռավարումը։ Պահապորումը հասարակական աշխատանքի այնպիսի տիպի արտահայտություն և, յերբ չարադրության դորձիքներն ու միջոցները, հողը, Փարբիկաները, դործարանները և այլն խլված են կապիտալիստաներից և գարձված են բանվոր զասակարգի ու գյուղացիության աշխատավոր մասսաների սեփականությունը*։

Այս հիմնա վրա ծագում են նոր վերաբերմունք աշխատանքի հան-

* 1) Ստալին. — Թագհաջութակությունը XCV համադրումարում։

գեղ, վորն իր արտահայտությունն և գտել արդեն իսկ առաջին ետապ-
շնուրում կոմունիստական շաբաթորյակների ձևով և ժամանակակից եռ-
տապում՝ աշխատանքի սոցիալիստական ձևերի—սոցմքցման, հարգա-
ծայնության, հանդիպական պլանի լայն զարգացումով։ Հենց այս
հանդամանքը, վոր աշխատանքը պլանայնորեն կիրառվող սոցիալիստա-
կան վերակառուցման պրոցեսում դառնում է ավելի ու ավելի անմի-
ջական-հասարակական աշխատանքի վոր աշխատանքի այս նոր նշանա-
կությունը գնալով ավելի ու ավելի յեն գիտակցում աշխատավոր լայն
մասսաները—հենց այդ հանդամանքը բացատրում է մասսաների այն
մեծագույն աշխատանքային խանդավառությունն ու ակտիվությունը,
վորոնք սոցիալիստական շինարարության հաջողությունների վճռական
պայմանն են հանդիսանում։ Հասարակական հարաբերությունների վողջ
սիստեմում տեղի ունեցող փոփոխությունները մեր առաջ բաց են անում
աշխատանքի կոմունիստական ձևերի զարգացման ամենալայն հեռնկար-
ներ և տանում են դեպի հասարակական աշխատանքի նոր տիպի բաշ-
խումը վողջ ժողովրդական տնտեսության մեջ։

Սոցիալիստական հանրայնեցումը, վորպես խորհրդային եկոնոմի-
կայի շարժման որենք, և սոցիալիստական պլանը վորպես այն իրակա-
նացնող զենք, ունեն դրսելորման մի շարք ձևեր։ Կան անմիջական պլա-
նավորման ձևեր։ Կան անմիջական պլանավորման ձևերի իրեն պետական
ձեռնարկությունների կողմից տրվող ուղղակի ու անմիջական սպերա-
տիվ առաջադրություններ արդյունաբերության և դյուշատնտեսության
մեջ, կան նույնական պլանային ներգործության ձևեր՝ զների,
հարկերի և առևտրական կոնտակտացիայի և այլ միջոցներով, ընդ վո-
րում այս ձևերը միասնական ժողովրդատնտեսական պլանի սիստեմում
սերտորեն ներհյուսվում են իրար ու հանդիսանում են պլանի իրացման
էարկորագույն գործոններ։ Պլանի դրսելորման ձևերի այս յերկվու-
թյունն արտահայտում է այն փոխանցման եյությունը, վոր ունի պլանը՝
վորպես սոցիալիզմի կառուցման պլան, ի տարբերումն ծավալուն սո-
ցիալիստական հասարակության պլանի։ Յեթե սոցիալիստական շինա-
րարարության առաջին ետապում լայն տարծում ունեյին պլանային
ներգործության անուղղակի մեթոդները, ապա ժամանակակից ետա-
պում, յերբ յերկիրը թևակոխել և սոցիալիզմի շրջանը, յերբ «սոցիա-
լիստական սեկտորն իր ձեռքում և պահում ամբողջ ժողովրդական տըն-
տեսության բոլոր տնտեսական լծակները» (Ստալին), մենք հնարավո-
րություն ունենք ուղղակի և անմիջական պլանային ներգործությունն
իրականացնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի նկատմամբ,
վորի չնորհիվ ել անուղղակի ներգործության մեթոդներն ուժեղ չա-
փով փոփոխվում են ավելի ու ավելի վերածվելով միասնական ժողո-
վրդատնտեսական պլանին ամբողջավին յենթակա, նրա կենտագործմանն

ոժանդակող, նրա կատարման ու գերակատարմանը խթանող կատեզո-
քիների:

Առբհրդային տնտեսության տեսությունը, վօրպես ոսցիալիզմի
կառուցման աեսություն, պետք ե մատնանշի և հիմնավորի ոսցիալիս-
տական շինարարության կոնկրետ ուղիներն ու ձևերը. նա պետք ե լինի
այն հեղափոխական աեսությունը, վորը պրակտիկներին տալիս ե
«կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վստահություն՝ աշ-
խատանքում, մեր գործի հաղթանակի հավատք» (Ստալին): Այնինչ
Խորհրդային եկոնոմիկայի այսպես կոչված «ռեգուլյատորի» տեսու-
թյան շուրջը կատարված տեսական հետազոտությունների և վեճերի
մեջ մասը մինչեւ այժմ զգալի չափով կրել են սխոլաստիկական բանա-
կությների բնույթը: Խորհրդային եկոնոմիկայի իրական տեսությունը
պետք ե լինեն կոնկրետ, նա պետք ե ուսումնասիրի վոչ թե «ընդհան-
րապես տրանսֆորմացիոն պրոցեսը», այլ ոսցիալիստական վերակա-
ռուցման, ինգուստարացման, կոլեկտիվացման կոնկրետ ուղիները, ինչ-
պես ԽՍՀՄ-ի ներսում տեղի ունեցող գասարդային պայքարի, այն-
պես ել համաշխարհային կապիտալիստական շրջապատի գեմ մզվող
պայքարի հիման վրա:

Խորհրդային եկոնոմիկայի տեսությունը շարժման ընդհանուր
որենքների ուսումնասիրությունը պետք ե հասցնի այն աս-
տիճանի կոնկրետության, վոր համապատասխանի պլանային տնտեսու-
թյան խնդիրներին, հանդիսանա հնդամյա և գլխավոր հեռանկարային
պլանների կառուցման հիմքը: Այս ընդհանուր մեթոդոլոգիական պա-
հանջից բայցում ե պլանավորման կոնկրետացման խնդիրը, վորի մասին
կիսումի այս գլմի յերկրորդ մասում:

Կոնկրետության խնդիրը խորհրդային տնտեսության աեսություն
մեջ հատկապես ընդգծվում է այն դինամիկ բնույթով, մեկ դրսւթյու-
նից մյուսը կատարվող այն արագ փոխանցումներով, վորոնք հատուկ
են մեր տնտեսությանը: Զի կարող լինել եկոնոմիկայի զարգացման
այնպիսի հիմնական որենք, վորն իր կոնկրետ-յուրահատուկ դրսերու-
մը չունենա առանձին եռապներում: Ուստի որենքի զարգացման կռապ-
ների վերլուծությունը հանդիսանում է հենց իրեն՝ որենքի վերլուծու-
թյան պարտադիր պահանջը:

Կոնկրետության պահանջը չի նշանակում տեսական հետազոտու-
թյունն իշեցնել սոսկ յերեսույթների մակերեսութային նկարագրման մա-
կարդակին, վորովհետեւ իրականության կոնկրետ ձևերը լրիվ ու խորա-
պես ճանաչնելու հնարավորություն ե տալիս միայն այն որենքի հայտա-
րերումը, վորն եյական ե յերեսույթների բազմազանության մեջ: Իրեն
թե պատասխաննելով կոնկրետարության այս հիմնական պահանջին, մի քա-
նի տնտեսագետներ պնդում եյին, վոր վողջ անցման շրջանի տնտեսու-

թյան զարգացման վոչ մի ընդհանուր որենք գոյություն չունի, և մոր-
ձում ելին հատուկ որենքներ դուրս բերել մեր տնտեսության յուրաքան-
չուր ետապի համար: Այսպէս, որենակ, վերականգնման շրջանի համար
սահմանվում եր մնկ որենք, վերակառուցման շրջանի համար՝ մի այլ
որենք, և դրանով խոկ չինական պարխաս եր քաշվամ այդ յերկու ժա-
մանակաշրջանների միջև: Այդպիսի սահմանադումը միանգամայն անո-
րինական ե, քանի վոր վերակառուցման շրջանը նախապարասատվիլ ել
և վողչ նախորդ գործացմամբ, և հենց վերականգնման շրջանում տեղի
ելին անհնում առցիալիստական վերակառուցման խորը պրոցեսներ:
իհարեւ, վերականգնման և վերակառուցման շրջանների միջև տարրե-
րություն կա, բայց դա տարրերություն և միենույն վորակի սահման-
ներում, դա՝ միենույն վորակի տարրեր միհակներն են: Այս պատճառով
կարելի իր խոսել լոկ միենույն որենքի՝ յուրաքանչյուր շրջանին հա-
մարաւասիսնող տարրեր ճեկիքի մասին: Վերևում ասածները վերարե-
րում են վոչ միայն վերականգնման շրջանին, այլև ընդգրկում են մեր
զարգացման բոլոր հուսափները:

Մենք արգեն ցուցյ ենք ավել, վոր սոցիալիստական հանրայնեցման
պրոցեսներն իրականացնող պլանը մեր զարդացման որենքն և հանդիսա-
նում այն պատճառապէ, վոր նա արտահայտում և տիրապետող սոցիա-
լիստական արտադրական հարաբերությունը, պայքարում և մերժեկո-
նոմիկայում ևս իր գոյությունը սպահապնող կապիտալիստական տեն-
չենցների զեմ՝ տարրեր ճեկով ու մենդոներով մեր զարդացման տար-
րեր շրջաններում: Պրոլետարական հեղափոխությունը արտադրության
կափառակատական յեղանակը վորապես տիրապետող յեղանակ՝ վերաց-
նում է և սահմանում և աշխատանքը ու արտադրության հիմնական մի-
ջացների տիրապետության նոր յեղանակ, վոր զարգանալով դառնում է
դերակառող: Դրանով խոկ պլանը, վորապես մեր եկոնոմիկայի յերկու-
անդամնություններից մեկի՝ սոցիալիստական տենդենցի արտադրական հարա-
բերության արտահայտություն՝ միաժամանակ շարժման որենք և
զանում Հոկտեմբերյան հեղափոխության մամենտից սկսած:

Հոկտեմբերյան հեղափոխությունը և պրոլետարական դիլիտատու-
րան, վարունք հասարակական-արտադրական նոր սիստեմ սահմանեցին
հանձինս սոցիալիստական հանրայնեցման պրոցեսներն ընդուրելով և ի-
րականացնող պլանի իրեն խորհրդային եկոնոմիկայի շարժման որենքի՝
դործողության սկիզբն են դնում: Սակայն չպիտք և կարծել, վոր դրա-
նով հեղափոխության սկզբնի խոկ կանխորոշվեց այն հարցը, վոր սո-
ցիալիզմի հաղթանակը մեր յերկում ապահոված և (թեև այդ հաղ-
թանակի հարաբերությունը դրված եր Հոկտեմբերյան հեղափոխու-
թյամբ), վոր «ով-ում» հարցն անպայման բոլոր պայմաններում կլուծ-
վի պրոլետարիատի ոգտին, վոր այդ որենքի հիման վրա մենք ավտո-

մատիկ կերպով կներաննք սոցիալիզմի մեջ։ Պլանի, վորագես շարժման որևէ բարձր այդպիսի հասկացողությունն արմատապնակի կիսնաթիւությունը նրա բնույթին։

Յեթե Լենինն ասում եր, վոր մենք ունենք այն ամենն ինչ անհրաժեշտ ու բավական և սոցիալիզմի կառուցման համար, ապա այդ չեր նշանակում կարվել սոցիալիզմի համար մզվող դասակարգային համառ պայքարից։ Ընդհակառակը, միայն Լենինի այդ դրույթն եր, վոր հեռանկարի պարզություն եր տալիս, ծառայում եր իրեն կարեւորագույն պայման մասսաներին մորիլողացիայի յենթարկել պայքարելու կապիտալիզմի դեմ, մանրապահնքային տնտեսության վերակառուցման համար, սոցիալիզմի կառուցման հնարավորությունն իրականարյունի դարձնելու համար։ Լենինը դրան դուզընթաց մասնանշում եր մի այլ հնարավորություն ես, կապիտալիստական զարգացման հնարավորությունը։ Բայց հեղափոխական տեսության խնդիրն այս յերեսու հնարավոր ուղիների սոսկական նկարադրությունը չե։ Նրա խնդիրը կարող ել լինել միայն այն, վոր նա հիմնավորի զարգացման սոցիալիստական ուղու իրավորձման յեղանակները, ձևերը և մեթոդները կապիտալիստական ուղու դեմ մզվող պայքարում։ Սոցիալիստական պլանի պրակտիմի՝ վորպիս շարժման որենքի իրական նշանակությունը նրանումն ե, վոր նա տեսականորեն պետք ե եկմենալորի սոցիալիզմի կառուցման Լենինի մատնանշած հնարավորությունն իրականության դարձնելու կոնկրետ ուղիներն ու ձևերը։

Պլանը չի կարելի պատկերացնել իրեն ինչ-մոր արտաքին ուժ, վոր զարդանում ե ինքն իրեն, մեր մասնակցությունից, մեզ պայքարից գուրա։ Ինչողևս վոր պրոլետարիատի սուբյեկտիսի, կոլեկտիվի կամքը որյեկտիվ անտեսական գործոն և զանում սոցիալինատական շինարարության պրակտիկայի միջոցով, այնուևս ել պրոլետարական գիշտատառայի պլանը, վորսես շարժման որենք, կարող ե իրադրույթին ընկ այդ պրակտիկայի միջոցով, ընկ դասակարգային պայքարի պրոցեսում։ «Պլանը միլիոնավոր մարդկանց կենքանի ու պրակտիկ գործունեցությունն ե» (Ստալին)։ Կապիտալիզմի որոք արքերային որինաշափությունները հակադրվում են արտադրական պրացեսի մասնակիցներն։ Սոցիալիստական պլանավորումն արտահայտում ե նոր սոցիալիստական տիպի որինաշափություններ, վորոնք չեն հակադրվում արտադրույներին՝ իրեն արտադրական պրացեսի անդիտակից մասնակիցների, այլ իրավորձվում են միլիոնավոր աշխատավորների կողմից տարերայնության և կապիտալիստական արտադրական հարաբերությունների մնացորդների դեմ ծավալվող պայքարի և գիտակցական սեղծագործության պրոցեսում։

Պլան և տարերք :—Յերբ մենք ասում ենք, վոր խորհրդային տնտեսությաւնը պլանային տնտեսություն է, ապա այդ չի նշանակում ժխտել տարերային տեսնդենցները մեր զարգացման մեջ։ Քանի վոր, ի տարերումն ավարտված սոցիալիզմի, մեր պլանը զարգանում ե դաստկարգերի և դասակարգային պայքարի գոյության պայմաններում, ուստի նրա խնդիրները կարելի յե իրազործել միմիայն հաղթահարելով այն հակաղրությունները, վոր կան պլանային սկզբունքի և տարերային տեսնդենցների միջև։

Տարերքի բնույթն ու դերը սպառիչ կերպով բացահայտված են Հենինի, Սամալինի աշխատություններում, մեր կուսակցության վորոշումներում։ Տարերքի պատվանդան և հանդիսանում այն հանգամանքը, վոր մեր յերկրում կան, առաջին, բազմամիլիոն բաժան-բաժան, ժանր-ապրանքային գյուղացիական տնտեսություններ, յերկրորդ՝ քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրեր։ Վերջիններիս դերը գդալի չափով ավելի յեր նրանց տեսակարար կշիռից, քանի վոր շարունակ մանր-ապրանքային արտադրությունից տարերայնութեն կատարվում եր կապիտալիզմի աճում։ Մանր-ապրանքային տնտեսությունն իր հիմքում միատիպ և կապիտալիստականի հետ։ Նա չունի որ զարգացման հատուկ ուղի։ Նրա զարգացման տարերային տեսնդենցներն ապրանքային-կապիտալիստական տեսնդենցներ են։ Դրանով իսկ տարերքի բնույթը ևս մեր տնտեսության մեջ կարող ե միայն կապիտայինտական լինել։ Նրա այս կապիտալիստական բնույթը լիակատար ակնհայտությամբ դրսեռքովում ե այնպիսի փաստերում, ինչպես գների շեղումը պլանից, վորի կապակցությամբ ուժեղանում և կուլակային խմբերի կուտակումը նեպի առաջին տարիններում, անասունների տարերային մորթոտումը և ցանքսերի մասնակի կրծատումն առանձին ուղիններում։ Վերջին տարիններս տեղի ունեցած կուլակային հացահատիկային գործադուները, կենտրոնացված մթերումների վիժեցման փաստերը, այս բոլորը ժողովրդատնտեսական պլանի դեմ ուղղված տարերային տեսնդենցների պայքարի դրսեռումներ են։ Տարերքի կապիտալիստական բնույթի ընդունումը վոչ մի դեպքում չպետք ե հանդի այն բանին, վոր տրոցկիստորեն չղանազանվեն տարերքի դրսեռորման տարբեր ձեերը մեր տնտեսության մեջ։ Տարերքի դեմ ուղղված պայքարը չի կարեղ միատարր լինել—այլ բան ե պայքարը կապիտալիստական հատվածի տարերքի դեմ, այլ բան՝ պայքարը մանր-ապրանքային արտադրության տարերքի դեմ, առավել ևս տարերային տեսնդենցների մնացորդների դեմ կոլտնտեսություններում, վերջիններիս զարգացման առաջին աստիճանների վրա։ Բայց միայն մանր-ապրանքային հատվածի վերակառուցումն ու կապիտալիստական սեկտորի վոչնչացումը վերջապես կոլտնտեսական գյուղացու հետագա վերամշակման

աշխատանքները վերջնականապես կվոչնչացնեն տարերքի արտահայտությունները :

Պլանի և տարերքի պայքարը դասակարգերի պայքարի արտահայտություն է : Դասակարգային պայքարի այս մոմենտը չարունակ քողարկվում է աջ ոպորտունիսաների կողմից «պլանի և տարերքի փոխադարձարար իրար մեջ թափանցելու» տեսություններում, տարերքի շյուրահատկության՝ և պլանայնության «յուրահատկության» տեսություններում (Այսինվագու), կամ «հարաբերական անպլանայնության» և «հարաբերական պլանայնության» տեսություններում (Բուխարին)*) : Զի կարելի ասել, թե մեր տնտեսության սոցիալիստական տարերքին յուրահատուկ են տարերային տենդենցներ . նրանց ըստ բնույթի յուրահատուկ են միայն պլանային սոցիալիստական տենդենցները, բայց չնորդիլ այն հանդամանքի, վոր սոցիալիստական հատվածը հումքի և այլ գծերով կազմված է չանրայնեցված հատվածի հետ, նա աղատ չե տարերային տենդենցների ներդրութությունից, վորոնք թափանցում են յերրեմն նույնիսկ հետևողական սոցիալիստական տիպի տնտեսությունների ներառ, փորձում են վիճեցնել պլանների իրազործումը : Վերջիններս աղջում են պլանի կատարման ընթացքի վրա, դժվարացնում են այն. մենք ունենք պլանի «ճեղվածքներ» տարերքի կողմից :

Պլանի և տարերքի այս պայքարում հիմնական հարց ե հանդիսանում այն հարցը, թե կարո՞ղ են արդյոք տարերային տենդենցները փոխել մեր տնտեսության պլանային սոցիալիստական վերակառուցման հիմնական դիմումը—ուղին: Տարերային տենդենցները, նրանց ուժը և տարածված լինելը մեր եկոնոմիկայում տարբեր են տարբեր ետապներում: Սոցիալիստական շինարարության առաջին տարիներում մենք մեր յերկրում ունեինք մանր—գյուղացիական արտադրության դերականություն: «Կապիտալիզմի համար,— ասում եր Լենինը 1920 թ. դեկտեմբերին, — միուսաստանում ավելի ամուր տնտեսական պատվանդան կա, քան կոմունիզմի համար»**): Ժամանակակից ետապում, յերբ դյուղացիական տնտեսությունների 62 %-ը միացած ե կոլտնտեսություններում և մանր—գյուղացիական անհատական տնտեսությունների գերը դյուղատնտեսական արտադրության մեջ դարձել ե յերկրորդական, յերբ սոցիալիզմի հաղթանակի հարցը ԽՍՀՄ-ում լուծված է, փոխվել ե նաև տարերային տենդենցների ուժը մեր եկոնոմիկայում: Նրանց պատվանդանը հիմա արդեն վոչ միայն «ավելի ամուր» չե, այժմ արմատից խարիզմած ե. տարերային տենդենցները կորցրել են հաղթանակի հարաբորությունը պլանի դեմ մզվող պայքարում:

*) Б у х а р и н . З а м е т к и է к о н о м и с т а , с т р . 16.

**) Собр . соч ., т . XXVI, с т р . 46.

Բայց վոչ միայն սոցիալիստական հաջող շինարարության վճռական արդյունքները, այլև անցած տարիներում կատարված զարգացման ամբողջ ընթացքը ցույց էն տալիս, վոր ճիշտ քաղաքականությունն վարելով մենք կարողացել ենք հիմնականում հաջողությամբ հաղթահարել տարերքի ճնշումը պլանի վրա: Սոցիալիստական հասկածի աճումը մեղ մոտ սիստեմատիկ բնույթ ունի. ինչպիսի ուժգնությամբ ել ՆԵՊ-ի առանձին ըրջաններում նրա դեմ կանգնելիս ե յեղել տարերքը, այնուամենայնիվ սոցիալիստական հասկածը յերբեք չի կրամաել իր տեսակարար կը ի բարձրացումը: Այնուհետև, չնայած այն դգալի դերին, վոր ունեք չհամրայնացված հասկածը սպառման առարկաների արտադրման և առևտրի ասպարիզում, բանվոր դասակարգի ունալ աշխատավարձր բարձրանում եր անշեղ ու սիստեմատիկ կերպով: Վերջապես, ինդուստրացման անընդհատ և հաղթական յերթը, ՄՏԿ-ների, խորհանակեսությունների, կոլտնտեսությունների աճումը—այդ ամենը վկայում էն, վոր մենք հաջողությամբ ենք պայքարել տարերային տենդենցիների դեմ և վոչ մի ետապում թույլ չենք տվել, վոր նրանք տիրապետող տենդենց դառնան, որենքի փոխին: Ժողովրդատնտեսական պլանի՝ իրրե շարժման որենքի՝ առկայությունը չշահակում ե, վոր յերկու տենդենցիներից—պլանայինը և տարերային տենդենցիներից—պլանայինը տիրապետող, ուղղություն տվող, «ուսման» սկզբունքով մզգող պայքարում տարերքին յենթակա դարձնող ու հաղթահարող տենդենց և հանդիսանում:

Այս ամենը յերբեք չի նշանակում, վոր այսոր ել մենք կարող ենք ժաղանակ անգամ թուլացնել մեր պայքարը տարերային տենդենցիների դեմ ու կամ թերագնահատել այն վտանգը, վոր իր յետեից կարող ե բերել պլանների կատարումն ինքնահոսին թողելու: Պայքարը պլանների կատարման համար հանդիսանում և պայքար սոցիալիզմի համար՝ կապիտալիզմի դեմ:

Հարցի այս դրվածքը կուլակի, նրա ազենտուրայի գյուղում և քաղաքում մեր պլանների վիճեցման համար մղած կատաղի պայքարի լույսի տակ այսոր ել, չնայած մեր ձեռք բերած հաղթականերին, իմավին պահում ե իր ամբողջ ուժը:

Յեթե տարերային տենդենցները հաղթահարեյին պլանը վճռական բնագավառներում (որինակ՝ յեթե կուլակը հաղթեր հացամթերման գործում, յեթե վիճեցվեր յերկրի ինդուստրացման և գների մեր քաղաքականությունը, խախտվեր դրամական սիստեմը և այլն) և այլուղ տիրապետող դերք գրավեյին, ապա այդ կնշանակեր այն, վոր տարերային տենդենցները զարգացման ընդհանուր որենքի կվերածվեյին, որենք, վոր վերացնում ե պլանը, վերացնում ե վողի տնտեսության սոցիալիստական վերակառուցման հնարավորությունը:

Տարերային տեսնղեցների հաղթանակը նշանակելիս կլիներ արժեքի որենքի հաղթանակ, մի որենք, վորի հիման վրա զարգացումը կարող է ընթանալ միայն կապիտալիստական ուղղությամբ:

Արժեքի որենքը, վորպես որենք, չի դորժում վոչ մեր ամբողջ տնտեսության մեջ, վոչ և նրա առանձին հատվածներում: Արժեքի որենքը կարող է դործել լոկ իրեւ տնտեսական սխուեմի հիմնական որենք, կամ թե իրեւ որենք չգործել ամենեն: Մեր եկոնոմիկայում չկան յերկու կղղիացած ճյուղեր, ուր դործելիս լինեն իրենց հատուկ հիմնական որենքները: Յենթաղընք թե գյուղանատեսությունը զարդարում և արժեքի որենքի հիման վրա: Այդպիսին յենթաղընքիս միանդամայն անբացատրելի կլիներ գյուղանատեսության վողջ սոցիալիստական վերակառուցումը, վոր հաջողությամբ կիրառում ենք մենք, վորովհետեւ արժեքի որենքից ամեննեն չեն բղխում վոչ կոլեկտիվացումն ու կուլակության վերացումը, վոչ ել անդամ սկզբնական կոռուպիրացիայի ստորին ձևերը: Պահնը վիչ միայն սոցիալիստական հատվածի որենքն և, այլև նա մեր ամբողջ տնտեսության զարգացման որենքն և: Կապիտալիստական տարրերի գոյությունը (և վորոչ զարգացումը նախորդ ետապներում) գեռևս չի խոսում այն մասին, վոր արժեքի որենքը գործում և մեր եկոնոմիկայում: Հենց մեր տնտեսության կապիտալիստական համակածի գոյությունն ու ճակատագիրը չեն կարող հասկանալի լինել պլանից գուրս: Անցման շրջանի եկոնոմիկայի ուղայմաններում կապիտալիստական տարրերի գոյության ընդհանուր որենքն այդ տարրերի վոչնչացման որենքն և: Կապիտալիստական տարրերը «չեն ձեւափոխվում ընդհանրապես» և չեն ներաճում սոցիալիզմի մեջ, այլ վոչնչանում են դասակարգային սուր պայքարի պրոցեսում: Պրանումն և զրանորվում պլանի՝ իրեւ սոցիալիզմի կառուցման որենքի՝ ներդործությունը կապիտալիստական տարրերի նկատմամբ: Բայց և մանր-նպարանքային արտադրությունը նույնպես չի ներաճում տոցիալիզմի մեջ տարերայնորեն, պլանի խնդիրն և՝ ակտիվ ներդործություն ունենալ նրա զարգացման վրա, նրան միավորել կոլտնտեսություններում, զեկալիքարել կոլտնտեսությունների հետազա զարգացման պրոցեսը, վորի կենտրոնական խնդիրը ներկա ետապում նրա տնտեսական և կազմակերպչական ամբազնղումն և տիրապետող արտելային ձևի հիման վրա—վորի հաջող լուծումը կանխորոշելու յե նրանց հետազա աճումը՝ նոր զարգացման ավելի բարձր աստիճանի փոխադրությելու՝ հետեւղական սոցիալիստական տիպի ձեռնարկությունների վերածնելու ուղղությամբ:

Վասարաբները խորեղային եկոնոմիկայի զարգացման որենքների մասին — վնասարարանները և ոպորտունիստները քիչ չեն աշխատել խորհրդային եկոնոմիկայի զարգացման որենքները խեղաթյուրելու

վրա : Ինչքան ել արտաքուստ տարբերվելիս լինեն վնասարարների , տրուցկեստների և աջերի տեսությունները , այնուամենայնիվ նրանք բոլորն ել ըստ եյտության յելնում եյին այն բանից , վոր վերջին հաշվով ընդունում եյին արժեքի որենքի գործողությունը ԽՍՀՄ-ի եկոնոմիկայում : Ամենից ալելի հետեղականորեն և համառորեն այդպիսի զիրքավորումները տնտեսագիտության մեջ սողոսկելու վորոճեր եյին անում վնասարարանները : Այժմ «Արդյունաբերական կուսակցության» և «Մենշևիկների Միութենական բյուրոյի» դաստավարությունից հետո , միանդամայն պարզ ե , վոր նրանց բոլոր՝ միանդամայն արտօրական դատողությունների յետեւում թագնված եր միանդամայն վորոշակի դասակարգային նպատակ : Իրեւ հակակշխո խորհրդային եկոնոմիկայի տեսության իրական ինդրի , վորը սոցիալիզմի կառուցման հարավորությունն իրականության դարձնելու ուղիների և ձևերի հիմնավորման մեջ եր կայանում , նրանք ճգնում եյին տեսականորեն ապացուցել կապիտալիստական ռեստորացիայի անխուսափելիությունը և դրանով իդեոլոգիական պատվանդան կառուցել վնասարարների հակառակուսական պրակտիկայի համար :

Իրեւ որինակ վերցնենք՝ վնասարար Յուրովսկու դատողությունները : Նրա կարծիքով խորհրդային եկոնոմիկան առլրանքային-կասլիտայիստական տնտեսության ձևերից մեկն և լոկ , և այդ տնտեսության հիմնական որենքը—արժեքի որենքը—լիակատար ուժ ու անսահմանափակ նշանակություն և պահպանում նաև մեղ մոտ : Թեև պրոլետաֆական պետությունը , ինչպես խոստովանում և Յուրովսկին , հսկայական նշանակություն ունի , վորովհետեւ նա կարող ե ներդործել տընտեսական կյանքի ընթացքի վրա մի ամբողջ շարք միջոցառումների ոգնությամբ , բայց «միայն մեկ բան նա չի կարող , այն ե՝ դուրս դաշտքեքի որենքի գործողության վոլորտից» : Յուրովսկու կարծիքով՝ անցման ըրջանի եկոնոմիկայի ողլանավորման հիշտ հասկացված խնդիրներն ամենեին ապրանքային հարաբերությունների վերացման մեջ չեն կայանում , այլ միմիայն՝ ապրանքաշահանագույնության կարգավորման մեջ : Կապիտալիզմի իդեոլոգների համար գժվար և ուղղակի դեմ դուրս դալ ողլանին (այդ մեր յերկրում հաջողություն չեր ունենա) , —նրանք խոսում են ողլանի դերի «չափազանցման» (այսինքն՝ իրականում ամբացման) վնասակարության մասին և դուրս են դալիս պաշտպանելու շուկայի , գների , դրամա-վարկային հարաբերությունների և այլ «նորմալ» որենքները : Իսկ դների , դրամական-ապրանքային ըրջանառության ամեն մի ողլանավորումը , ողլանի ամեն մի միջամտությունը տնտեսական դարպացման մեջ , նրանց կարծիքով , տանում և դեպի ՆԵՊ-ի վերացումը , դեպի վերջինիս մեթոդների փոխարինումը ուղղմական կոմունիզմի մեթոդներով : Քանի վոր մեր տնտեսության դար-

զացումն արժեքի որենքի հիման վրա գնում և կապիտալիզմի ուղղությամբ, բայց խեղաթյուրվում և պրոլետարական սկսության միջամտության հետեանքով, ապա ինդիբը, Յուրովսկու և մյուս վնասաբարների կարծիքով, նրանումն եւ, վոր վերացվի այդ «անումալիան» և սուկզվին ռառողջ, նորմալ պայմաններ կապիտալիզմի զարգացման համար մեր յիրկում Արեմուտքի յերկրների նմանությամբ:

Յուրովսկու այս գատողություններում տեսական ձևով ընդհանրացված են կուլտակային-կապիտալիստական տարրերի ակնկալությանները: Այդտեղ մցված է ինդուստրացման, կոլեկտիվացման, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ և կապիտալիստական կարգերի վերականգնման համար մղելիք պայքարի ծրագիրը: Սակայն չափավորված վնասաբարական կազմակերպություններին, մերկացնելով վնասաբարական տեսությունները, մենք չափոք և պայքարը նրանց դեմ վերջացած համարենք: «Վնասաբարները կան և կլինեն, քանի գեռմեղ ժողովակարգերը, քանի զեռ կա կապիտալիստական շրջապատճեաւը» (Ալավին): Հետեւարաք, այս կամ այն ձևով զեռես տեղ կունենան նաև վնասաբարական տեսությունները խորհրդացին եկոնոմիկայի հարցերի շուրջը, վորոնց դեմ կարելի յե պայքար մղել միմիայն մարդունինյան մեթոդովիայի սպասարդինությամբ:

Տրոցկիզմը խորհրդացին եկոնոմիկայի զարգացման որենքների մասին:— Այս բուրժուական քահանությունների՝ վտանգավորությունը նրանումն է, վոր նրանցավ վարակվում են նաև մեր կուսակցության շարքերում յեղած անկայուն տարրերը: Այսպես, ընկ. Սմիլգան և ուրիշները նույնպես արժեքի որենքը հիմնական եյին համարում մեր անտեսության համար: Սմիլգան, որինակ, հայտարարում եր, վոր մեր ձևունարկություններում կիրառվող անտառաշվարկի սկզբունքը տեսական եկոնոմիկայի լեզվով նշանակում է «վերականգնել արժեքի որենքի զործողությունը, մի շարք սահմանափակումներով», վորոնք բղիում ևն թորհրդացին Միության առանձնահատուկ բնույթից»:

Դուրս ե զալիս միանդամայն ըստ Յուրովսկու:— Ե՛ արժեքի որենքն ե զեկավարում մեր անտեսությունը, ե՛ «դոյություն ունեն մի շարք սահմանափակումներ»: Սմիլգան կոպիտ կերպով խեղաթյուրում ե անտառաշվարկի բնույթը մեր անտեսության մեջ: Տնտհաշվարկը չի կարելի վերցնել պլանի հետ ունեցած կազից դուրս կամ հակագրել պլանին: անտառաշվարկն, ընդհակառակը, պլանային զեկավարության կարենրազույն լծակն ե հանդիսանում մեղ մոտ: Տնտհաշվարկի առկայությունը համարելով իրեւ նշան այն բանի, վոր արժեքի որենքն ե

*) С м а г а . Восстановительный период, стр. XV—XVI.

սիրապետում մեր եկոնոմիկայում, Սմիլգան դրանով իսկ ցույց և տալիս, վոր չի հասկանում վոչ պլանը և վոչ ել տնտհաշվարկը:

Ընկ. Սմիլգան, տրոցկիստական ուղղողիցիայի նախկին լիբերներից մեկը, իր տեսական արտահայտությունների մեջ գետես վերականգնման և վերակառւուցման շրջանների սահմանում կանխաղեց ժամանակակից աջ ուղրուունիստական դիրքավորումները տնտհաշվարկի պլան-տիրայում, վորոնց համաձայն՝ տնտհաշվարկի ուժեղացումը ներկա ետապում դիտվում և իրեւ վերագրած գետի «ազատ» ազրանքային-չուկայական հարաբերությունները: Բայտ Սմիլգայի տեսության դուրս ե գալիս, վոր ներկա ետապում ևս, ինչքանով վոր կատնահաշվարկը, ասդա գործում և արժեքի որենքը: Հակառակ արժեքը որենքի՝ իրեւ անխուսափելիորեն դեպի զարգացման կավիտավիստական ուղին առաջնորդող որենքի՝ մարդու-լենինյան հասկացողության, Սմիլգան գտնում է, վոր մենք կարող ենք սոցիալիստական շինարարությունը կատարել նաև արժեքի որենքի տիրապետության պայմաններում: Նրա կարծիքով մենք պետք ե ողտագործենք այդ որենքը մեր նպատակների համար, վորը միանդամայն հնարավոր ե, վորովհետեւ արժեքի որենքը նման և «գնդացիրի», վորը «ծառայում և նրան, ուժեղողմբ զարձված և նրա լցամասը»:

Խորհրդային եկոնոմիկայի որենքների տրոցկիստական տեսությունն ամենից ավելի լիակատար արտահայտություն և ստացել ընկերության մոտ: Նրա տեսական հետազոտության հիմքում դրված և վոչ թե դիալեկտիկական, այլ մեխանիստական մեթոդով գիտան, անցման շրջանի եկոնոմիկայի բնույթի, նրա զարգացման ուղիների և ձեւերի վոչ թե լենինյան, այլ տրոցկիստական ըմբռնումը:

Ընկ. Պրեորրաժենսկին չի ընտունում խորհրդային եկոնոմիկայի՝ իրեւ հակագրությունների միասնության՝ դիալեկտիկական բովանդակությունը, նրա մեջ տեսնում և միայն հակագրությունները և մոռանում և միասնության մասին*): Նա խորհրդային եկոնոմիկան մեխանիստորեն բաժանում յերկու մասի և անհրաժեշտ և համարում հետա-

*) ՄԱՆՈՒԹ. ԽՄԲ. Ընկ. Պրեորրաժենսկին և տրոցկիստները վոչ միայն «մոռանում» երինչ խորհրդական միասնությունը և ընդունում հակագրությունները, այլև խորհրդային եկոնոմիկայի հակասությունները դիտակցաբար կապված են բարեպահությունը ելին, յենելով մի յերկորմ սոցիալիզմ կառուցելու հնարքավորության բուրժուուական բացաման ընդհանուր գրույթից: Հարցը նրանումն ե, վոր հականեղակիութեան մրոցկիզմը միստերով սոցիալիստական սեկտորի տառջատար և դեկավար դերը, այսինքն բացամելով խորհրդային եկոնոմիկայի դիալեկտական միասնությունը, միաժամանակ խեղաթյուրուում իր իրտեանությունը, դիտելով մեր եկանողական սոցիալիստական ձեռնարկությունները իրեւ պետկապիտապատճեական ձեռնարկությունը, միտելով աշխատավոր գյուղացու յերկյակ բնույթը, համարելով ամբողջ պացիություններ բանվոր դասակարգի ու զյուղացիության հիմնական մասսայի—միջակ պյուղա-

յուսել և դուրս բերել զարգացման որևնքները նրանցից յուրաքանչյուրի Համար առանձին : «Մեր խորհրդային տնտեսությունը ,—ասում ե ընկ . Դրսբաժնին քաժամում և պետական տնտեսության և մաս- նավար տնտեսության : Պետական տնտեսությանը յուրահատուկ էն զարգացման իր որինաչափությունները , մասնավոր տնտեսությա- նը՝ իրենը ... Տեսական վերլուծության համար մեթոդով կապեա տնհարժեշտ և առանձին-առանձին քննել թե՛ մեկ և թե՛ մյուս որինա- չափությունները , իսկ հետո բացատրել , թե ինչպես և ստացվում ունել կապահպարժ » :

Դրեսբաժնամայն ակնհայտ ե , քանի վոր նա տնտեսական զարգացումը պատում և իրեւ արդյունք յերկու ուժերի գործողության , վորոնք մե- խանեկայի որենքներով կազմում են ինչ վոր համազոր :

Իր վերլուծության մեջ Պրեոբրաժենսկին հարկավոր չի համարում մեր եկոնոմիկայում մանր-ապրանքային տնտեսությունը տարբերել կապիտալիստականից : Նա մանր-ապրանքային տնտեսությունը . կա- պիտայինտականի հետ միասին զնում և միմնույն փակադնի մեջ՝ մաս- նավոր տնտեսություն ընդհանուր անվան տակ : Մանր ապրանքաար- տագրոսի բնույթի այդպիսի ըմբռնման մեջ դրված և պրոլետարիատի և դյուգացիության հիմնական մասաների զորդման արոցկիստական՝ իր եյությամբ հակառակության բացասամը , կոլեկտիվացման և մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հարավորության բուրժուա- կան բացասամը :

Անցման շրջանի եկոնոմիկայի բնույթի կոպիտ խեղաթյուրումը կայանում և այն բանում , վոր Պրեոբրաժենսկին պնդում և տեսական վերլուծությամբ պրոլետարական պետության տնտեսական քաղաքա- կանությանից կարգիլու անհրաժեշտության մասին , տնտեսական ո- րմնքներն ինչպես Պրեոբրաժենսկին և արտահայտվում , իրենց «մաքուր» տևոքով քննելու անհրաժեշտության մասին : Դրանով Պրեոբրաժենսկին լոկ ամելի ցայտուն յերեան հանեց իր դիրքի մեխանիստական լինելը , կապիտալիզմի եկոնոմիկայի նկատմամբ խորհրդային եկոնոմիկայի ու- նեցած վողջ վորակական տարբերությունը չհասկանալը : Այն ամենից

ցիության զաների մասնակի ներհակությունները (քների քաղաքականությունն և այլն) , չեր տեսնում նըանց զաների ընդհանրությունը վոր գոյությունն ունի բանվոր գոտա- կարգի և միջակ ոյուղացիության միջև հեղտփոխության հիմնական հարցերում , վորը ովհանում նախադրյաներից մեկն և հանդիսանում այն պատմական ջջադարձի , վորի հատեմբորդի և ոյուղացիական ըոլոր ազիատավորական տնտեսությունների 620/0-ը զանում և այսոր կումանակություններում : Այս պայմաններում հեղինակների մեջ- ըերած ձեռներպումն այն մասին , վոր արոցկիստները միայն «մոռանում ելին» խոր- ճորգային եկոնոմիկայի միասնությունը բնական ե , վոր ճիշտ համարվել չի կարող

*) Проеображенский . Новая экономика , стр . 250.

Հետո, ինչ մենք ասացինք վերեռում ողանի և տնտեսական քաղաքական շության դերի մասին մեր տնտեսության մեջ՝ Պրեորբաժնուկու ադրույթի արատավորությունն ակնհայտ է—Պրեորբաժնուկին կամ նում և խորհրդային եկոնոմիկայի շարժման որենքն ուսումնասիրեկտրվելով... այդ որենքում յեղած ամենահիմնականից :

Յերկու սեկտորներին համապատասխան, Պրեորբաժնուկին մը եկոնոմիկայում առաջանում է յերկու որենքի գործողություն—մանավոր սեկտորում գործում և արժեքի որենքը, պետական սեկտորում «Նախնական սոցիալիստական կուտակման որենքը»։ Անցման ըրջան եկոնոմիկայի ամբողջ բովանդակությունը, ըստ Պրեորբաժնուկու կայսում և այն պայքարում, վոր մզում են այս յերկու որենքների բրենց գործողության վոլորան ընդլայնելու համար։ «Նախնական սոցիալիստական կուտակման» Պրեորբաժնուկու «Հայտնարկած առենք համաձայն խորհրդային եկոնոմիկայում հիմնականում պետք է զարգանան այն պրօցեսները, վորոնք տեղի յեն ունեցել կապիտալի սկզբնական կուտակման ժամանակ։ Կուտակման որենքների վողջ տարրերությունը մեկ և մյուս տեղում կայանում է, ըստ Պրեորբաժնուկու, լրաբժման ձեփ, ուղղության մեջ։ այնուղ այս որենքը տանում և գեներալիզմի դարձացումն ու ամրացումը, այսուհետեւ սոցիալիզմագրացումն ու ամրացումը։ Ինչպես հայտնի յեւ, կապիտալիզմի նախնական կուտակման Մարքսի սոհմանած որենքը կապիտալիստաներ կողմից միլիոնավոր մանր ապրանքաարտադրողների անինա շահագործման և քայլքայման, գողություների բացահայտ կողովումն սորկացման որենքն է։ Նախնական սոցիալիստական կուտակման Պրեորբաժնուկու որենքը նույնպես ողահանջում է, վոր պետական սցեալիստական համաձայն շահանձը շահաղործի, «լլանի» մասնավոր համաձին, վերջնիս դարձնի մի դաղութ, վորից պետք է վերցնել այն ամեննին ինչ «տեխնիկատես հասանելի յեւ»։ «Նախնական սոցիալիստական կուտակման» այս որենքը, ինչպես անդում և Պրեորբաժնուկին, առանձիւ ուժով գործում է մեր յերկրում, ուր մինչեւ վոչ շատ ժամանակ տառագերակշռում եր մանր-ապրանքային սեկտորը։ Այս որենքի ամենից ավելի ընդհանուր ձեւակերպումն ասում է, վոր ինչքան ավելի հետամնաց և յերկիրը, այնքան ավելի մեծ չափով սոցիալիստական կուտակմը պետք է ընթանա զյուղից միջոցներ քամելու, դյուզացիության շահագործելու ուղիով։

Պրեորբաժնուկու այս «որենքում» անհետացել է պրոլետարիատ դիկտուրայի կարևորագույն ողակը—պրոլետարիատի և գյուղացիության հիմնական մասսաների ամուր դաշնքի անհրաժեշտությունը «Նախնական սոցիալիստական կուտակման որենքը» հանդիսանում է ընդհակառակը, մի փորձ՝ տեսականորեն հիմնավորելու գյուղացիության

Այս հետ կապերը խղելու անխուսափելիությունը, մեր յերկրում սուցիալիզմի հաղթանակի անկարելիությունը։ Պրեոքրաժենսկու տեսությունը մանր-բուրժուական ավանդության համար անդունվեր և նրանով զեկավարվելինք սոցիալիստական շինարարության պրոցեսում—մենք վոչ միայն չեյինք համեմություն և առաջարկու հասարակության գործությունները, չեյինք թեակոմի սոցիալիզմի շրջանը, այլև անխուսափելիորեն կարելի է կապերը գյուղացիության հետ, կհանդելինք սոցիալիստական շինարարության վիճեցման և հրապիտակիզմի սեստավրացիային։

Առուհրդային եկոնոմմիկայի որենքների արոցկում ակտուալ բնույթը չի սպառվում լոկ մերժացնելով այն ամենն, ինչ զբել են իր ժամանակին Պրեոքրաժենսկին, մյմիլդան և մյուսները։ Ներկա ետապում ևս առետրի, դրամի, վարկի և արցերում ամեն տեսակ «ձախ» խոտորումների, նրանց ամենափոքր շափով անդամ թերազնահատելու, տնտհաշվարկը պլանին հակադրելու և այլ փորձերի զեմ պայքարը կարող է հաջող լինել միայն այն պայմանով, յեթե մերկացվեն նրանց տեսական հիմունքները և դրանով իսկ մերկացվի նրանց որյեկտիվ դասակարգային բովանդակությունը։ Վորովհետեւ բոլոր այս «ձախ» տեսությունների մեջ նոր ետապում, նոր ձեերով հրապարակ է գալիս տրոցկիզմի նույն հին բուրժուական տեսությունը, փորի հիմնավորումը փորձում եր տալ Պրեոքրաժենսկին պեսեմ մերականոնման շրջանում։

Հավասարակշռության տեսությունը և «աշխատանքային ծախութեամբի որենքը»—Բուրժուական տեսությունների ազդեցությունը մեր կուսակցության առանձին ողակների վրա իր սևնեցած ավելի լիակատար արտացոլումն՝ ունեցավ հավասարակշռության մեխանիստական տեսության մեջ, որը խորհրդական և ուղղառուն է խստական տեսությունների մեթոդոլոգիական հիմքն և հանդիսանում։ Հավասարակշռության տեսությունը խորհրդային եկոնոմմիկայի նկատմամբ լայնորեն կիրառում է ընկերությարինը։ Իրեն հակակշիռ Մարքսի ուսմունքի, վորի համար հետազոտության վերընական նպատակը «հանդիսանում և ժամանակակից հասարակության շարժման անտեսական որենքի հայտնաբերում» (Մարքս), Բուրժարինը գտնում է, վոր անտեսական տեսության խընդիրը հանդիսանում և հավասարակշռության որենքի սահմանումը։ «Այս հավասարակշռության որենքը գտնելը տեսական եկոնոմմիկայի հիմական պրոբլեմն է»^{*)}։

^{*)} Бу харин-Экономика переходного периода, стр. 128.

Համաձայն այս տեսական դիրքավորման, Բուխարինն անհրաժեշտ է համարում առաջին հերթին հարաբերականություն սահմանել մեր ժողովրդական տնտեսության տարրերի նկատմամբ։ Այդ անհրաժեշտ հարաբերականության ամեն մի խախտումը, Բուխարինի հայտարարությամբ, հակասում և հավասարակշռության սկզբունքին և հղի յի տընտեսական ու քաղաքական դժվարություններով։

Մարքս-լինինյան տեսությունը հավասարակշռությունը չի դիտում իբրև շարժումից կտրված մի բան, այլ հայտարակչությունը վերցնում է իբրև շարժման յենթակա մի մոմենտ։ Հարաբերականությանը ընույթն արտադրության միջոցների և աշխատանքի բաշխման մեջ շարունակ վորոշվում է տնտեսության յուրաքանչյուր պատմական սիստեմի զարգացման ուղղությամբ և առանձնահատկություններով։ Միանգամայն ակներեւ և, վոր այս հարաբերականությունը և նրա բոլշանուշակությունը այլ կլինեն, յեթե յերկիրը գնում է սոցիալիստական ինդուստրացման ուղիղով, դյուզատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կազիտալիստական շրջապատի հանդեպ ունեցած տնտեսական անկախության ամրացման ուղիղով, և բոլորովին այլ կլինեն այս հարաբերականությունն ու նրա բովանդակությունը, յեթե յերկիրը զարդարում է վորպես կիսազարութային ազգարային կցորդ, համաշխարհային կապիտալիզմի լծի օտակ։ Արդյունաբերության և դյուզատնտեսության հարաբերության առանձին առանձին ճյուղերի առանձին առանձին առանձին ճյուղերի համար առանձման պատմականորեն վորոշված որենքներով, դասակարգերի հարաբերությամբ և պայքարով։

Այդ առանձնապես վերաբերում է խորհրդային եկոնոմիկային, կառուցվող սոցիալիզմի եկոնոմիկային։ Առանց հին պրոպրցիաների արժատական փոփոխման անհնարին և հաջողությամբ հաղթահարել տընտեսական դժվարություններն ու դիմուպուրցիաները, անհնարին և հաղթական սոցիալիստական շինարարությունը։ Հին պրոպրցիաները կառուցվող սոցիալիզմի եկոնոմիկայի համար դիմուպուրցիաներ են և նրանց խախտելու վախճ աջ ոպորտունիստական վախ և՝ դասակարդերի հարաբերության հեղափոխական փոփոխումից, մի փոփոխում, վորի հիման վրա միայն հնարավոր և այդ դասակարդերի վոչնչացումը։ Ինգուստրացման և կոլեկտիվացման արագ տեմպերը հենց հին պրոպրցիաների խախտման կոնկրետ արտահայտությունն են։ «Հավասարակշռության» դրաշի ներքո դեմ դուրս գալով այդպիսի խախտման, աշերև բացասում եյին անցման շրջանի եկոնոմիկայի հիմնական հատկությունը—նրա դինամիկ լինելը, վերակառուցման պրոցեսի հեղափոխակա-

նուրյաներ, հանդիս ելիք գալիս իբրև կապիտալիստական տարրերի ուղղակալներ :

